

891.99

17-71

7

ԱՆ ԹԱՏՐԵՐԳԱԿԱՆ

16

Հ Ե Լ Է Ն Է

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ Ի ՀԻՆԳ ՀԱՆԴԷՍՍ

Գ Ր Ե Յ

ՍԵՊՏԻՔ ՄԻՆԱՍԵԱՆ



ՎԵՆԵՏԻԿ — ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐ

1920

ԳՐԱԴԱՐԱՆ

ԹԱՏՐԵՐԳԱԿԱՆ

16

ԳՐԱԴԱՐԱՆ ԹԱՏՐԵՐԳԱԿԱՆ

891.99
Մ-71

16

Հ Ե Լ Է Ն Է

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ Ի ՀԻՆԳ ՀԱՆԴԷՍՍ

ԳՐԵՑ

ՍԵՊՈՒՀ ՄԻՆԱՍԵԱՆ

1001
2654



ար
ընտ
անս

ՎԵՆԵՏԻԿ — ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐ

1920

01.07.2013

43928

19 NOV 2011

Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Ահաւասիկ ողբերգութիւն մ'ալ, զոր ի լոյս կ'ընծայեմ ազգիս, հանդերձ իշր ամեն րեւոյն րեւակրէ։ Ասոր նիւրն բոլորովին երեւակայութեան ծնունդ է. միայն Նեոպոլիտեոսի և Արդաշար- դայ անուարն պատմութիւնէ փոխ ասնուած են։ Թերևս անպատշաճ և յանդգնութիւն երեւայ ու մանց, պատմութեան մէջ ամենեւին տեղի չ'ու նեցած դեպք մը նիւր ընտրելու ողբերգութեանս։

Սակայն յիշելով այն իրաւունքը՝ զոր ողբեր- գուն ունի ոչգած ին պես փոփոխութիւններ ընե- լու պատմութեան մէջ, իրեն պետք չ'եղածը լեւ և պետք եղածն ընդունել իշր երգին մէջ, որուն առաջին և ետեան նպատակն՝ գործը օգտակար, նեոսարքարական և վերջապէս հան- դիսականքը չ'ընձանձորացընելն է. այլ և զայս ալ կ'ընեն որ, րէ՛ մեր և րէ՛ ուրիշ ազգաց մէջ այրպիսի օրինակներ շատ տեսնուած են։ Ոչստի դարձեալ կը կրկնեմ, ինչպէս ուրիշ անգամ ալ ըսած եմ, ողբերգուէն պետք չ'է որ ընթերցողն կամ շտղն պատմութեան ձշոյնքիւն և հաւա- տարմութիւն պահանջէ։ Ողբերգուն իշր ըա- նաստեղծի ազատութեանըն, իշր շէնքը կազ- մելու համար ոչգած տեղը, պատշաճ դատած նիւրերը և իրեն յարմար գործաւորները կրնայ ընտրել. կը ըսէ որ գործն տաղակարի և ան- ձանի չ'ըլլայ։

Ի վերայ այս ամենայնի այս ալ ստոյք է որ Հայք, մեծին Մղերսանդրի մեռնելէն վերջը, Մակեդոնացոց լռծըր քորափելոշ կը մտածեին և այս իրեկց խորհրդեան մեծ աւիր և միանգամայն խրախոյս կոշ տային, Մակեդոնացոց շայնածաւալ կայսերոշքեան մէջ յաջորդութեանց պատճառաւ տիրած տեսակ տեսակ երկպառակոշքիւք և արիւնամեղ պատերազմներն, որոնց պատճառաւ Հայաստանի վրայ խստիշ չ'եին կրնար հսկել Մակեդոնացիք: Այս ողբերգութեանն և իւր շատունց ի վեր մտքիս մէջ կ'որորեի, այնպէս որ ըոյր երգիս շեկքը կազմելն և ի գիր առնուչն՝ գրեթէ տասնընիկ օր տեկց: Յառաջ քան հրատարակելոշ՝ ես ալ համոզուած, եւ որ այդպիսի տաղ միջոցի մէջ ոչ թէ երեկի, այլ բաւական չափաւոր գործ մ'ալ գրեթէ անհնար է մեզի պէս տկար և անփորձ տաղանդաց. ըսած իս ստոյգ ըլլալն ընթերցողը կամ շտոյք պիտի դատեն: Ի վերայ այս ամենայնի ջանացեր եւ որ ըստ կարի պարզ, ընտան և ևնչազ տաղտուշ ըլլայ գործն. իսկ երէ յաչողած եւ կամ ոչ, գոյս դարձեալ ներողամիտ դատաւորացս ընկերեան կը յանձնեմ:

Կ'ըսեն որ մայր մը իւր ցաւօք ծնած որդոշն վրայ աւելի սեր և գոշ կ'ոռնենայ, և այս ընդհանրապէս ճշմարիտ է: Մակայն չ'եւ գիտեր ինչո՞շ ընդհակառակն ի ըոյս ընծայած այս ևնր գործոշս համար ընտան համակրոշքիւն մը կը զգան, որն որ ամենեւին աշխատութիւն մը տոշած չ'է ինձ. իւր անդրանիկներն աւելի շատ ձիզն և ժամանակ ինձե՛կ յափշտա-

կած են: Բայց այս ալ կը պատահի որ, մայր մը իւր բազմաթիւ գաւախաց մէջ, առանց մեկն ալ մասնաւորապէս ստեղծ, բացառութեամբ մեկուն վրայ աւելի սեր կ'զգայ. քերես այս ողբերգութեան ալ սոյն սկզբամը է որ ինձ՝ քան իւր երիցագոյնը աւելի սիրելի եղած է:

ՍԵՊՏԻՄԵՐ ԲԵՆԵՄԵՆ

ՄԱՆՕԹՈՒԹԻՒՆ ՀՐԱՏԱՐԱԿՉԻՆ

Յամեն 1904 հրատարակած մեր գրքոյկին մէջ, — որ կը կրէ. «Սեպտեմբ. Մենասեան տաղանդաւոր պուշտն և իր գրական երկասիրութիւնները», տիտղոսը, — մենք արդէն տուած ենք համատո՞ւ՝ բայց հարկաւոր տեղեկութիւնները, ինչպէս այս՝ նաև միւս ինքնագիր և թարգմանածոյ ողբերգութեանց մասին:

Այն ժամանակի քաղաքական, ևն, պարագաները չէին թոյլտարեր մեզ հրատարակել զանոնք. բայց այժմ որովհետև մեր բզբկտուած ազգին համաշունչ մտութեան պէտքը մէկ կողմէն, միւս կողմէն ալ Հայրենեաց անկախութիւնը մտեցած է. ուստի կը փորձուինք առաջիկայ ողբերգութիւնս, — որ ոչ միայն հեղինակէս գործերէն ընտրելագոյնն է, այլ և յիշեալ կէտերուն համար յոյժ նպատակայարմար կը թուի մեզ, — ի ըոյս ընծայել նախ «Բագմալէպ» ին մէջ՝ իրրե փորձ, և ապա առանձինն. Եթէ հաճելի ըլլայ այն ընթերցասիրաց, այնուհետև միւսներն ևս պիտի շարունակուին տպագրել՝ նոյն կերպով:

Վաթսունական թուականին և արևմտահայոց յատուկ աշխարհաբար լեզուն և ուղղագրութիւնը նոյն պահեցինք, ի բաց առեալ ինչ ինչ կէտաղբութիւններ, գորոնք մենք անկցուցինք՝ ընթերցողներուն դիւրըմբոնելի ընելու նպատակաւ: Կան դարձեալ վրէժինդրական ինչ ինչ բացատրութիւններ ևս, որ ըստ իս ներքել չեն. բայց որովհետև խօսող անձինքն Վրիստոսէ երկուք ու կէս զար առաջ ապրող ու գործող հեթանոսներն, հետևաբար ուրեշ կերպ չէր կրնար արտայայտուել հեղինակն:

Հ. Բ. Վ. ՍԱՐԳԻՍԵԱՆ

ԱՆՁԻՆՔ

ԱՐԴՈՒԱՐԴ, նախարար հայկազն, էջիանազեա Հայոց-
ԱՐՏԱՒԱԶԳ, որդի նորա.

ՆԵՌՊՏՂՈՄԷՈՍ, կուսակալ Մակեդոնացի.

ՀԵԼԷՆԷ, գուտար նորա.

ՀՐԱՆՏ, զօրավար Հայոց.

ԱՐԻԱԹԷՍ, որդի արքային կապադովկացւոց, ապըս-
տամբ և փախստական ի Հայս.

ԱՄԻՆԹԷՍ, զօրավար Մակեդոնացի.

ԼԻԻՍԱՆԳՐ, պաշտօնակալ ոմն Մակեդոնացի.

Հայ զօրականք.

Զինուոր ոմն Մակեդոնացի.

Տեսարանն է յԱրմաւիր, կուսակալական
պալատին մէջ.

ՀԱՆԴԷՍ ԱՌԱԶԻՆ

Կրօնակարսիսն պարտիկ մէջ Արդուարդայ
պարսանքը.

ՏԵՍԻԼ Ա.

ԱՐԴՈՒԱՐԴ, ԱՐԻԱԹԷՍ

ԱՐԻԱԹԷՍ

Ե՛կ ընդ իս, տէր իշխան. հոս ոչ որ ունիմք ուն-
կընդիր. սա ամայի սրահիս մէջ կրնամ առանձին
հաղորդել քեզ ծերակուտին գաղտնի խորհուրդը
և վճիռը:

ԱՐԴՈՒԱՐԴ

Զիս կը սոսկացընես, Արիաթէս, այդ անսովոր
զգուշութեամբդ. ինչ, հոս նոր իրք պատահեցան.
պարզէ՛ վարանքս. բոլորովին անտեղեակ եմ ես
զանցից աշխարհիս, զի հազիւ թէ վրաստանէն
կը դառնամ, ուր ծերակոյտն խրկած էր զիս, որ-
պէս զի զինակցութեան դաշինք մը կնքեմ վրաց
իշխանին հետ: Միթէ նո՛ր ինչ վտանգ կ'սպառ-
նայ Հայաստանի, կամ միթէ կը դրժէ՞ Նէսպտոր-
մէնս իւր երդմանց:

ԱՐԻԱԹԷՍ

Դո՛ւ ալ գիտես թէ ծերակոյտն Ալէքսանդրի
մեանելէն ետև, տեսնելով Մակեդոնացւոց տկա-

րութիւնը, արդէն ազատութեան փորձ մ'ըրաւ. առաջին փորձոյն թէպէտեւ նկուն, այլ բնաւ չը վհատելով, այսօր կ'որոշէ մէկէն խորտակելու անոնց լուծը: Զի որչափ ալ Պերթիկէս թեթեւ և քաղցր ուզենայ զայն Հայոց ցուցընել, Հայաստան իւր առաջին անկախ ազատութիւնը կը խնդրէ և զայն ձեռք բերելու որոշած է այս անգամ:

ԱՐԴՈՒԱՐԻ

Ուրախարար աւետիտ մ'ինձ կու տաս, Արիաթէս, զի և իմ սիրտս կը ճմլի՜ Հայաստանի փառաւոր յիշատակօք լի աւերակաց վրայ աչքս ձգելով. այո՛, և ես ազատ կը փափաքիմ տեսնել զՀայաստան իմ սիրելի հայրենիքս, սակայն ըսէ՛ ինչ միջոցաւ, ինչ եղանակաւ կը յուսայ ի գլուխ հանելու չ'ըսեմ անհնարին, այլ այդ դժուար գործը:

ԱՐԻԱԹԵՍ

Կը յիշե՞ս, Արդուարդ իշխան, տասը տարի առաջ այն ահաւոր գիշերն:

ԱՐԴՈՒԱՐԻ

Այո՛. ապա ուրեմն...

ԱՐԻԱԹԵՍ

Սա օրուանս վերջը նայնպիտի գիշեր մը պիտի ծնանի:

ԱՐԴՈՒԱՐԻ

Ո՛վ դէք, մագերս գլխոյս վրայ կը դիգուին... Ինչ կ'ըսես... դարձե՛ալ ուրեմն ընդհանուր կոտորած մը...

ԱՐԻԱԹԵՍ

Այս առաւօտ ձերակոյտն, իւր գաղտնի նիստին մէջ, վերջնական որոշումը տալով, բացարձակապէս և առանց բացառութեան վճռեց Մակեդոնացոց սատակումը:

ԱՐԴՈՒԱՐԻ

Ո՛հ, ինչ սոսկալի և անգութ վճիռ. կը հաւանիմ և ես պատերազմի դաշտին վրայ անխնայ ստատակել հայրենեացս թշնամիքը. սակայն այդպէս գաղտագողի գիշեր ատեն դաւաճանել, երբ իրենց մէջ այնչափ անմեղք անկասկած անուշ քնոյ մէջ կը հանգչին... Դ՛հ այդ անհանդուրժելի է, Արիաթէս... միթէ հարկ է որ միշտ վազը ըլլանք...

ԱՐԻԱԹԵՍ

Բարե՞... այլ միթէ մոռցար թէ տասը տարի առաջ...

ԱՐԴՈՒԱՐԻ

Ահ, լուէ՛ ինձ այն աղէտալի դէպքը. մոռցար կ'ըսես... այլ միթէ մարթ իցէ ինձ զայն չըլիշել... այո՛, ես յայնժամ այն կոտորածին առաջնորդեցի... սակայն չ'էի կարծեր թէ այնուհետեւ գորհանապազ դժնդակ խայթ մը պիտի ունենայի խղճիս մէջ: Զի այն օրէն ի վեր արիւնաշաղախ ստուերք Մակեդոնացոց գիշեր ցորեկ զիս կը հալածեն... Դ՛հ, դու չ'ես գիտեր իմ գաղտնի տանջանքս:

ԱՐԻԱԹԵՍ

Տէր իշխան, ի բաց թող այդ տարածամ և հայրենեացդ վնասակար տկարութիւնը: Միթէ

կը ճմլի՞ սիրտդ, քաջդ Արդուարդ, Հայաստանի թշնամեաց-պատահելու արդարացի աղիտից վրայ. սա թշնամեացդ՝ որ հարցդ գերպատանը աւել-րակօք լեցուցին. սա թշնամեացդ՝ որոնց դէմ քաջն Վահէ պատերազմելով կեանքը կորոյս. սա թշնամեացդ՝ որ ձեր ազատութիւնը բառնալով, ծանր շղթայից մէջ գծեց հեծել կու տան: Բայց միթէ ինձ անկ իցէ յեշել քեզ քու պարտքդ, տէր իշխան. միթէ դու նոյն Արդուարդը չ'ես և այժմ: Դու որպէս զի Վահէին հետ Հայաստանի իրաւունքը և անկախութիւնը պաշտպանես, հա-մարձակեցար ելանել պատերազմաւ Աղեքսանդրի դէմ, երբ շատերն վատաբար կը նուաճէին իւր բռան տակ: Այո՞, քաղցր է ինձ կրկնել ձեր հոյա-կապ արշաւանքը. դու միայն Վահէին հետ յան-դուզն բռնակալին յարձակմանց դէմ թումբ կանգնեցար և ի վիրաւոր անկանել Հայ դիւցազ-նոյն, որ քու հօգոյս ձեռքդ կ'աւանդէր Հայաս-տանի բազում, դու իսկ երդուընցար անոր գլխոյն վրայ իւր վրէժը հանելու, և բնաւ չըվհատելով առաջ մղեցիր պատերազմը և արիւնյաներկ սուրդ փայլակնացայտ՝ մինչև նոյն ինքն Աղեքսանդրի աչքին ցուցցուցիր: Բայց այսչափս կրնար դիւ-ցազն մը՝ տիեզերախումբ բանակի մը դէմ. ապա եռանդդ չափաւորելով և յարմարագոյն ժամա-նակի մը թողլով յաղթանակելու յոյսդ, բռնա-դատեցար նուաճել և զՆեպոլտոմէոս, զգոթնեան և զհայարտն Նեպոլտոմէոս, Դրբև կուտակալ Մա-կեդոնացի ընդունել յԱրմաւիր: Սակայն երբ Աղեքսանդրի մահուան համբաւն հնչեց տիեզերաց վրայ, դու առաջին՝ Հայ քաջաց մէջ, փութացար թօթափելու իւր լուծը և Հայոց սահմաններէն հա-լածեցիր զՄակեդոնացիս և գնոյն ինքն զՆեպոլտո-մէոս: Եւմէնէս, Լիւսանդր, մինչև Պէրթիկէս անգամ զարհուրեցան քու բազկէդ և զիջան դաշնակցութիւն մը կնքելու: Դու ալ խոհեմու-թիւն բանեցընելով, իբրև ճարտար զօրապետ և

ուշիմ հայրենասէր, ընդունեցար խաղաղութիւնը և յաճն առիւր որ առ ժամանակ մի Նեպոլտոմ-էոս միւսանգամ նստէր յԱրմաւիր, բայց իբրև պարզ հարկահան մը, առանց Հայաստանի ներ-քին կառավարչութեան խառնուելու: Իսկ արդ Հայաստան այսօր բաւական զօրաւոր է և կրնայ Մակեդոնացուց լուծը բոլորովին խորտակել. նա զի երբ այն հսկայ կայսերութիւնն յայլ և այլ մասունս բաժանեալ, տեսակ տեսակ պառակա-մունք իւր մէջը կը տիրեն, երբ բռնաւորին տե-ղակալքն իրարու ձեռքէն գահին բեկորքը յափըշ-տակել կը ջանան, դիւրին լիցի քեզ զՀայաստան, և ինձ զԿապադովկիայ մեր հարցն ժառանգու-թիւնը ձեռք բերել վերստին... այլ դու կը վա-րանիս... միթէ անտեղի խիղճ մը պիտի արգիլէ՞ զԱրդուարդը բնաջինջ չըստատակելու զՄակեդոնա-ցիս: Չիք հոս դաւաճանութիւն, օրինաւոր է վրէժն ինչ կերպիւ որ ի գործ դրուի, երբ հայրենեաց ազատութիւնն է նպատակը:

ԱՐԴՈՒԱՐԴ

Բարեկամ, թո՛յլ տայ ապա ձերակոյտն ինձ օրինաւորապէս պատերազմ հրատարակելու Մա-կեդոնացուց. ընդ այս և ես կը ցանկամ. ես ալ կը տեսնեմ թէ յարմարատեանն է վատարանջութեան. ես ալ կը տեսնեմ թէ ինչպէս ամէն հայ սիրտք ազատութեան համար կը բաբախեն: Սակայն այդպիսի ահաւոր դաւ մը կրկնել, երբ խաղա-ղութեան ուխտը պահելու իրարու երգմամբ խոտացանք: Նոյն երգմանց վրայ հաւտալով, Նեպոլտոմէոս իւր ընտանեաց հետ մնաց յԱրմա-ւիր, և հոս սա պալատիս մէջ միատեղ կը բնա-կիւմք: Մեր առաջին դաւաճանութիւնն թերևս արդարացի երևար, վասն զի յայնժամ Մակե-դոնացուց իշխանութիւնն իբրև երկաթէ լուծ մը մեր պարանոցը կը պնդէր. բայց այժմ ինչ

փոփոխութիւն : Այսօր ալ գերի չ'են Հայք-
Նէոպոլիտէոս ալ իւր առաջին դժնեայ և սէգ
բարքը թողում, իբրև եղբայր հետս կը վարուի.
Իմ Արտաւազգոս իրեն որդի կը կոչէ, ես ալ իւր հրեշ-
տականման դուտորը՝ զՀելէնէ՝ իբրև իմ դուտորս,
իբրև իմ Արտաւազգոս կը սիրեմ. Հելէնէ և Արտա-
ւազգ ալ իրարու հետ եղբայրական սիրոյ զօգիւ
կապուած են. այնպէս որ մեր երկու ընտանիքն մի
և նոյն ընտանիք կը ձևացընեն : Արդէն Հելէնէի
մօրն անհանգիստ ստուերն՝ անընդհատ զիս զիշեր
ցորեկ կը տագնապէ. իւր արեան բիծերն ձեռացս
վրայ քանդակուած են. ի գո՛ր կը ջանամ տասը
տարիէ ի վեր անհետ առնելու այն ահաբեկ
նշանները. սակայն անջնջելի եղանակաւ հոն
դրոշմած են . իսկ կմախքն՝ զիշերները ան-
կողնոյս սնարքը նստած՝ վրէժխնդիր աչօք զիս
կը դիտէ, ու կարծես թէ ականջիս մէջ միշտ կը
հնչէ անտուն մը՝ որ սոսկմամբ անկողնէս զիս վեր
կը նետէ... այ՛ո, մարդասպան և դահիճ զիս կը
կոչէ... աւելցո՛ւր ասոնց վրայ ալ անողորմելի
խիղճ մը... Ո՛հ, խիստ թշուառ եմ, բարեկամ, հա-
զիւ թէ որդւոյս սէրն երբեմն, խղճիւ բեռնաւո-
րած, ճակատիս վրայ խնդութեան արև մը կը
ծագէ : Իսկ արդ կը պահանջէ ծերակոյտն որ
արհաւրացս վրայ նոր արհաւիճք աւելցընեմ...
Ես ձեռօքս զիրենք ի գերեզման իջեցընեմ... ո՛հ
ինչ եղեոն... : Նա զի մեծ և հօր արգելք այդ-
պիսի փոքր և վատ միջոցներու ձեռք չ'են գար-
ներ. իսկ ինչ անտուն այնուհետև տիեզերաց առջև
պիտի ստանանք, և ո՛վ այսուհետև մեր երդմանց
պիտի հաւտայ. ինչ յիշատակ ալ յետագայ դա-
րուց պիտի թողունք :

ԱՐԻԱԹԵՍ

Ինձ չըպատշաճիր քննադատել ձեր ծերակու-
տին վճիռը. իւր բարձր հրամանն է, առանց

Հայ արեան կաթիլ մը թափելու, այս անգամ
ի զլուխ հանել ազատութեան խնդիրն. իսկ
Հայաստանի և Վահէի վրէժխնդիր սուրն իւր
բաղդին հետ քու ձեռքդ կը յանձնէ :

ԱՐԻՈՒԱՐԻ

Ա՛հ, ինչ պաշտօն :

ԱՐԻԱԹԵՍ

Ուրեմն կը մերժե՛ս :

ԱՐԻՈՒԱՐԻ

Մերժե՛լ... այլ միթէ կընա՛մ...

ԱՐԻԱԹԵՍ

Քու հայրենասիրութիւնդ և քաջութիւնդ փոր-
ձուած են, տէ՛ր իշխան. սպա թէ և այդ պաշ-
տօնն խիղճդ ալ խայթէ, հայրենեացդ սիրոյն և
օգտին համար պարտական ես ամէն բան զոհել,
մինչև խիղճդ ալ լուցընել : Զի՛նչ քաղցրագոյն
քան զկեանս, սակայն ստոյգ գիտեմ թէ հայ-
րենեացդ ազատութեանը համար զայն պիտի նուի-
րես :

ԱՐԻՈՒԱՐԻ

Ո՛հ, կեանքս շատոնց ի վեր իրեն նուիրած եմ :

ԱՐԻԱԹԵՍ

Օ՛ն, ի բանց թող սա անպատեհ գթութիւնը,
որուն արժանի ալ չեն թշնամիքդ. տո՛ւր հա-
ճութիւնդ որ տանիմ անհամբեր ծերակուտին,
որն որ անձկանօք պատասխանիդ կ'սպասէ :

ԱՐԴՈՒԱՐԴ (մեկուշի)

Ո՛վ երկինք... բայց պէտք է հնազանդել աւանց երկմտելու: (Ֆարձր) Այ՛ն, Արիաթէս, ծերակուտին վճիռը քննադատեն ինձ չըվերաբերիր, երբ հայրենիք կը հրամայեն, հնազանտին իմ առաջին պարտքս է: Ուրեմն այս գիշեր...

ԱՐԻԱԹԷՍ

Այ՛ն, այս գիշեր, երբ հաւն առաջին անգամ երգելուն, Անահտայ տաճարին նուիրական պըղինձն կէս գիշերը պիտի հնչէ, Հայք կուսակալական պալատին վրայ պիտի յարձակին: Գո՛ւ ամէն էլ և մուտքը գիտես, ուստի հոն դուռը բանալով՝ Արտաւազը որդւոյդ հետ իրենց պիտի առաջնորդես նախ յապարանս Նէոպոլիտէոսի:

ԱՐԴՈՒԱՐԴ

Որդի՛ս ալ... (մեկուշի) խեղճ Արտաւազը:

ԱՐԻԱԹԷՍ

Այ՛ն, Արտաւազը ալ հետդ: Նախ և առաջ Նէոպոլիտէոսի ընտանիքն պիտի սատակուին և ո՛չ ոք պիտի ապրի. իսկ ի նոյն ժամուն Արմաւիրի և բոլոր Հայաստանի մէջ բնակող Մակեդոնացիք ի թրէ պիտի անցնին: Դարձեալ՝ եթէ մէկն, ո՛վ որ ալ ըլլայ, ինայելով Մակեդոնացի մը ազատէ և կամ որոշեալ ժամէն առաջ գաղտնիքը դուրս հանէ, այնպիսին իբրև հայրենեաց մատնիչ և դաւաճան, ի մահ պիտի դատապարտուի ծերակուտէն. փառքն հայրենասիրին, իսկ գլխատման բեմն դաւաճանին վարձքն պիտի ըլլան:

ԱՐԴՈՒԱՐԴ

Բաւական է. գնա՛ ըսէ ծերակուտին, թէ վասն ազատութեան հայրենեաց Արդուարդ կը հնազանդի իւր բարձրագոյն հրամանաց:

ԱՐԻԱԹԷՍ

Գո՛ւ ալ գիտես թէ այդպիսի գործոց մէջ հաւատարմութեան երդում մ'ալ ծերակոյտն կը պահանջէ:

ԱՐԴՈՒԱՐԴ (ձեռքը երկնցընելով)

Կ'երդնում, որովհետև իւր կամքն է. այ՛ն, եթէ մէկն գաղտնեացս դրժէ կամ եթէ Մակեդոնացի մը ազատէ, մահու մեղցի այնպիսին, թէև անքիս պէս սիրած որդիս Արտաւազըն ըլլայ դաւաճան, թէև ես ալ:

3
1001
955

ԱՐԻԱԹԷՍ

Մակեդոնացւոց բնաջինջ սատակման հետեւալ օրը, հայրս Արիարաթ, որ հայրենիքէն հալածական վտարանդի հոս հոն կը թափաւի, իւր կապաղովկիացի խմբովն Հայոց սահմաններուն պիտի մտնեայ. դո՛ւ ալ Հայ բանակաւդ իւր հետ միանալով նախ Եւմէնէս կապաղովկիոյ Մակեդոնացի կուսակալին վրայ պիտի դիմենք: Ահա՛ վտարանջութեան յատակագիծն... Բայց Արտաւազը դէպ ի հոս կը մտնեայ, զքեզ իւր հետ կը թողում... ուրեմն, կէս գիշերուն...

ԱՐԴՈՒԱՐԴ

Կէս գիշերուն. ծերակոյտն վստահ ըլլայ իմ և որդւոյս հաւատարմութեան վրայ: (Արիարաթ կ'ելլայ):

Գրորն. Թատր. 16



Տ Ե Ս Ի Լ Բ .

ԱՐԳՈՒԱՐԳ, ԱՐՏԱԻԱԶԴ

ԱՐԳՈՒԱՐԳ (մեկուսի)

Ո՛վ դիք, ի՜նչ հարուած որդւոյս կը պատրաստեմ:

ԱՐՏԱԻԱԶԴ (վազելով հօրը ձեռքը կը համբուրէ)

Օրհնեալ լիցին երկինք, հայր իմ, որովհետև զքեզ ողջ և առողջ միւսանգամ հայրենեացդ և իմ գիրկս կը դարձընեն:

ԱՐԳՈՒԱՐԳ

Արտաւազդ, զքեզ ժամ մ'առաջ տեսնելու փափաքս և պէտք հայրենեացս զիս հոս հասնելու փութացուցին: Իսկ դ՛ու ալ ճիշդ ատենին կու գաս, զի ես ալ զքեզ կը խնդրէի, որպէս զի այսօր ամենահարկաւոր և ծանր նիւթոյ մը վրայ հետդ խօսիմ. միով բանիւ հայրենասիրութիւնդ և որդիական հնազանդութիւնդ այսօր պիտի փորձեմ:

ԱՐՏԱԻԱԶԴ

Այդ խօսքդ զիս իրաւամբ կը զարմացնեն, հայր. զի դու քաջ ևս զիս կը ճանչնաս. հազիւ թէ յարբունս հասեալ, զիս երիտասարդական խօլ զբօսանքէն զրկելով, հայրենեացս համար կեանքս նուիրեցի. իւր վտանգն մոռցնել տուաւ ինձ մասնաւոր հոգերս և քու քովդ, ա-

չացդ առջև, Հայաստանի թշնամեաց դէմ պատերազմիլ և յողթիլ սովորեցայ: Հոս միտքս՝ իմ ներբողս հիւսել չ'է, հայր, սակայն սա վէրքս բաւական կը յայտնէ հայրենակցացս իմ անցուցած վարքս: Իսկ եթէ դարձեալ հարկն պահանջէ, պատրաստ եմ նոյնպիսի փառաւոր զարդերով մարմինս պճնել. ուստի հնազանդութեանս նկատմամբ երբէք մի՛ տարակուսիր. հրամայէ՛, իսկոյն սիրտս և բազուկս պատրաստ են հնազանդելու քեզ:

ԱՐԳՈՒԱՐԳ

Ես ալ գիտեմ թէ ինչպիսի որդւոյ մը հայրն եմ, սակայն...

ԱՐՏԱԻԱԶԴ

Սակայն...

ԱՐԳՈՒԱՐԳ

Կ'ըսէի՛ր ուրեմն թէ սիրտդ ալ իմ հրամանացս պիտի հպատակի:

ԱՐՏԱԻԱԶԴ

Այո՛, միթէ կը տարակուսի՞ս հայր. տարակոյսն միայն ինձ անհնարին նախատինք է... բայց խոռովեալ զքեզ կը տեսնեմ. աչք քո աչեւ ըստ խոյս կու տան. հազիւ թէ խօսք մը սկսած, զայն իսկոյն կ'ընդմիջես. ուստի այդ տագնապն. հ'նչ նոր դէպք հոս կը պատահին... Ինչպէս մեկնեմ այդ լուսթիւնդ, հայր իմ. որ չար և յաշողկոտ լեզու զիս առջևդ արատելով, վտանգու թիւնդ ինձմէ կը բանայ... Ինչ ունիս:

ԱՐԳՈՒԱՐԳ

Ո՛չ ինչ Արտաւագդ. սակայն կը տեսնեմ որ
ատենէ մը ի վեր մտերմութիւնդ և բարեկամու-
թիւնդ կրկնապատիկ կ'աւելնայ Նէոպտղոմէոսի
և Հելէնէի հետ:

ԱՐՏԱՒԱԶԳ

Այո՛ հայր, զայս չ'եմ ժխտեր:

ԱՐԳՈՒԱՐԳ

Պէտք է որ այդ մտերմութիւնդ չափ մ'ունեն-
նայ... մանաւանդ թէ հարկ է որ բոլորովին
դադրի:

ԱՐՏԱՒԱԶԳ

Ի՞նչ կ'ըսես հայր...

ԱՐԳՈՒԱՐԳ

Ձը մոռնալու ենք, թէ անոնք Մակեդոնացի
անիծեալ ցեղէն են, ուստի և են բնականապէս
մեր հայրենեաց թշնամի և մեր գերութեան
չլթայից հեղինակներն:

ԱՐՏԱՒԱԶԳ (մեկուշի)

Ի՞նչ կը լսեմ, ո՞վ երկինք (շարճր): Այլ երբեմն
դու իսկ հայր, դու ինձ կը յորդորէիր՝ ևս
առաւել պնդելու բնարեկամութեան զօգը. զՆէո-
պտղոմէոս եղբայրդ կը կոչէիր, չքնազգեղն և
առաքինին Հելէնէ՛ դստեր զգուանքն և անունը
քենէ կ'ընդունէր: Ուստի՞ ապա այդ անակնկալ
և յանկարծական փոփոխութիւնն հայր. միթէ
կը պահանջե՞ս որ մէկէն այդպէս իրենց թշնամի
ձեանամ, և իրենց զգուող ձեռաց մէջ յանկարծ

ապերախտ իժ մը դառնալով զիրենք խայթեմ
յանզգաստից:

ԱՐԳՈՒԱՐԳ

Այո՛... զի հարկ է:

ԱՐՏԱՒԱԶԳ

Այո՞... ինչ մահագուշակ բառ... ո՞վ թշուառ
Հելէնէ:

ԱՐԳՈՒԱՐԳ

Քաւական հեծեց Հայաստան օտարի լուծին տակ...
Աղբքսանդր ալ չէք ի միջի... իւր վատ տեղակալքն
բռնաբար կը տիրեն իւր հսկայ ժառանգութեան
վրայ, և առնին կոխներով զիրար կը սատակեն:
Բնաւ չը՛վկայեր քու սիրտդ ալ, թէ Հայք ուրիշ
ճակատագրի, ուրիշ բաղդի համար ծնած են.
դու ազատ ծնար որդեակ իմ, իսկ այսօր լուծ
մը պարանոցդ կը ճնշէ, անարդար շլթայք քու
և հօրդ ձեռքը կը պնդեն: Ուստի ժամ է օգուտ
քաղել Մակեդոնացւոց երկպառակութենէն, և երբ
ուրիշ ազգեր իրենց բռնաւորքը կը հալածեն՝
որպէս զի ազատութեան դրօշակը բարձրացնեն,
պէտք է՛ որ Հայք ամէն բանի մէջ առաջինք՝
երկրորդ մնան այդ մասին մէջ: Մեր ազատու-
թեան օրն հասած է և այն վաղուան օրն է:

ԱՐՏԱՒԱԶԳ (խնդուքեալից)

Մեր ազատութեան օ՞րն... ո՞ն ինչ աւետիս:

ԱՐԳՈՒԱՐԳ

Այո՛, այս գիշեր Հայաստանի ամէն կողմը և
Արմաւիրի մէջ Մակեդոնացւոց գերեզմանքն կը
փորուին:

ԱՐՏԱՒԱԶԴ

Մակեդոնացւոց գերեզմանքն... սակայն Նէոս պտղոմէոս... Հելէնէ...

ԱՐԳՈՒԱՐԳ

Ամէնուն ալ վերջին օրն հասած է:

ԱՐՏԱՒԱԶԴ (մեկուշի)

Արդարադատ դէք, ոյժ տուէք ինձ (յարձր). իսկ դո՛ւ հայր, դո՛ւ այդ անգութ և անիրաւ հրամանը կու տաս:

ԱՐԳՈՒԱՐԳ

Ես կուրօրէն կը հնազանդիմ Ծերակուտին՝ բարձրագոյն հրամանացն: Իսկ այդ միջոցն ի գործ դնելու համար զիս և զքեզ ընտրած է. ծերակոյտն մեր երկուքին քաջութեան և հայրենասիրութեան կը յանձնէ Հայաստանի ազատութեան բաղդը:

ԱՐՏԱՒԱԶԴ

Զքե՞զ և զԲՍ... իսկ դու ընդունեցամք այդ պաշտօնը:

ԱՐԳՈՒԱՐԳ

Մերժելն անհնարին էր. իսկ որպէս զի հայրենատեաց և վատ չ'երևամ, յանձն առի և երդուրնցայ:

ԱՐՏԱՒԱԶԴ

Երդուրնցամք...

ԱՐԳՈՒԱՐԳ

Այո՛, երդուրնցայ՝ լիովին կատարելու պարտքս և պաշտօնս. երդուրնցայ նաև քու հնազանդութեանդ և հաւատարմութեանդ նկատմամբ:

ԱՐՏԱՒԱԶԴ

Ի՞մ հնազանդութեանս...

ԱՐԳՈՒԱՐԳ

Միթէ կրնայի՞ տարակուսիլ... զի և՛ հակաակաղղին և՛ Մակեդոնացւոց ձեռնտուն՝ դաւաճան և մատնիչ պիտի սեպուի հայրենեաց:

ԱՐՏԱՒԱԶԴ

Դաւաճան և մատնի՞չ...

ԱՐԳՈՒԱՐԳ

Այո՛, դաւաճան և մատնիչ հայրենեաց. իսկ այնպիսին ի մահ պիտի դատապարտուի: Բայց դո՛ւ փոխանակ վշտանալու՝ ուրախացի՛ր մահուանդ հետս, Արտաւազդ. զի սրչափ տարիներէ ի վեր Հայաստան անձկալից այդպիսի օրունան մը կ'սպասէր. ուստի անոնք այս գիշեր խաւարամած գերեզմանի մէջ պիտի մտնան, իսկ մենք վաղիւն ազատութեան տօնը պիտի կատարենք: Այլ ի՞նչ գործ Հրանտ իշխանը դէպի հոս կ'ուղղէ:

ՏԵՍԻԼ Գ.

ԱՐԴՈՒԱՐԴ, ԱՐՏԱՒԱԶԴ, ՀՐԱՆՏ

ԱՐԴՈՒԱՐԴ

Հրանտ ինչ լուր:

ՀՐԱՆՏ

Տէ՛ր իշխան, ծերակոյտն գրեզ իւր քովը կը հրաւիրէ, որպէս զի հայրենեաց վրէժխնդիր սուրբ հանդիսաւորապէս քու ձեռքդ յանձնէ. դարձեալ ահաւոր գործոյն սկիզբն տալէն առաջ, կը խնդրէ հեռդ խորհրդակցիլ, որպէս զի ճշտութիւնն պահուի:

ԱՐԴՈՒԱՐԴ

Լաւ. ահաւաստիկ կը փութամ: (Արտաշազդիկն որ մտատանջ կեցած է) Արտաւազդ, լաւ ըմբռնէ՛ ըսածս. երբ արեւն հորիզոնին վրայ խոնարհելով ստուերն երկրիս վրայ տարածի, իսկոյն հոս գտնուելու ես, որպէս զի հրամանս ընդունիս: Երթանք Հրանտ: (կ'ելլան)

ՏԵՍԻԼ Գ.

ԱՐՏԱՒԱԶԴ (առանձին)

Ինչ լտեցի թշուառականս, և հօրս բերնէն... Ինչպէս երկինք չըկործանեցան վրաս... սակայն կարծեցի որ երկիրս կը սարսէր ոտիցս տակ...

ճհ, իցէ՛ թէ բացուելով զիս կուլ տար... Ինչ հրաշէկ փքին յանկարծ սրտիս մէջ վարսեցաւ: Ինչ լտեցի, Նէոպաղոմէոս և Հելէնէ պիտի մեռնին... սորա նախ զո՞հ պիտի ըլլան Հայաստանի ազատութեան... կարծեմ որ սա պատերն ալ դեռ ահանջիս մէջ կ'որոտան այդ բարբարոս հրամանը՝ թէ «պիտի մեռնին»: Նէոպաղոմէոս յանցաւոր իցէ թերևս իւր կասկածելի քաղաքավարութեամբն, սակայն դո՞ւստրն, սակայն անմեղն Հելէնէ... միթէ յանցապարտ իցէ այն անմեղ և զեղեցիկ հրեշտակն: Թող հեղեղաբար վազէ Մակեդոնացոց արիւնն, եթէ սովաւ աւազին և աւերակաց մէջէն դէպ ի վեր պիտի կանգնի ազատութեան դրօշակն Հայոց. այլ միթէ գետնաքար պիտի մնայ, եթէ Հելէնէի քանի մը կաթիլ արեան խնայուի: Ո՞հ, անգութ հայր. սակայն ծերակոյտն ևս անագորոյն. միթէ ապառաժք զձեզ երկնեցին, միթէ և դուք հայր չէ՞ք զաւակաց. ինչպէս այդպիսի դժնդակ խորհուրդ մը կրցաք յղանալու և զայն ի գործ դնելն որոշեցիք: Ա՛հ, անգութ վագրեր. միթէ չգտնուեցաւ ձեր մէջ մէկն՝ որ գթութեան բառ մը հնչէր... Իսկ իբր թէ այդ բաւական չ'ըլլար, հայրս և զիս ալ դահիճ կը կարգէք ձեր դաւաճան վճռոյն: Միթէ ձեռք իմ այն ազնիւ կենաց թելը պիտի կտրեն... ա՛հ... բայց ինչո՞ւ անմեղի մը արիւնը թափելու համար իմ ձեռքս զինել կը խնդրէք. ինձ էր ապա իմ յանցանքս որ այդ պաշտօնը ինձ կը յանձնէք... Ո՞ սիրեցեալդ իմ Հելէնէ, երբ անկասկած և ժպիտ ի դէմս քո ի գիրկս իմ պիտի վազես. սա գազաններն կը խնդրեն որ հոն սուր մը գտնաս, որուն վրայ սիրտդ ի մահ բեռնի. կը պահանջեն որ սիրականիդ ձեռքէն մեռնիս, որպէս զի հայրենասէր ըլլալս ցուցնեմ: Եթէ զքեզ սպաննեմ, միթէ կ'ապրիմ ես այնուհետև. իսկ եթէ քեզ խնայեմ, իբրև մատնիչ և դաւաճան հայրենեաց՝ զլիստման բեռն

ինձ կ'սպասէ: Երկինք, ինչ խաւար յանկարծ աչերս և հոգիս միանգամայն կը պաշարէ... սա կայն եթէ մահն աննահանջելի է, ինչո՞ւ դահձին տապարը պիտի ընտրեմ... կը նախադասեմ մեռնիլ իմ ձեռքէս: (Պաշտ կը քաշէ որպէս զի զիկերն գարնէ, Հիդէն ներս վագերով բագուշկը կը բռնէ):

ՏԵՍԻԼ Ե.

ԱՐՏԱՒԱԶԳԻ, ՀԵԼԷՆԵ

ՀԵԼԷՆԵ

Ո՛վ դէք... Արտաւազդ, ինչ կ'ընես (տաշտը ձեռքէն յափշտակելով գետիկ կը նկատ)

ԱՐՏԱՒԱԶԳԻ

Ո՛վ ես դու, որ զիս ի գերեզման իջնալէն արգելել կը խնդրես:

ՀԵԼԷՆԵ

Ա՛հ... միթէ չ'ե՞ս ճանչնար քու Հելէնէդ:

ԱՐՏԱՒԱԶԳԻ

Հելէնէ՛... (մեկոշտի) ո՛վ երկինք:

ՀԵԼԷՆԵ

Բայց որպէս զի սիրտս հանդարտի, ըսէ շուտ, ինչ կ'ընէիր հոս առանձին:

ԱՐՏԱՒԱԶԳԻ

Ի՞նչ կ'ընէի... ոչինչ սիրեցեալդ իմ Հելէնէ:

ՀԵԼԷՆԵ

Ոչինչ... միթէ չըտեսո՞յ որ սիրտդ ծակել կը խնդրէիր. ինչ գործ ունէր ձեռքիդ մէջ սա մահագոյժ երկաթն:

ԱՐՏԱՒԱԶԳԻ

Սիրեցեալդ իմ Հելէնէ՛... հաւտա՛ ինձ...

ՀԵԼԷՆԵ

Երկինք, ինչպէս այլայլած ես և տժգոյն, ցուրտ քրտինք ճակատդ կ'ողողեն, մազերդ գլխոյդ վրայ բարդ ի բարդ... ա՛հ, ինչ դաժան նայուածք սա երկաթին վրայ կը ձգես... խոցեմլ իցես արդէն, սիրելիդ իմ Արտաւազդ... չ'ե՞ս պատասխաներ... այդ լուռիւնդ... բայց խօսէ՛... իւրաքանչիւր վայրկեան մահ կու տայ հոգւոյս. խօսէ՛, ինչ վիշտ անակնկալ այդպէս ձեռքդ անձինդ դէմ զինած էր:

ԱՐՏԱՒԱԶԳԻ

Հանդարտէ՛ սիրտդ, սիրեցեալդ իմ Հելէնէ. միթէ հնա՞ր իցէ ինձ զրկել զիս քու աչացդ լուսէն... դու իմ կեանքս ես... սակայն փորձել ուզեցի ձեռքս... եթէ լիցի ինձ կորուսանել զքեզ... եթէ անակնկալ դէպք, զոր անհնար է մահկանացուաց գուշակել... խորտակէ զմեզ իրա՞րու միացընող սիրոյ հանգոյցը, յայնժամ յուսահատութեանս մէջ... բայց ապահով եղիր:

ՀԵԼԷՆԵ

Ո՛հ, ինչ դժնդակ և աղէտալի խորհուրդք. զիս ապահովցընել ջանալդ՝ ևս առաւել զիս կը տագնապէ: Ինչո՞ւ զիս պիտի կորսնցընես. ինչ անակնկալ դէպք զքեզ այդ յուսահատութեան կէտը

պիտի տանին... արէտ մը կը գուշակեմ հոս...
անշուշտ կասկած մ'ունիտ... Բայց խօսէ'... ան
յայտնէ' ինձ վիշտդ Արտաւազը:

ԱՐՏԱՒԱԶԻ (մեկուշի)

Ո՛վ դէք, ի՞նչ պիտի ըսեմ:

ՀԵԼԷՆԵ

Կը հառաչե՛ս... ո՛հ, մօրդ հոգւոյն, իւր սուրբ
յիշատակին համար խօսէ', ըսէ' ինձ յուսահա-
տութեանդ պատճառը. միթէ կը հրաժարիս զիս
ալ մասնակից ընելու վշտացդ... ահաւաստիկ իմ
սիրտս ալ սրտիդ տալու հարուածովդ՝ արդէն
կիտով շափ խոցեալ է:

ԱՐՏԱՒԱԶԻ

Մի՛ խոռվիր, սիրեցեալդ իմ Հելենէ, փարատե-
կասկածդ... ո՛հ, կը տեսնեմ որ արդէն աչքդ
արտտունքով կը լենան... Բայց ենթադրութիւն
մ'էր երկիւղս... հանդարտէ'... կարևոր գործ
մը զիս այժմ հօրս քովը կը կանչէ. թո՛յլ տուր
սիրեցեալդ իմ Հելենէ, որ առ այժմ մեկնիմ աս-
տի: (Սուրբ գետնեկ տանելով շտապաւ դուրս
կ'երայ)

ՏԵՍԻԼ Զ.

ՀԵԼԷՆԵ (առանձին)

Ի՞նչ հրաժեշտ, միթէ խոյս չը՞տար ինձմէ Ար-
տաւազը. ի՞նչ դէպք այդպէս տաղտուկ կ'ընեն
իրեն իմ հոս ներկայութիւնս: Ա՛յլ ի՞նչ պաղ
երակներու մէջ թողուց մեկնելուն... Ի՞նչ ցըր-
տութիւն. հազութի ինձ աչք մը ձգեց և զայն
մէկէն երկաթին վրայ կ'ողղէր... Ի՞նչ խոռն և

շփոթ պատասխան, որ փոխանակ զիս հանդար-
տեցնելու՝ ևս առաւել վրդովեց... միթէ չըտե-
սայ որ երկաթը ի սիրտն վարսելու կը փութար...
Թէ որ վայրկեան մ'ալ ուշ հասնէի իւր դիակը
պիտի գտնայի... Իսկ ի՞նչ վիշտ՝ ինձ անձանթթ՝
իրեն տաղտկալի կը ցուցընէ կեանքը: Մինչև
հիմայ վիշտ չէի ճանչնար... ո՛հ, ահագին ճիւղ
որ երկթէ մագիլներով սիրտս կը քերէ... ահա՛
առաջին անգամն է որ հետս անկեղծ չ'է Արտա-
ւազը... ինչ դաժան գաղտնիք լեզուն կղպած է
այդպէս... խոռված էր, ևս ալ խոռված էի.
Երէկ զիշեր անուրջիս մէջ չ'եմ գիտեր ի՞նչ ա-
հաւոր և դաժանատեսիլ ճիւղք երևակայու-
թեանս մէջ կը պարէին. մինչև ցլոյս արիւն
տեսայ, արեան լճի մը մէջ ևս ալ հօրս հետ կը
լողայի... երբ արթնցայ, համատարած լու-
թեան մէջ լսեցի, որ զիշերահաւն մեր տանեաց
վրայ դարած տխուր կը ճուար... կը վազեմ
հոս, որպէս զի սիրելոյս ծոցին մէջ զիշերուան
զարհուրանքս մոռնամ... ի՞նչ տեսայ... Փոռձ
տեղ չըղեգերիմ հոս, վազեմ իւր ետևէն, չ'ըլ-
լայ թէ կրկնէ անձնասպանութեան փորձը, և ջա-
նամ իւր բերնէն խլելու զինքն յուսահատող
գաղտնիքը: (Մեղաւ վրայ իյնալով). Մեծ դէք,
խլեցէ՛ք իւր սիրտէն վիշտը, ձեռքէն մահացու
երկաթը, և մի՛ ընկղմէք զուարթ օրերս յաւիտե-
նական սգոյ մէջ: (Կ'երայ)

Հ Ա Ն Դ Է Ս Ե Ր Կ Ր Ո Ր Դ

Կոչուակարական պարտին մէջ Նեոպոյոմեուսի
ապարանքը.

ՏԵՍԻԼ Ա.

ՆԷՈՊՏՂՈՄԷՈՍ, ՀԵԼԷՆԷ

ՆԷՈՊՏՂՈՄԷՈՍ

Ե՛կ, ե՛կ գրկացո մէջ, սիրեցեալդ իմ Հելէնէ,
դուստր իմ նազելի. զի դու ես իմ մի միայն
ծիծաղո և մխիթարութիւնս օտ օտար երկրիս,
սա կաժաւոր արտորիս մէջ:

ՀԵԼԷՆԷ

Ինչո՞ւ, Հայր, Հայաստանի վրայ կուտակալ ըլ-
լալդ արտոր կը կոչես:

ՆԷՈՊՏՂՈՄԷՈՍ

Կուտակալ... ա՛հ սնոտի անուն, խաբուսիկ
տիտղոս. այո՛, երբեմն էի կուտակալ երբ Աղեք-
սանդր դեռ կենդանի էր, բայց այսօր... այլ և
հայրիկիքէն հեռու ըլլալն արտոր կը համարիմ
ես: Դարձեալ ո՞ր իշխանութեամբս կուտակալ եմ,
Արդուարդ հոս կը հրամայէ, ինքն է երկրիս
տէրն և իշխանն. իրեն Հայք կը հնազանդին և
ինքն ալ ծերակուտին: Իսկ քու հայրդ պարզ
հարկահան մը կը կոչեն և իբրև օտարական մը

կ'անարգին: Հայք զիս իրենց մէջ բռնաւորի
տեղակալ կ'անուանին և ըստ այժմ ձեռքիս մէջ
Պէրթիկէտի խարազանը և կամ սուրը կը տես-
նեն: Ո՛հ, այս վիճակս անհանդուրժելի էր, եթէ
հին վրէժ մը սրտիս մէջ չըսնուցանէի. այո՛,
ամենայն անեկանօք առթի մը կ'սպասեմ, որ-
պէս զի օտ Հայերէն կրած նախատանացս և
փեստուցս վրէժն հանեմ:

ՀԵԼԷՆԷ

Զիս կը սոսկացնես հայր... երբէ՛ք այդպէս
խօսած չ'էիր:

ՆԷՈՊՏՂՈՄԷՈՍ

Ա՛հ, բաւական լռեցի, բաւական կեղծաւորե-
ցայ. կը կարծեմ որ վրէժինդ բութեանս ժամն
մօտ է: Պէրթիկէտ վերջապէս զՄահէդոնիայ և
բոլոր կայսերութիւնը գրեթէ խաղաղելով ներ-
քին երկպառակութիւններէն, այժմ ապստամբեալ
հպատակները և ժողովուրդքը դարձեալ զինուք
նուաճել կը ջանայ, այլ և Հայոց քանի մը տա-
րի առաջ յանդուգն վտարանջութիւնն ալ մոռ-
ցած չէ. իսկ հոս ամէն շարժմունք իմ միջոցաւ
կը տեղեկանայ: Երէկ դեռ իւր կողմանէ սուր-
հանդակ մ'ինձ գաղտնօրէն հասնելով կը ծանու-
ցանէր, թէ Մահէդոնացի հզօր բանակ մը Հա-
յաստանի մէջ մտնելու պատրաստ էր և միայն
իմ ակնարկութեանս կ'սպասէր: Ուստի, կը կրկնեմ,
առիթ մը, պատճառ մը միայն կը խնդրեմ, որ-
պէս զի միւսանգամ օտ խոտապարանոց Հայոց
տիրաբար հրամայեմ:

ՀԵԼԷՆԷ

Բայց ի՞նչ պատճառ այդպէս զքեզ Հայոց դէմ
կը գրգռէ. կը տեսնեմ որ Արդուարդ իշխանն

եղբօր պէս հետդ կը վարուի և պատշաճ մեծա-
րանքը քեզ կը հատուցանէ. իսկ զիս ալ իւր
դուտարը կը կոչէ:

ՆԵՌՊՏՂՈՄԷՌՍ

Կասկածէ՛ դուտար իմ իւր հայրական համ-
բոյրներէն. զի մեր մէջ եղած ատելութիւնն շատ
հին է, բայց խորամանկութեամբ իրարու առջև
կը կեղծաւորիմք, և ստոյգ եմ թէ ինքն ալ զիս
չարաչար կ'ատէ, ինչպէս ես ալ զինքն: Կը զար-
մանաս այնպէս չէ՞... սակայն քեզ լուծ էի
մինչև հիմայ ատելութեանս պատճառը. դու այն
ատեն վեց տարեկան էիր... այլ միթէ ամենևին
չ'ես յիշէր այն ահաւոր և որոտընդոտ գիշերն,
երբ գքեզ ի գերկս առած կրակի բոցերու և եր-
կաթներու մէջէն անցընելով փախուցի:

Հեկեկե (խրր րե մխտրիև մէջ որոնելով)

Այո՛, աղօդ մը կը յիշեմ, թէ փայլուն և հրաշէկ
երկաթներ գլխոյս վրայ կը շողային, արիւնն
գետի պէս կը վազէր... բայց գրեթէ մոռցած
էի, դու հիմայ գայս ինձ կը յիշեցընես:

ՆԵՌՊՏՂՈՄԷՌՍ

Գետցիր ապա՛ թէ Հայք էին, որոնք մեծին
Աղերսանդրի վախճանելէն վերջը ապստամբե-
լով, զիս քու հայրդ ուզեցին սատակել քու
հետդ: Հազիւ թէ գքեզ անտնց կատաղութենէն
ազատեցի, սակայն մայրդ...

Հեկեկե (զարհուրած)

Մայրս...

ՆԵՌՊՏՂՈՄԷՌՍ

Ո՛հ, խեղճ կիներ դժոխային կատաղեաց ձեռքէն
ինկաւ սրախողխող:

Հեկեկե (աչքը սրբելով)

Ո՛հ մայր իմ...

ՆԵՌՊՏՂՈՄԷՌՍ

Թափէ՛ արտունըքդ, դուտար իմ սիրեցեալ. իցէ՛
թէ սա կաթիլներն տային կոյս սրտիդ այն խա-
ղաղութիւնը, զոր հայրդ ի զուր կը փնտռէ:
Վասն զի Հայոց դէմ՝ անհաշտ քէն մը՝ ցամաքե-
ցուց աչացս մէջ այն բարերար աղբիւրները.
տասը տարիէ ի վեր արտունը խոյս կու տան
հօրդ աչերէն. նուիրէ՛ ապա և հօրդ համար աս
կաթիլները՝ մօրդ տխուր յիշատակին, և խոտա-
ցի՛ր իրեն իմ կողմանէս, թէ աս թափած կա-
թիլներէդ աւելի Հայ գլուխք պիտի կտրեմ, որպէս
զի իւր վրէժը հանեմ: Այդ աղէտալի դէպքը մինչև
հիմայ կամաւ քենէ լուցի, վասն զի չ'էի ուզեր
զուարթ օրերուդ մէջ մահացու թոյն մը խառ-
նել. իսկ այսօր դիտմամբ զայն քեզ կը ծա-
նուցանեմ, որպէս զի տարօրինակ և անիրաւ
չ'երևայ քեզ Հայոց դէմ ունեցած քէնս, և որ-
պէս զի չըհաւտաս Հայ իշխանին բարեկամական
համբոյրներուն:

Հեկեկե

Սակայն Արդուարդ...

ՆԵՌՊՏՂՈՄԷՌՍ

Ո՛հ, լո՛ւ՛ էղկելի. գուցէ մայրդ իւր ձեռքէն
մահն ընդունեցաւ. վասն զի ինքն էր ապստամ-
բաց գլուխն և առաջնորդն:

Գրդրն. Թատր. 16

ՀԵԼԵՆԷ

Ո՛հ, ինչէր լսեցի... տղայութեանս օրէն ուրեմն
 թշուառութիւնք խորան ընտրած են իմ սիրտս...
 սակայն կ'ընտրէի մանաւանդ, որ այդ սոսկալի
 դէպքն յաւիտեան ինձ լռէիք հայր: Զի ինչ բանի
 կը ծառայեն այսօր ապաժաման արտօնւք, միայն
 թէ վշտացս փունջը կ'ստուարացնեն: Երկիրք,
 կասկածել այդպէս բարեկամաց վրայ և անոնց
 ճակատին վրայ շարունակ ատելութիւնը կար-
 դալ... ինչ ահաւոր տանջանք... կոյր վտահու-
 թեան տեղ՝ ծախիչ կասկած մը սնուցանել սրտիս
 մէջ... այլ և կրնամ չը հաւտալ Արտաւազդայ
 բարեկամութեան, մտածութիւնն միայն մահէն
 աւելի դժնդակ է ինձ: Հայր իմ, ինչ դառն և
 մահացուցիչ կասկած սրտիս մէջ արթնցուցիր:

ՆԵՈՊՏՂՈՄԷՈՍ

Արտաւազդայ վրայ կրնաս վտահուլ Հեղինէ.
 ինձ անծանօթ չ'է ձեր փոփոխակի սէրն, Ար-
 տաւազդ ինձ ալ սիրելի է, գուցէ անոր համար
 որ դու զինքն կը սիրես. դարձեալ թէպէտև Ար-
 դուարդայ որդին է և բնականապէս մեր թշնա-
 մին, ի վերայ այսր ամենայնի համակրութիւն մը,
 սէր մը կ'զգամ. իւր քաջութիւնն, իւր առաքինի
 և անկեղծ կենցաղավարութիւնն, իւր անուշ բարքն
 իմ սիրտս իրեն գրաւեցին. ապա ներքին խնդու-
 թեամբ մը թոյլ տուի որ գրեզ սիրէ: Ուստի կը
 կրկնեմ, թէ և հայրը չարաչար ատեմ, զորդին՝
 իմ գաւիտս պէս կը սիրեմ, այնպէս որ կեանքս
 ալ իրեն համար կը զոհեմ, ինչպէս պատրաստ
 եմ՝ քեզի համար ալ զոհելու, եթէ հարկն պա-
 հանջէ: Արդ ի միտ առ ըսածս, սիրէ՞ զորդին,
 սակայն ատէ՞ զհայրն:

ՀԵԼԵՆԷ

Բայց ի՛նչ վիշտ, սիրել զորդին՝ զհայրն ատելով,

յիշել միշտ թէ մօրս դահիճն է, կասկածել ալ
 թէ նոյն ձեռքն պատրաստ է, արկածի մը, գուցէ
 օրուան մը կ'սպասէ, որպէս զի հօրս կեանքն ալ
 խզէ: Ո՛հ, կը կրկնեմ քեզ հայր իմ. բնաւ չ'էի
 փափաքեր գիտնալ մօրս թշուառ վախճանը. զի
 այսօր երկու հակառակ վիշտերէ բղխած արտա-
 սունքն իրարու պիտի խառնուին, մէկն միւսոյն
 սրբութիւնը պիտի պղծէ, դարձեալ այս իրարու
 ոտիս կաթիլներն քու դուստրդ մաշելով, ժամ
 մի առաջ գերեզմանի փոսին մէջ պիտի իջեցը-
 նեն: Այլ և միթէ խայթ մը չի՞ պիտի ըլլայ
 խղճիս, յիշելով որ մայրս սպանողին որդւոյն
 հետ սիրտս սիրով կապուած է:

ՆԵՈՊՏՂՈՄԷՈՍ

Իրեն համար զգացած չափազանց համակրու-
 թիւնս՝ մոռցնել տուաւ ինձ իւր դժխեմ ծնունդը.
 ապա կրնաս դու ալ անխիղճ զինքն սիրել, կը
 պահանջեմ ալ որ զինքն սիրես, վասն զի իւր
 մահն ուզելն՝ գրեզ ալ հետը սպանել է. ուստի
 կ'ուզեմ որ ապրի: Գարձեալ ինձ միայն պահած
 եմ հօրմէն վրէժ անուու պարսքը. նա զի հօր
 գլուխն միայն վրիժապարտ է, անմեղ է որդին:

ՀԵԼԵՆԷ

Անմեղ, այո՛. առ այս իմ սիրտս ալ կը վկայէ, սակայն ո՛չ բոլորովին անկեղծ, գոնէ այս ան- գամ:

ՆԵՈՊՏՂՈՄԷՈՍ

Բացատրէ՛ միտքդ, դուստր իմ:

ՀԵԼԵՆԷ

Արտաւազդ գաղտնի վիշտ մ'ունի, վիշտ դժըն-
 դակ, զոր ինձմէ ալ կը ծածկէ. այս առաւօտ
 զինքն սաստիկ այլայլած տեսայ և յուսահատ.
 կը հաւտանս, հայր, զինքն մեռցընել կը փորձէր:

Ի՞նչ կ'ըսես... անձնասպանութիւն մը...
բայց ո՛չ, անկարելի է:

Հեկեկե

Այո՛, ես իւր բազուկը բռնեցի. իսկ երբ
պատճառն իմանալու դիտմամբ զինքն թախանձեցի,
անորոշ պատասխաններ և անտեղի պատճառանք
ի մէջ բերելով, քովէս խոյս տուաւ:

ՆԷՈՊՏՂՈՄԷՈՍ

Թշուա՛ն երիտասարդ... Ի՞նչ անհնարին վիշտ
արդեօք առ այս զինքն կը բռնագտատէ... իսկ
դո՛ւ Հելէնէ այդպէս դանդաղ կը շարժիս. ինչո՞ւ
չ'ես փութար ազատելու այն ազնիւ կեանքը. օ՛հ
փութա՛ գուցէ ժամանակին չըհասնիս. նայէ՛ որ
զինքն գտնաս և ձեռքէն երկաթը յափշտակես...
գոնէ պէտք էր որ հօրն ազդ տայիր...

Հեկեկե

Հայր իմ, ես մէկէն ետեւէն վազեցի, պալա-
տիս չորս կողմը զինքն փնտռեցի, բոլոր պա-
լատականաց հարցուցի. ամէնքն ալ տեսած են
պալատիս սրահներէն խոճապեալ անցնիլն, սա-
կայն ո՛ւր ըլլալն ոչ ոք գիտէ:

ՆԷՈՊՏՂՈՄԷՈՍ

Գարձի՛ր դուտոր իմ, զինքն միւսանգամ
փնտռէ՛, և մի՛ դադրի՛ր մինչև որ զինքն գտնաս.
նայէ՛ մանաւանդ որ զինքն առանձին չըթողուս,
միանգամայն յուսահատութեան պատճառն իմա-
ցի՛ր: Գարձեալ յիշէ՛ միշտ ինչ որ քեզ ըսի. սիրէ՛
զորդին, բայց կասկածէ՛ և ատէ՛ զհայրն... գնա՛
հիմայ, ուրիշ ատեն աւելի որոշ կերպիւ միւտքս
քեզ կը հաղորդեմ:

Կ'երթամ հայր... ո՛հ սիրտս կը բաբախէ...
ծունգուըներս կը դողան: (Կ'նկայ)

Տ Ե Ս Ի Լ Բ .

ՆԷՈՊՏՂՈՄԷՈՍ (առանձին)

Միթէ պէ՞տք էր որ զինքն այդ աստիճան սի-
րէի... զԱրդուարդ կ'ատեմ, զինքն դաւաճանել
կը խորհիմ, մինչ գորդին կը սիրեմ և կ'ուզեմ
որ Հելէնէ ալ զինքն սիրէ՞... բայց աս պատա-
նին, զոր ակամայ որդւոյս չափ կը սիրեմ, ինչո՞ւ
այդպէս յուսահատաբար իւր կեանքը դաւել կը
խորհի... Ի՞նչ բուռն վիշտ կրնայ ունենալ այն
երիտասարդ տարիքն, որ այդպէս իւր հոգւոյն
երկինքը կ'ամպոտէ. Ի՞նչ իրեն կը պակսի. հայրն
զինքն կը գգուէ, հայրենեացն ակնկալութիւնն է,
Հելէնէ իրեն համար բոլորովին սէր է: Թափան-
ցեց արդեօք արիւնախանձ ռիս զոր սրտիս մէջ
իւր հօրն դէմ կը սնուցանեմ... բայց ի՞նչպէս,
զի ոչ ոք գիտէ: Արտաւազդ՝ դստերս արեւն է,
Հելէնէ նովաւ կենդանութիւն կ'առնու. Հելէնէ
Արտաւազդին լուսինն, է զի նովաւ կը լուսաւո-
րուի: Ո՛հ, ի՞նչ ցաւ սրտիս մէջ ձգեց Հելէնէ, չէի
կարծէր որ զինքն այդ աստիճան սիրէի, նա զի
և սիրելու բռնագատուած եմ. վասն զի եթէ
դժբաղդութիւն կամ չարիք մ'իրեն պատահի,
նոյն գերեզմանն և իմ Հելէնէս իւր մէջ պիտի
ամփոփէ: Ո՛հ, ապրին երկուքն ալ և իմ ծեր
օրերս մխիթարեն. հայրն զրկեց զիս ի կնոջէս,
չ'եմ փափաքիր որ որդին ալ դուտորս ի սիրտէս
յափշտակէ: Սակայն պէտք չ'է նաև, որ ուշա-
ցընեմ վրէժխնդրութեանս գործադրութիւնը.
յապաղելն՝ կրնայ երևան հանել մեր գաղտնի
խորհուրդը. դարձեալ Պէրթիկէտին քովն ալ

լրտեսք և դաւաճանք պակաս չեն: Արդէն կարծեմ որ Արդուարդ կը կասկածի, զի ցրտութեամբ հետս կը վարուի. անշուշտ Մակեդոնացի բանակին ի սահմանս Հայոց մօտենալն զինքն կը վարանէ. դժուար է խաբել այն արթուն աչքը. գուցէ ասոր համար ծերակուտին նիւտերն հետզհետէ կը շարունակին. իսկ Արդուարդ հագիւ թէ Վրաստանէն դարձած, ծերակուտին և իւր մէջ երթևեկն կրկնապատիկ աւելի կը յաճախէ: Պէտք է փութացընել հոս զՄակեդոնացիս և զՀայոց զանգատելու պատճառ մը գտնալ:

(Մակեդոնացի զինուոր մը ներս մտնելով)

Տէ՛ր, Պէրթիկէս իշխանապետին կողմէն Ամինթէս զօրավարն հոս եկած է և զձեզ անձամբ տեսնել կը խնդրէ:

ՆԷՈՊՏՂՈՄԷՈՍ

Ամինթէ՞ս՝ Մակեդոնացի բանակին զօրապետն, իմ վաղեմի բարեկամս և Պէրթիկէսին մտերիմ խորհրդակիցն... շուտ մտոցցէք զինքն հոս. իրեն կ'սպասեմ: (զինուորը կ'ելլայ) Ի՞նչ պատճառ աչդպէս կը փութացընէ Ամինթէսին հոս գալուստը. բայց այդ լուրն իմ խորհուրդս աւելի փութով պիտի յաջողէ:

ՏԵՍԻԼ Գ.

ՆԷՈՊՏՂՈՄԷՈՍ, ԱՄԻՆԹԷՍ

ՆԷՈՊՏՂՈՄԷՈՍ

Բարի՛ ըլլայ ի Հայաստան գալուստդ, տէ՛ր զօրապետ. անշուշտ յաջող լրոց աւետարեր է քու հոս ներկայութիւնդ:

ԱՄԻՆԹԷՍ (ժողիկէն բռնոր մը հաճելով)

Տէ՛ր կուսակալ, հրամայեալ է ինձ Պէրթիկէս իշխանապետին կողմէն, որպէս զի աս նամակը ի ձեռքո յանձնեմ: (Թուշորը Նիոպտղոմէոսի նկարը կու տայ)

ՆԷՈՊՏՂՈՄԷՈՍ (բռնորը աւելելով բարձր կը կարդայ)

« Պէրթիկէս մեծ իշխան՝ առ Նէոպտղոմէոս « ընդհանուր կուսակալ Հայոց, ողջոյն: Մեր իշխանական հրամանն առնուող պէս, կը խնդրեմք որ պահանջես Հայոց Արդուարդ իշխանէն, « կապաղովկիոյ նախորդ թագաւորին որդին « Արիաթէս սեպուհը, զոր և առնուող պէս շըզ « թայակապ մեր Ամինթէս զօրավարին ձեռքը « կը յանձնես: Եթէ Հայք մերժեն և կամ հնա « զանդելու հակառակին մեր բարձրագոյն հրա « մանաց, Ամինթէսի իշխանութիւն տրուած է « անյապաղ Արմաւիրի վրայ յարձակելու, որպէս « զի զինուք Հայերը բռնադատէ մեր հրամանին « հնազանդելու: Պէտք եղած միջոցները միտեղ « ի գործ կը դնէք. Ո՛ղջ լեր: Պէրթիկէս իշխա « նապետ և խնամակալ կայսերութեան Մակե « դոնացւոց»: (Նիոպտղոմէոս բռնորը հաւերու ղեղով ժողը կը դնէ) Աս իս Լիւսանդը. (պաշտօնակալ մը ներս կը մտնէ. Նիոպտղոմէոս՝ պաշտօնակալի) Գնա՛ աղաչէ զԱրդուարդ իշխանը և ըսէ իրեն, թէ Պէրթիկէս իշխանապետին կողմէն Ամինթէս զօրավարն հոս եկած ըլլալով, ամենակարևոր խնդրոյ մը համար հարկաւոր է իւր ներկայութիւնն: (պաշտօնակալը կ'ելլայ)

ԱՄԻՆԹԷՍ

Ի՞նչ, փոխանակ հրամայելու ուր հոս գայ, դու զինքն կ'աղաչէ՞ս:

ՆԵՌՊՏՂՈՄԷՈՍ (ձողոցը հանելով մը)

Դեռ քիչ մը ժամանակ այդպէս վարուելու բռնադատուած եմ. այլ դու ըսէ՛ ինձ, ե՞րբ կը կարծես որ Մակեդոնացի բանակն յԱրմաւիր կրնայ հասնիլ:

ԱՄԻՆԹԷՍ

Ա՛յս գիշեր, էթէ հարկ կը տեսնես:

ՆԵՌՊՏՂՈՄԷՈՍ

Ա՛յս գիշեր...

ԱՄԻՆԹԷՍ

Ա՛յո՛. արդէն յառաջապահ գունդերն մինչև Արմաւիրի Անահտայ անտառին մէջ հասած են:

ՆԵՌՊՏՂՈՄԷՈՍ

Շատ լաւ. ուրեմն ստո՞յգ ես, թէ այս գիշեր կրնաս քաղաքիս մէջ մտնալ:

ԱՄԻՆԹԷՍ

Ա՛յո՛. բայց ինչո՞ւ այդ շտապումն:

ՆԵՌՊՏՂՈՄԷՈՍ

Վասն զի ես Հայերը կը ճանչնամ, մանաւանդ Արդուարդ իշխանը. ուստի չ'եմ կարծեր որ յօժարին... բայց ահա՛ւաստիկ ինքն... ուրեմն այս գիշեր:

ԱՄԻՆԹԷՍ

Այս գիշեր:

ՆԵՌՊՏՂՈՄԷՈՍ

Ե՞րբ...

ԱՄԻՆԹԷՍ

Երբ Անահտայ տաճարին նուիրական պղինձն կէս գիշերը հնչէ, Մակեդոնացիք պարսպաց առջև պիտի գանուին:

ՆԵՌՊՏՂՈՄԷՈՍ

Լռենք և բնաւ կասկած չըտանք մեր խորհրդը՝ դոյն նկատմամբ:

Տ Ե Ս Ի Լ Դ.

ՆԵՌՊՏՂՈՄԷՈՍ, ԱՄԻՆԹԷՍ, ԱՐԴՈՒԱՐԴ,
ՀՐԱՆՏ

ՆԵՌՊՏՂՈՄԷՈՍ

Իշխանդ Հայոց մեծաց, Պէրթիկէս իշխանապետին հրամանն է՝ որ առանց յապաղելու յանձնէք ի ձեռս Ամինթէս զօրավարին՝ զԱրիաթէս կապաղովկիացի ապստամբ սեպուհը:

ԱՐԴՈՒԱՐԴ

Պէրթիկէս Հայոց այդպիսի հրաման մը տալէն առաջ, պէտք էր որ նախ զամէն Հայ բնաջինջ ընէր. իսկ Հայք հնազանդելու համար, պէտք էր որ նախ իրենց Հայ ըլլալը մոռնային: Հայք դաշնադրութեան ուխտը մինչև հիմայ հաւատարմութեամբ պահեցին, միանգամայն իրենց հարկը հատուցանելով. սակայն ազատ են ընդունելու իրենց մէջ բարեկամ հիւր մը:

ՆԷՈՊՏՂՈՄԷՈՍ

Բայց այդ հիւրն ապստամբ մ'է, տէր իշխան. Արիաթէս զինուք դէմ կեցաւ Մակեդոնացւոց, անոնց ձեռաց տակ յանձն չ'առաւ նուաճիլ և հոս իւր կեզրոնը փոխադրելով, ապահովապէս և անպատուհաս յեղափոխութեան և վտարան ջուրեան կը գրգռէ զկատարովկիայ. իւր ոսկւովն ելուզակաց խումբեր և լրպետներ հոն կը խրկէ. ասով չը շատանալով, զձեզ ալ կը գրգռէ Մակեդոնացւոց դէմ: Ապստամբի մը գաղտնի թեւածու և պաշտպան ըլլալն, տէր իշխան, յայտնի թշնամութիւն և ապստամբել է Մակեդոնացւոց կայսերութեան դէմ:

ԱՐԴՈՒԱՐԴ

Հայր իրենց պարտքը ո՛չ Պէրթիկէսէն և ո՛չ Արիաթէսէն կը սովբին: Սակայն որ իրաւամբ յափշտակեց Պէրթիկէս Արիաթէսի ժառանգութիւնը. միթէ իրաւունք չ'ունի՞ զրկեալ իշխանն զարձեալ ձեռք ձգելու հայրենի երկիրը: Արիաթէս՝ Մակեդոնացւոց բռնութենէն խոյս տալով և վստահանալով Հայոց իւր հօրն հետ ունեցած հին բարեկամութեանն, մեր քովն ապաւինեցաւ և մեզմէ ալ իբրև բարեկամի որդի ընդունելութիւն գտաւ. նա՛ զի և մեր թշնամին ըլլար, զինքն ընդունելն մեր պարտքն էր: Իսկ ի՞նչ կը պահանջէ մեզմէ Պէրթիկէս, որպէս զի Արիաթէսին ձեռքն և ոտքը կապելով իրեն յանձնենք. այդ դաւաճանութեան և մատնութեան յանձնառու չ'են ըլլար Հայք:

ՆԷՈՊՏՂՈՄԷՈՍ

Ուրեմն կը մերժե՞ս Պէրթիկէսի հրամանը և ոտիցդ տանկ կ'առնուս խաղաղութեան դաշինքն,

որ կ'արգելու ձեռնտու չ'ըլլալ Մակեդոնացւոց թշնամեացն:

ԱՐԴՈՒԱՐԴ

Այո՛, կը մերժեմ այդպիսի վատ և անիրաւ պահանջմունք մը. Արիաթէս ազատ է. իրեն ասպնջական են Հայաստանի քաղաքներն և բաց են սահմանքն. ըստ իւր հաճոյից կրնայ հոս մնալ և մեկնիլ: Իսկ եթէ տժգոհութեան նոր առիթ մը կը փնտռէ Պէրթիկէս, Հայք չ'են վախնար, և պատրաստ են զինուք վանելու իւր բռնաւորքը:

ՆԷՈՊՏՂՈՄԷՈՍ

Այդ լեզուն՝ ձեր յեղափոխական խորհրդոցն յայտնի ապացոյցն է... այլ ի գուր կը գգուէք այդ խօս անուրջքը. սակայն նախ անձամբ կարգաւ իշխանապետին հրամանը: (Թուշրը Արդուարդիս կ'երկրկնցընէ. Երուսղոմէոս մեկուսի) Ո՛հ, պէտք է անապարել վրէժխնդրութեան գործադրութիւնը:

ԱՐԴՈՒԱՐԴ (քուշրը կ'արդպիւն վերջը)

Ա՛հ, բռնութեամբ ուրեմն կ'ուզէք զմեզ նուաճել... կ'սպանաւք ալ... ան, իրաւի մեզ կը յիշեցընէք թէ բաւական համբերեցին Հայք, թէ մենք ալ թօթափելու լուծ մ'ունինք, թէ մեր հարց ազատութեան դրօշակն բաւական հեծեց ձեր շղթայից տակ, և թէ զայն ի գերութենէ ազատելու օրն հասած է... սակայն հարկ չ'էր որ զայդ մեզ յիշեցընէիք... ապա ուրեմն զրէ՛ իշխանապետին, թէ Հայք չ'են ընդունիր իւր հրամանը և յամենայնի պատրաստ են. անա՛ մեր վերջին պատասխանը:

ՆԵՌՊՏՂՈՄԷՈՍ

Ուրեմն յայտնապէս կը վտարանջէ՞ք:

ԱՐԴՈՒԱՐԴ

Ազատ ծնած են Հայք, և ազատ կը մեռնին:

ՆԵՌՊՏՂՈՄԷՈՍ

Կ'երթամ պատասխանդ գրելու իշխանապետին:
(մեկուշի) Ա՛հ, վերջապէս սա Հայկայ թոռներէն
վրէժս այս գիշեր պիտի հանեմ: (Սևիկրիս և
Նեոպոլոմեոս դռնը կ'հըրան)

ՏԵՍԻԼ Ե.

ԱՐԴՈՒԱՐԴ, ՀՐԱՆՏ

ԱՐԴՈՒԱՐԴ

Գնա՛ իմացուր ծերակուտին՝ Պէրթիկէսի սպառ-
նակքն և իմ պատասխանս:

ՀՐԱՆՏ

Ուրեմն կ'ընդունի՞ս յայտնապէս զպատերազմ:

ԱՐԴՈՒԱՐԴ

Այո՛, այս գիշերս վերջինն պիտի ըլլայ, Հրանտ,
Մակեդոնացուց կենացն. վաղը առաւօտուն մենք
Հայքս թշնամեաց դիականցը վրայ մեր ոտքը
դրած, հպարտութեամբ պիտի ողջունեմք մեր
ազատ արեգակը: Սակայն Մակեդոնացի բանակ
մը դէպ ի յԱրմաւիր կը մօտենայ. դու գնա՛
պատրաստէ Հայոց զունդերը. կէսն Անահտայ
անտառին մէջ դարանի՛ դիր, իսկ միւս մասն

ալ պարսպաց պահանջութեան պարապի: Այլ
ինչ պատճառ Հելէնէ օրիորդը դէպ ի մեզ կը
բերէ... դու գնա՛ ազդ տուր ծերակուտին, ես ալ
ընդ հուպ Արտաւազըր առնլով իւր քով կը դառ-
նամ: (Հրանտ կ'հըրայ)

ՏԵՍԻԼ Զ.

ԱՐԴՈՒԱՐԴ, ՀԵԼԷՆԷ

ԱՐԴՈՒԱՐԴ (մեկուշի)

Ո՛հ, ի տես սորա վայրկեան մը ամէն պարսքս
մոռնալով, հայր ըլլալս կը յիշեմ... Արտաւազը
Հելէնէ... Ինչ հարուած ձեզ կը պատրաստեմ.
ձեր սիրտէն վազելու եղած արիւնն՝ նախ իմ
կողէս պիտի բղխէ:

ՀԵԼԷՆԷ (մօտենալով)

Տէ՛ր իշխան, Արտաւազդայ և իմ անունս լսե-
լեաց հնչեցին... Բայց գիտե՛ս արդեօք, ո՛ր իցէ
Արտաւազը:

ԱՐԴՈՒԱՐԴ

Այս առաւօտ ես զինքն տեսայ... Բայց ինչո՞ւ
այդպէս խոտված ես:

ՀԵԼԷՆԷ

Այս առաւօտ ես ալ զինքն տեսայ, բայց եր-
կինք, երբէք չէի փափաքեր տեսնել զինքն այն
վիճակին մէջ:

ԱՐԴՈՒԱՐԴ

Ի՞նչպէս... ինչո՞ւ, Հելէնէ, արտօտնքդ՝ խօսքդ
կ'ընդմիջեն... ան, խօսէ՛, մի՛ թողուր թշուառ
հայր մը մահու տագնապի մէջ:

ՀԱԼԷՆԵ

Թող որ սա արտասուներս թափին, տէր. զի երբ արիւն պիտի վազէ, միթէ կրնան դադրիլ արտասուներ:

ԱՐԴՈՒԱՐԿ (գարհոնրած)

Ի՞նչ ըսել կ'ուզես... (մեկոռսի) արդեօք յայտնամ է Արտաւազդ մեր խորհուրդը:

ՀԱԼԷՆԵ

Տեսայ զինքն յուսահատեալ և երկաթ ի ձեռին, զինքն զարնել կը խնդրէր:

ԱՐԴՈՒԱՐԿ (մեկոռսի)

Ո՛վ դէք... Թշուառ որդի. (բարձր) իսկ դո՞ւ Հէլէնէ...

ՀԱԼԷՆԵ

Ես իւր ձեռքն անձնասպան ըլլալէն արգիլեցի. ինքն առանց պատճառքն ինձ յայտնելու խոյս տուաւ քովէս, մահագոյժ երկաթն իւր հետ տանելով, ահաբեկ հոս հոն կը վազեմ պալատիս մէջ. մինչև զպարտէզն և պալատս շուրջ պատող զանտառն որոնեցի. վերջապէս գտայ զինքն ի գերեզմանատունն Հայոց Թագաւորաց. իւր հեծկտանքն զիս մինչև իւր քովն առաջնորդեցին. հոն, իւր մօրն շիրմին քով ծնագոյն վրայ ինկած կ'արտասուէր, կը հառաչէր և դաժան նայուածք մը կը ձգէր սպիտակ մարմարիտին վրայ, որ իւր ծնողին ցուրտ ոսկերքը կը ծածկէ:

ԱՐԴՈՒԱՐԿ

Ա՛հ... շարունակէ՛ Հէլէնէ:

ՀԱԼԷՆԵ

Ձիտ տեսնելուն՝ իբրև որսորդի փողէն շրտնեալ եղջերու մը, յանկարծ ոտսն լուով շիրմանց մէջ աներևոյթ եղաւ: Գիտե՞ս արդեօք, տէր իշխան, իւր յուսահատ տխրութեան պատճառը, գուցէ հայրական սիրտէդ զաղտնի չ'են իւր վիշաքն. դարձեալ միթէ չ'իք հնար զինքն մխիթարելու և միտքէն հալածելու այդ մահատու փափաքը... Ի՞նչ, դո՞ւ ալ լուռ կը կենաս... ո՞վ երկինք, համարացեալ են ուրեմն այսօր ամենայն լեզուք:

ԱՐԴՈՒԱՐԿ (մեկոռսի)

Ի՞նչ պատասխանել այժմ, ո՞վ դէք:

ՀԱԼԷՆԵ

Գո՞ւ ալ կը հառաչես... իսկ ինչո՞ւ աչքդ դէպ յ'երկինս կը դարձընես. միթէ՞ հոն խիստ ճակատագիր մը կը կարդաս՝ իմ աչացս միայն աներևոյթ:

ԱՐԴՈՒԱՐԿ

Գո՞ւտար իմ նազելի. (մեկոռսի) և իմ ձեռքէ՞ս պիտի մեռնի... (բարձր). կ'ըսես ուրեմն՝ թէ դո՞ւ զինքն ազատեցիր, Հէլէնէ:

ՀԱԼԷՆԵ

Այո՛. բայց այժմ... Թերևս հիմայ որ ես հետդ վասն իւր կենացն կը վարանիմք... գուցէ հիմայ ինքն իւր մօրն քով անշունչ պառկած է... (մեկոռսի). Ո՛հ, սիրելիդ իմ Արտաւազդ:

ԱՐԴՈՒԱՐԿ

Հանդարտէ՛ Հէլէնէ. Արտաւազդ խոստացաւ ինձ և զիշերուրնէ առաջ քովս պիտի գայ. հանդարտէ՛ դուտար իմ, հայրն պիտի հսկէ աջաւորը

իւր որդւոյն վրայ: (մեկուշի) Ո՛հ, պէտք է որ հիմայ զինքն տեսնեմ:

Հեկէն: (վազկոյով Սյրդուարդայ ձեռքը կը բռնէ)

Ա՛հ, եթէ զինքն գտնաս, մի թողուր որ քովէդ հեռանայ, մի թողուր զինքն առանձին, թափանցէ իւր սիրտին գաղտնի վիշտը, և ջանա՛ զինքն մխիթարելու:

ԱՐԴՈՒԱՐԴ

Հանգիտ եղիր, Հեկէնէ, խնդիրքդ պիտի կատարեմ, որ և իմ պարտքս է:

Հեկէն: (Սյրդուարդին ձեռքը համբուրելով)

Ո՛հ, շնորհակալ եմ, տէր իշխան... (մեկէն քստմենքով մեկուշի): Երկինք, ինչպէս կը համբուրեմ ես սա ձեռքն որ մօրս արեան մէջ թափխեցին... յ՛հ, հայր իմ, ի՛նչ վէրք տուիր այս առաւօտ իմ սրտիս: (ձեռքը բողբոջ տակնուկէ կտ կը քաշուի)

ԱՐԴՈՒԱՐԴ

Ի՛նչ ունիս, Հեկէնէ...

Հեկէն:

Չ'եմ գիտեր, սակայն երկիւղ մը ինձ կ'ազդեն ձեռք քո, հրաշքի երկաթի պէս շրթունքս այբնցին:

ԱՐԴՈՒԱՐԴ (մեկուշի)

Ո՞վ դէք, կը քստմնիմ... արդեօք... (բարձր) ինչպէս...

Հեկէն:

Արդարև դ՞ու իցես մօրս սպանողն...

ԱՐԴՈՒԱՐԴ (զարնուած)

Ի՞նչ կ'ըսես... ինչպիսի՞ հարցմունք, Հեկէնէ:

Հեկէն: (խնդրաբար)

Արդարև այժմ միտքս կը բերեմ այն ահաւոր գիշերը... տղայ էի հօրս գիրկին մէջ... կը յիշեմ այն դէմքը... այո՛, սաստիկ տպաւորութիւն մը թողուց այն դէմքն երեւակայութեանս մէջ... այո՛, ինքն էր որ, մայրս սպանելէն ետև, սուր ի ձեռին հօրս ետևէն ինկած զմեզ կը հալածէր: (դարձեալ զարնուածօք կտ կը քաշուի)

ԱՐԴՈՒԱՐԴ (մեկուշի)

Ո՛հ, անշուշտ Նէոպոլիտէոս իրեն պատմած է... (բարձր) Հեկէնէ, ինչո՞ւ այդ թաղուած դէպքն այսօր գերեզմանի խորէն դուրս կը հանես:

Հեկէն: (այլալոյս խնդրաբար)

Ատէլ զինքն... աւանդ... զի միանգամայն Արտաւազդին հայրն է:

ԱՐԴՈՒԱՐԴ (մեկուշի)

Ո՛հ հայրենիք իմ, ի՛նչ զոհ ինձմէ կը պահանջէք:

Հեկէն: (սրափկոյով)

Երթանք, տէր իշխան, գտնալու զԱրտաւազդ. փրկենք նախ զինքն իւր յուսահատ կատաղութեանէ՛ եթէ արդէն չէ անագան: (կ'ըլլան)

Հ Ա Ն Դ Է Ս Ե Ր Ր Ո Ր Դ

Հեղեկեի պաշկերոշ խոսքը. գիշերե, գաղտնի դուռ
վը տապաստակիև վրայ. դուռ մ'ալ խորը:

ՏԵՍԻԼ Ա.

ԵՆԻՆԵ (տառանձին անկողնոյն վրայ նստած է
մտառտակ)

Ի զ՛ուր աչքս փակել կը ջանամ, որպէս զի
վիշտերս մոռնամ, սակայն կարծեմ թէ արտեւա-
նունքս հրաշէկ անուխնիքու վրայ կը հանգչին.
հազիւ թէ զլուխս բարձիս վրայ կը դնեմ, դա-
ժան անուրջք, իսկութեանէ աւելի անագորոյն,
միտքս և երեւակայութիւնս կը պաշարեն: Ո՛հ
անհնար է քուն ըլլալ, երբ վիշտ մ'արթուն է
սրտին մէջ...: Առաւօտանց ի վեր սրչափ ա-
նակնկալ դէպք իրարու կը յաջորդեն, իբր թէ
զիս տագնապելու բաւական չ'ըլլային սիրակա-
նիս կենացն համար զգացած երկիւղս և հօրս
քէնն: Ա՛հ, հայր իմ, ինչ նոր տանջանք տան-
ջանացս վրայ աւելցուցիր՝ գերեզմանական լու-
թիւն մը խօսեցընելով. միթէ անհանգիստ պիտի
ննջէին մօրս ոսկերքն իրենց շիրմին մէջ, կամ
միթէ թափառական պիտի չըջէր ծնողիս ստուերն
դժոխոց փախնց վրայ, եթէ դուտարն այդ անա-
ւոր իսկութեան մնար անտեղեակ. անգութ հայր,
կընեցի՞ր տուած հարուածդ... ո՛հ ներէ՛ ինձ, սի-
րելի ծնող, կը ցնորիմ, կ'անիրաւիմ քեզի դէմ.
միթէ պէտք չ'է՞ր որ գիտնայի մօրս դաւաճանին
անունը. Արդուարդ... անուն չարագուշակ. ո՛հ
ինչո՛ւ Արտաւազդին հայրն ես, ինչո՛ւ զիս ալ

դուտարդ կը կոչես, երբ մօրս դահիճն եղած ես...
իսկ ես զքեզ հայր կը կոչէի... դահիճ մը...:
Ո՛վ դիք, միթէ գիշերս երկայն պիտի տևէ. միթէ
սա արհաւիրք լի գիշերս չի՞ պիտի ունենայ լու-
սաւոր և խղաղաւէտ առաւօտ մը: Ալ տարակոյս
չ'ունիմ. անաւոր վիշտ մը զԱրդուարդ և զԱր-
տաւազդ գրաւած է. գաղտնի խորհուրդ մը զի-
րենք կը խոռվէ... ինչ արդեօք: Հայրս ալ խոռ-
ված է. Արդուարդայ հետ տեսաւորութեանէն վեր-
ջը. անընդհատ սրահին մէջ տագնասլաւ կը ձեռնէ.
տեսայ զինքն որ շարունակ անհամբեր՝ աչքը պա-
տուհանէն դուրս, Անհատայ նուիրական անտառին
վրայ կը ձգէր, իբր թէ անտառին խորէն ակնկա-
լութեան մը սպասէր, և կամ վրէժխնդիր մը՝ որ
կնոջն դաւաճանը պիտի պատժէ... ո՛ւր դարձեալ
միտքս կը ցնորին... կ'ըսեն որ թշնամութիւն
միտանգամ Մակեդոնացոց և Հայոց մէջ պիտի
սկսի. իսկ եթէ բոնադատուիմ հօրս հետ զԱր-
մաւիբ թողուլ և մեկնիլ... ինչ, թողո՞ւլ զԱր-
տաւազդ... ո՛հ անիծեալ թշնամութիւն, քէն
մահացու. սակայն Հայաստան Մակեդոնիայէն
աւելի սիրելի է ինձ, զոր չ'եմ ճանչնար. Հայաս-
տան... ո՛հ, իմ հայրենիքս է. հոս են իմ որո-
րանս և խանձարուրքս, հոս են մօրս ոսկերքն,
հոս նաև Արտաւազդ, հոս պիտի ըլլայ և իմ
գերեզմանս: (Փայրակ մը կը շակրթէ. Հեղեկե դէպ
ի պատուհանը մտնեալով) Ո՛հ, ինչ մութ գիշեր.
երկնից երեսն ալ սրտիս պէս ամպոտած է: (Հե-
տեկն դրստուր) Մորիկ մը կը պատրաստուի...
(լուռ կենալով սկանչ կը դնէ) ոտից դղրդիւն
կայ դուրսը... մէկը կը քալէ. (Կ'երթայ դրան
կը մտնեալ և սկանչ կը դնէ) հայրս ըլլալու
է. խեղճը դեռ կը ձեռնէ. երբեք քունն իւր
բիբերէն ալ հալածական եղած է... դէպ ի հոս
կը մտնեայ: (Կ'երթայ անկողնոյն քովը կը նըս-
տի. պահ մը րոշ, դուռը կը բացուի և Երեսայու-
մեռս ներս կը մտնէ)

ՏԵՍԻԼ Բ.

ՆԵՌՊՏՂՈՄԷՈՍ, ՀԵԼԷՆԵ

ՀԵԼԷՆԵ (ոտր կղևկող)

Հայր իմ, ինչ դէպք զքեզ անկողնէդ հալածական, այս պահուս հոս կը բերեն:

ՆԵՌՊՏՂՈՄԷՈՍ

Ի՞նչ տեսայ խուցիդ մէջ. ուրեմն դու ալ կը հսկես դուստր իմ:

ՀԵԼԷՆԵ

Չ'եմ գիտեր ինչ ունիմ այս գիշեր, քունը խոյս կուտայ աչերէս... Բայց դու ալ այլայլած ես Հայր:

ՆԵՌՊՏՂՈՄԷՈՍ

Իմ այլայլութիւնս չ'է՛ անպատճառ... Լսէ՛ գիտ Հելէնէ. կը յիշե՛ս այս առաւօտ քեզ պատմածս մօրդ մահուանն վրայօք... կարծեմ որ ըսի քեզ թէ վրէժխնդրութիւն մը, քէն մը յազգեցընելու համար միայն՝ Հայաստանի վրայ կուսակալ ըլլալն յանձն առած էի:

ՀԵԼԷՆԵ

Այո՛, Հայր, զայս ըսիր. ապա ուրե՛մն...

ՆԵՌՊՏՂՈՄԷՈՍ

Այս գիշեր մօրդ վրէժը յիւր սպանողաց պիտի հանեմ:

ՀԵԼԷՆԵ

Չիս կը դողացընես, Հայր:

ՆԵՌՊՏՂՈՄԷՈՍ

Կը քստմնիս... կը հասկընամ դողդ... բայց հանդարտէ՛ սիրտդ, Հելէնէ. Արտաւագդ պիտի ապրի, զի անմեղ են իւր ձեռքն, այլ Արտաւագդ միայն:

ՀԵԼԷՆԵ

Արտաւագդ պիտի ապրի, սակայն հայրն...

ՆԵՌՊՏՂՈՄԷՈՍ

Հայրն վրիժապարտ է և պիտի մեռնի... ո՛հ բաւական նախատինքս և վիշտերս լուցի, Հելէնէ. այս գիշեր զԱրդուարդ մատնողն ես պիտի ըլլամ. չի պիտի թողում օտարաց զինքն պատժելու պաշտօնը. զայս երդուընցայ մօրդ արիւնաթաթախ մարմնոյն վրայ. այո՛, այս գիշեր Արդուարդ պիտի մեռնի և իմ ձեռքէս:

ՀԵԼԷՆԵ

Աւա՛ղ, կը տեսնեմ թէ յոր կողմն ալ ուղղես հաւրուածն, վէրքն Արտաւագդայ և իմ սրտիս մէջ պիտի բացուի: Իսկ եթէ Արտաւագդին համար զգացած սէրդ, դստերդ աղաչանքն, արտօնըն՝ կրնան ընդունել քենէ իւր կենաց շնորհքը... Լսէ՛ գիտ, հայր իմ...

ՆԵՌՊՏՂՈՄԷՈՍ

Ի՛նչ, կը պաշտպանե՛ս դու մօրդ դաւաճանը... փուճ տեղ մի թափեր սա արտօնընդ, Հելէնէ. Արդուարդ պիտի մեռնի. մօրդ ոսկերքն իւր արիւնը ինձմէ կը պահանջեն. իւր անհանգիստ

ստուերն գիշեր ցորեկ աչքիս առջև կանգնելով,
վրէժխնդրութեանս յապաղումը յերեսս իմ կը
զարնէ և իւր գլուխը ինձմէ կը խնդրէ: Ուտտի
անկարելի է իւր շնորհքն, և պիտի մեռնի. զայս
որոշած եմ, զայս երգուընցայ և իւր շիրմին
վրայ. քեզ կը թողում գորգին, ապա թող ինձ
զհայրն:

ՀԵԼԵՆԷ

Աւանդ, չ'էի կարծեր որ աղաչանքս և սա կա-
թիլներն այդչափ տկար ըլլան շիջուցանելու հօրս
ատելութիւնը... սակայն դու մայր իմ... եթէ
դստերդ արտօնքն կրնան երկնից մէջ ողբելու
քու զայրացեալ հոգիդ, դու ազդէ հօրս զգթու-
թիւն, դու խէ իւր սիրտէն այդ քէնը:

ՆԵՈՊՏՂՈՄԷՈՍ

Մի գանգատիր, Հելէնէ, անհնարին զոհ մը
ինձմէ կը պահանջես. իսկ մայրդ՝ ստոյգ եմ, որ
ապերախտ դստեր մը խնդիրքը պիտի մերժէ:
Անիրաւութեամբ կը տարակուսիս իմ սիրուս
վրայ, Հելէնէ. դու ալ կը յիշես որ մինչև հիմայ
քենէ բան մ'ալ չը զլացայ, քու ակնարկելդ միայն
ինձ հրաման մ'էր, զոր կատարելու կը փութայի.
այսօր ալ եթէ կեանքս ուզենաս, պատրաստ
եմ նուիրելու քեզ, սակայն... (անագիւն գուշ-
մամբ կայծակ մը կը շակրէ)

ՀԵԼԵՆԷ (զարմուշում)

Ո՛վ դիք, ինչ գիշեր...

ՆԵՈՊՏՂՈՄԷՈՍ

Դուտար իմ, սա գիշերս ինձ քենէ աւելի անաւոր
է, և դառն յիշատակօք միտքս կը տանջէ. այո՛,
կը յիշեմ իբր թէ այսօր ըլլար. տասը տարի
առաջ... Աղքատներ դեռ նոր վախճանած էր.

Յրկալառակութիւն և կռիւն իւր յաջորդաց մէջ կը
տիրէր... այսպէս գիշեր մը երկինքն ամպոտած
էր, կը գոռար, կը փայլատակէր... յանկարծ
կէս գիշերուն որոտումէն՝ կայծակի շաչմանէ
աւելի զարհուրելի դրդիւն մը հնչեց. « Ի մահ
Մակեդոնացիք ». այո՛, դեռ ականջիս մէջ կը
հնչէ խառնաղանջ ամբոխին այն անաբեկ աղա-
ղակն, դեռ աչացս առջևն է այն դժնեայ տե-
սարանն... յանկարծ մոայլապատ պալատը ջա-
հերով, սպառնալից դեերով և զօրքով լեցուեցաւ.
պալատիս, փողոցներուն, հրապարակին մէջ,
վերջապէս ամէն տեղ Մակեդոնացոց արիւնն
հեղեղաբար կը վազէր: Հազիւ թէ գրեզ ի գիրկս
բարձած և մօրդ ձեռքէն բռնած ի պարտէզն պա-
լատիս կրցայ իջնալ. իսկ հոն, փայլական
առաջնորդութեամբն, դէպ ի ստորերկրեայ գե-
րեզմանատունն կ'ուղղէի խուճապեալ ընթացքս:
Հոն մայրդ նուազեալ շնչասպառ կ'իյնար ի ստո-
յոտ շիրմի միջ. իսկ Հայք առաջնորդութեամբ
Արդուարդայ մեր ետևէն կը վազէին... ո՛վ դիք,
ինչ դառն էր այն ժամն, երբ գրեզ որպէս զի
ապրեցընեմ, բռնադատուեցայ մայրդ ի ձեռս
անազակաց լքանելու...

ՀԵԼԵՆԷ

Ահ, հայր իմ, լու՛ն... ի՞նչ հարկ յիշել ինձ այժմ
այն թշուառ դէպքին տխուր պարագաները...
Հելէնէ արտօնք և աղօթք միայն կրնայ ձօնելու
այսօր այդ սուրբ յիշատակիդ:

ՆԵՈՊՏՂՈՄԷՈՍ

Չէ՛, Հելէնէ, պէտք է որ գիտնաս զայդ ամե-
նայն և խելամուտ ըլլաս, թէ գո՛վ պաշտպանել
կը խնդրես... կ'ըսէի ուրեմն թէ անտի հեռա-
նալու բռնադատուեցայ, այլ աչք իմ միշտ հոն
կը դառնային. կը ջանայի խաւարին մէջէն տա-
կաւին տեսնել մայրդ: Իսկ այդ փայլակին ցո-

լացման մէջ սուր մը տեսայ՝ որ գլխոյն վրայ կը փայլատակէր. բայց այդ վայրկեանական փայլումն՝ բաւեց ինձ որոշելու եղեոնագործին դէմքը, գկատաղին և գվայրենին Արդուարդ... Խաւարն պահ մը ծածկեց աչերէս այն սոսկալի տեսարանը. իսկ ի միւսանգամ փայլատակելն... Ահ, տեսայ որ մայրդ արդէն յօշատած էր:

Հեկեհե:

Ահ, մայր իմ... մայր իմ... մայր իմ...

ՆԵՌՊՏՂՈՄԷՈՍ

Ես ալ հոն կսկիծէս կայծակնահար անշուշտ կ'իյնայի, եթէ նախախնամութիւն մ'ինձ յօգնութեան չըհասնէր. թերևս սուրբ մօրդ ստուերն և կամ իւր վրէժխնդիր հոգին մեր պաշտպանութեան կը դիմէր. վասն զի խաւարն ծածկեց գմեց այն վագերց աչերէն... (Աւանտայ տաճարին նոշիրական պրիւնձն երիցս կը հնչէ) Կէս գիշեր... ոհ, ինչպէս անուշ կը հնչէ ականջիս այս գիշեր սա պղինձն...

Հեկեհե:

Ընդ հակառակն, հայր, ես կը դողամ. քու խօսքդ զիս ահիւ և սոսկմամբ լեցուցին, կարծեմ որ նկարագրած զարհուրելի տեսարանդ աչացս առջև կը բացուի. արդէն ահաւոր երազներ զիս կը տագնապէին. իսկ երէկ արևն մտնալուն, արիւնաթաթախ դէմք մ'ունէր հորիզոնին վրայ:

ՆԵՌՊՏՂՈՄԷՈՍ

Մի վախնար, Հեկեհե. սա պղինձն մեզ այժմ ազդ կու տայ թէ Մակեդոնացիք Արմաւիրի պարսպաց մօտ հասած են:

Հեկեհե:

Մակեդոնացիք...

ՆԵՌՊՏՂՈՄԷՈՍ

Այո, Ամինթէս իւր բանական այս գիշեր Արմաւիրի վրայ պիտի յարձակի. (դրոյդիւն մը կը շտշի) բայց ինչ դրոյդիւն պալատիս և ինչ աղմուկ հրապարակին մէջ կը լսուի... արդեօք հասած են արդէն Մակեդոնացիք:

Հեկեհե (պատռնձանիկն առջև կը վագե, աճագիկ գոռնուտը կայծակ մը կը շակրե. զարնոշրած ևտ կը քաշուի)

Ահ, հայր իմ, հրապարակն ջահերով, ամբոխով և զօրքով լեցուած է:

ՆԵՌՊՏՂՈՄԷՈՍ

Ինչ կ'ըսես, Հեկեհե... բայց մի դողար, մեր պաշտպանքն ըլլալու են:

(դռնուկն աղաղակ)

Ի մահ Մակեդոնացիք...

ՆԵՌՊՏՂՈՄԷՈՍ (դէպ ի դռնը վագելով)

Ինչ կը լսեմ... հայերն... դարձեալ սա աղաղակն՝ տասը տարիէ վերջը... ահ, չի պիտի լռէ ուրեմն... սակայն այս անգամ ի զուր կը հնչէ կատաղութեան սա աղաղակն:

(դռնուկն աղաղակը կը կրկնէ)

Ի մահ Մակեդոնացիք:

Հեկեհե (հօրը ձեռքին բռնած)

Ահ, հայր, դրոյդիւնն կը մօտենայ... ոտնա...

ձայն կը լսեմ և պալատիս սրահներուն մէջ...
զինուորներ կը վազեն...

(սպառտին սրահներէն ձայներ)

Ի մահ Մակեդոնացիք:

ՆԵՌՊՏՂՈՄԷՈՍ (խռոված և սեկեկիկ մէջ խռ-
ձապեալ հոս հոն վազելով)

Ա՛հ, դաւաճանութիւն... կը կատարեն ուրեմն
Հայք Արդուարդայ սպանաւիկքը... կը վտա-
րանջեն ապա. այ՛ն. ոտք շտապաւ հոս կը մո-
տենան... ո՛ւր փախչիլ այժմ, ո՛վ դէք... Բնչպէս
զինքն ազատել. (Հէկեկէն ցոչցրնելով) միթէ
զրժեց Ամինթէս. (կայծակ մը ահագին շաւ-
մաւր կը գոռայ)

ՀԵԼԵՆԵ

Ա՛հ... (կը վազէ հօրը գիրկը կ'իյնայ. տա-
պաւտակիկն վրայ եղած ծածուկ դուռը կը բա-
ցոչի և Արտաւազդ խռձապեալ ներս կը վազէ)

ՏԵՍԻԼ Գ.

ՆԵՌՊՏՂՈՄԷՈՍ, ՀԵԼԵՆԵ, ԱՐՏԱԻԱԶԳ

ՆԵՌՊՏՂՈՄԷՈՍ

Արտաւազդ, Բնչ կը պատահի:

ՀԵԼԵՆԵ (դեպ ի յԱրտաւազդ վազելով)

Ա՛հ, սիրելիդ իմ Արտաւազդ, ազատէ՛ գմեզ...
մանաւանդ զինքն (հայրը ցոչցրնելով)

ԱՐՏԱԻԱԶԳ

Ես ալ այդ նպատակաւ հոս եկած եմ: Հայք
կը վտարանջին... հիմայ շուտ պէտք է խոյս տալ
աստի. ահագին վտանգն մանաւանդ թէ զձեզ
կ'սպանայ. Մակեդոնացուց արիւնն ամէն տեղ
կը վազէ. ես զիրենք կանխեցի, իրենք ալ հօրս
հետ ետեէս կը հասնին... Ելէ՛ք շուտ՝ սա գաղտնի
դռնէն... և մինչդեռ ես հոս անոնց կատարու-
թիւնը կ'զբաղեցընեմ. դո՛ւք խաւարի մէջ իջէ՛ք
յաջակողման դուռն պարտիզին, հոն ձեր հա-
ւատարիմ՝ քարեկամներէն ոմանք ձեզ կ'սպա-
սեն... վտահ եղէք իրենց, անոնք զձեզ պիտի
առաջնորդեն մինչև ի շիրիմ մօրս, ուր են ստո-
րերկրեայ օթեանքն, որոնք մինչև պալատիս բան-
տերուն հետ հազորակցութիւն ունին, հոն
ապահովապէս և անվտանգ զիշերս կ'անցընէք.
Իսկ յառաւօտուն... ես թերևս ձեզ կ'առաջնոր-
դեմ... բայց այս զիշեր... անաւաստիկ ամբօխն
կը մօտենայ... ձայները կ'որոշեմ... հայրս իրենց
կ'առաջնորդէ... օ՛ն ելէ՛ք սա դռնէս:

ՆԵՌՊՏՂՈՄԷՈՍ (Հէկեկէկէն ձեռքէն բռնած)

Ո՛հ, շնորհապարտ եմ քեզ, Արտաւազդ, այսու-
հետև կեանքս քուկդ է:

ԱՐՏԱԻԱԶԳ (մեկուսի)

Թէ որ ապրիմ (բարձր). սիրեցեալդ իմ Հե-
լէնէ, շնորհք մը քենէ կը խնդրեմ, զի գուցէ
վերջին անգամն է որ հետդ այս զիշեր կը տես-
նուիմ:

ՀԵԼԵՆԵ

Ի՛նչ կ'ըսես, Արտաւազդ, միթէ չի՞ պիտի գաս
մեր հետ... ուրեմն առաւօտեան յուսահատու-

Թիւնդ... ա՛հ, կը սոսկամ... բայց խօսէ՛ ինչ է խնդրածդ... գիտես որ քեզ բան մ'ալ չ'եմ գլանար:

ԱՐՏԱԽԱԶԴ

Համբոյր մը, Հելէնէ:

Հելէնէ (արտատուարոր գիրկը իյնալով)

Անձատիկ, Արտաւազդ... բայց խօսէ՛, ինչո՞ւ մեր հետ չի պիտի գաս... գուցէ նոյն մահացու խորհուրդն զքեզ զրաւած է:

ԱՐՏԱԽԱԶԴ (գիւնը համարաբեղէն վերջը)

Ո՛հ, շնորհակալ եմ Հելէնէ... ապահով եղիր... անկարելի է որ ձեր հետ կարենամ գալ... դուք այժմ մեկնեցէք... դի՛ք ուղղեն ձեր քայլափոխքը... այսուհետև միւսանգամ երկնից մէջ պիտի տեսնուինք:

Հելէնէ

Ա՛հ, հայր, կ'աղաչեմ, թո՛ղ զիս հոս իւր հետ... դու մեկնէ՛ շուտ... ես իւր հետ կ'ուզեմ մեռնիլ հոս, եթէ իրեն մահ պատահի: (դուրսը դրոյթներ և աղաղակն կը մօտենան)

ԱՐՏԱԽԱԶԴ

Շուտ ելէք դուրս. (դռնէն դուրս գիրտերը հանելէն վերջը՝ դուրս կը գոցէ) շնորհակալ եմ ձեզ, ո՛վ դի՛ք, վերջապէս ազատ են... իսկ ե՛ս... խո՛յս տալ իրենց հետ... ա՛հ, քա՛ւ լիցի, որ այդպիսի վատութիւն մը գործեմ: (դուրս կը բացուի. հայրը տեսնելով) ինքն է... ո՛վ երկինք:

ՏԵՍԻԼ Գ.

ԱՐԳՈՒԱՐԳ, ԱՐՏԱԽԱԶԴ, ՀՐԱՆՏ,
ԱՐԻԱԹԷՍ

Հայ զօրականը (լսներ բռնած և տուներս մերկը)

ԱՐԳՈՒԱՐԳ (մերկ սուր ձեռքը ներս կը վագի. զԱրտաւազդ լքուսներ ի սկզբանէ)

Եկէ՛ք, հոս են. հոս է բռնաւորն. (զԱրտաւազդ տեսնելով սուկմամբ ետ ետ կ'երբայ) դո՛ւ հո՛ս, Արտաւազդ, և առանձինն. ինչ գործ ունիս... իսկ ո՞ւր է բռնաւորն... չ'ե՛ս պատասխաներ... այդ լուսթիւնն... ա՛հ, արդէն քստմնեցուցիչ կասկած մը սրտիս մէջ կը ծնանի... փարատէ՛ վաբանքս, ո՞ւր է Նէոպոլոմէոս:

ԱՐՏԱԽԱԶԴ

Տէ՛ր, գթալից և բարեկամ ձեռք մը Նէոպոլոմէոսի և թշուառն Հելէնայ կեանքը ազատեց:

ԱՐԳՈՒԱՐԳ

Նէոպոլոմէոս ազմտ... ա՛հ, ինչ կը լսեմ... իսկ այդ յանդուգն և դրժող ձեռքն...

ԱՐՏԱԽԱԶԴ

Իմս, տէր:

ԱՐԳՈՒԱՐԳ

Քո՞ւ ձեռքդ...

(Ամենքն ալ միարեւոյն)

Մատնութիւն, դաւաճանութիւն, վրէժխըն-
դրութիւն...

ԱՐԳՈՒԱՐԻ

Արդարագատ դէք, կը խաբուի՞մ արդեօք...
սակայն կը դողամ կրկնել տալու ըսածը... Ար-
տաւազդ մատնի՞չ, դաւաճան հայրենեացն... զայս
լսեցի այնպէս չէ՛. ձեր լուծիւնն անգամ դա-
ւաճանը մատնանիշ ինձ կը ցուցընէ. այո՛,
վրէժխընդրութիւն... սակայն այդպիսի եղեռան
մը համար չի՞ք երկրիս վրայ բաւական խիտ
պատուհաս: Ինչո՞ւ ձեր կայծակներն, ո՞վ դէք, չ'են
պատժեր զայնպիսին, որ իւր հայրենիքը կը մատ-
նէ... ահ, հայ մը, իմ որդիս դաւաճան և մատ-
նիչ հայրենեաց... հայրենեաց՝ որուն համար
մինչև հիմայ երակներու ընդ որ արիւնը թա-
փած էմ, հայրենեաց՝ որուն համար զքեզ մեծ-
ցուցի... ապրեցա՞յ ուրեմն, որ այդ նախատինքն,
այդ կեղտն իմ ճակատս շաղախէ... իսկ այդ
անարժան որդին կ'ապրի՞, առջևս կեցամ՞ է և իմ
սուրս կը յապաղէ՞ կարճելու այդ վնասակար
կեանքը... մի՞թէ, այդ նախատալից գործէն վերջը,
համբերեցի՞ց նկատել խաղաղութեամբ՝ իւր խայ-
տառակաբար պատժուիլը հրապարակաւ... ո՛չ.
ես չ'եմ ծնած այդպիսի որդի մը. մատնիչ մը,
դաւաճան մը հայ չ'է՛ և ոչ իմ որդիս:

ԱՐՏԱՒԱԶԻ

Հայր, անաւասիկ կեանքս քու ձեռքդ է:

ԱՐԳՈՒԱՐԻ

Լռէ՛, մի՛ յիշեր ինձ, ապերախտ, թէ անարժան
որդի մը ունիմ, թէ երկինք իրենց ցասման մէջ
տուած են զքեզ ի՞նչ ի պատիժ. լռէ՛, դու ալ

հայր չ'ունիս, այլ անողորելի դատաւոր մը,
անգուժ դահիճ մը. այո՛, քու կեանքդ իմ ձեռքս
է, և լաւագոյն է քեզ և ինձ՝ եթէ իմ ձեռքէս
սատկիս... մեռի՛ր ապա: (ստորը ձեռքը որպշոյն
վրայ կը դիմէ)

ԱՐՏԱՒԱԶԻ

Ահաւասիկ էմ, հայր... զարկ...
(Հրանտ և Արիարես վազերով ձեռքը կը բռնեն)

ԱՐԻԱԹԻՍ

Ի՞նչ կ'ընես, տէ՛ր իշխան...

ԱՐԳՈՒԱՐԻ

Թողէ՛ք զիս, որ պատժեմ դաւաճան մատնիչ
մը. թողէ՛ք՝ որ իջնայ դժոխոց մէջ, քանի որ
արեգակն իւր ոճիրը և իմ նախատինքս տե-
սած չ'է:

ՀՐԱՏՏ

Չափաւորէ՛ արդարացի ցասումդ, տէ՛ր իշխան.
մի՞թէ կ'ուզե՞ս պղծել հայրենեացդ ազատութեան
համար զինած ձեռքդ՝ մատնիչ մը արեամբն:

ԱՐԳՈՒԱՐԻ

Ահ, Հրանտ, մի՛ կրկներ լսելեացս այդ նա-
խատալից անունը. այդ անունն՝ դափնեօք ծած-
կեալ սպիտակ մազերս ամօթով կը խայտառակէ:

ԱՐԻԱԹԻՍ

Տէ՛ր իշխան, Արտաւազդ նախ և առաջ հայ-
րենեացն մեղաւ, ապա հայրենիքն է իւր դատա-
խազն և դատաւորն. ձերակոյտն իւր դատը պիտի
տեսնէ:

ԱՐԴՈՒԱՐԴ

Աղէ՛, փութացէ՛ք ապա. անհաւասիկ ես հոս
անհամբեր իւր վճռոյն կ'սպասեմ. ըսէք իրեն...
բայց լռեցէ՛ք, աղաչեմ, իւր անունը... ըսէք թէ
Հայաստան մատնիչ հրէշ մը իւր ծոցին մէջ կը
սնուցանէր, որուն Արդուարդ է առաջին դատաւ
խագն: Փութացէ՛ք, զի չ'եմ ժուժար՝ որ երկիրս
երկար ատեն իւր վրայ այդպիսի հրէշ մը կրէ:
(Հրանտ, Արիարես և գորքը կ'ելլան)

ՏԵՍԻԼ Ե.

ԱՐԴՈՒԱՐԴ, ԱՐՏԱՒԱԶԴ

ԱՐԴՈՒԱՐԴ

Ա՛հ, Նէոպաղոմէոս, կ'երանեմ ես քու բաղդը.
դու թշնամեացդ մէջ գրեզ ազատող մը կը գրտ-
նաս, երբ որդիս զիս կը դաւէ. մի՛ կարծեր որ
սա՛ գիշերս ինձմէ՛ աւելի քեզ աղէտալի եղաւ. մի՛
կարծեր որ այս ժամոյս դու քան զիս թշուա-
ռագոյն իցես. դու կ'ուզէիր հին քէնդ ինձմէ՛
հանել, բայց անհաւասիկ մէկն՝ որ վրէժդ տոկո-
սիւք ինձմէ՛ կը հանէ: Խնդա՛ ապա ապաստանիդ
մէջ, լսելով որ Արդուարդայ տունն այդպիսի
փնասակար և անպիտան շառաւիղ մը աշխարհք
բերած է: Ո՛հ, երիցս անիծեալ այն օրն, երբ իւր
ծնունդը ինձ աւետեցին. սա՛ է այն որդին, զոր,
անունս յաւերժացընելու դիտմամբ, ձեզնէ՛ պա-
ղատանօք խնդրեցի, ո՛վ դէք... Բնչ. միթէ՛ սա
հրէշն ինձմէ՛ սերեցաւ... չ'է՛, սա էակն ես չը-
գոյացուցի: Միթէ՛ քան զիս երանելի չ'է՞՞ մայրն
որ զինքն հայրենատեաց և մատնիչ չըտեսած՝ կա-
փոյց գաչան... ո՛հ, սուրբ կին, ի վախճանելդ
զիս կը յուսացընէիր իւր ապագային վրայ...

իցէ՛ թէ համբան մինչև ի գերեզմանիդ փոսն
իջնալով, չըքստմնեցուցանէր սրբազան ոսկերքդ:

ԱՐՏԱՒԱԶԴ

Տէ՛ր իմ, բոլոր կշտամբանացդ և արդարացի
սրտմտութեանդ արժանի է որդիդ, և միանգա-
մայն մեղապարտ իրեն կեանք տուող հայրենեացն
դէմ. իսկ եթէ համարձակիմ տկար ձայն մը
առջևդ հնչեցընելու, զիս արդարացնել և կամ
պատժէն խոյս տալ չ'է՛ միտքս, տէ՛ր, ո՛հ ո՛չ. վասն
զի մեռնելու գուցէ երբէք այդչափ փափաք չ'եմ
ունեցեր ինչպէս այսօր: Սակայն մեռնիլ այդ-
պիսի վատ անուն մը ճակատիս վրայ դրոշմած և
զլխատման բեմին վրայ տանել զլուխս անիծիւքդ
բեռնաւորած, ահա՛ այդ յիշատակութիւնն, տէ՛ր
իմ, մահուընէ շատ աւելի դժնդակ է ինձ:

ԱՐԴՈՒԱՐԴ

Կը կրկնեմ քեզ, հայրդ ալ որդի չ'ունի. կ'ա-
տեմ գրեզ, ապա և արժանի ես այդ մահուան:

ԱՐՏԱՒԱԶԴ

Ահա՛ այդ խօսքդ բիւր անգամ մահ է ինձ, իսկ
տապարն միայն խայտառակութեանս գործին
պիտի ըլլայ: Կանխագէտ էի բաղդէս, ի գուր
ճակատագրէս խոյս տալ ուզելով, այս առաւօտ
փորձեցի զրկել զիս ի կենաց, իսկ եթէ չըյաջո-
ղեցայ, ասոր համար չ'եմ ես յանցապարտ: Հե-
լէնէ՛ ձեռքս արգիլեց, որպէս զի հայր մը իւր
որդւոյն մահուամբն թշուառ չ'ըլլար. Հելէնէ՛
զիս ազատեց. չ'էր գիտեր խեղճն թէ՛ զժողովակ
ապագայ մ'ինձ կը պատրաստէր, ուստի և ա-
պրելու բռնադատուեցայ: Վկայ են ինձ երկինք,
երկինք որ սրտիս խորշերը կը քննեն, թէ՛ ամե-
նիկն հայրենիքս մատնել կամ դաւաճանել միտ-

քէս անցած չ'էր. իսկ եթէ յանցանք մը գործեցի,
պատճառն ապրիլս է, անարդար և անգութ
վճռոյն չըժուժալով սրտիս ձայնին լսելս է: Այո՛,
կը խոստովանիմ քեզ այսօր, հայր, գաղտնիք
մը, զոր գուցէ դու ալ կը կասկածէիր, զոր մինչև
հիմայ քենէ լռեցի, բայց այսօր կը խոստովա-
նիմ տիեզերաց առջև, թէ կը սիրեմ զՀելէնէ:

ԱՐԳՈՒԱՐԳ

Ի՞նչ կը լսեմ... դու զինքն կը սիրէիր... այ
վատ արանց, ջատագովութիւնդ անգամ ահա-
ւոր եղեռն մ'է... դու զինքն կը սիրէիր կ'ըսես...
բայց չ'եմ հաւտար... այո՛, կը կասկածէի, սա-
կայն տղայական և բարեկամական յարումն մը
կարծելով, երբէք չ'էի հաւտար, թէ պարտքդ
մոռնալու չափ պիտի սիրես թշնամոյ մը դուս-
տրը:

ԱՐՏԱՒԱՅԳ

Գիտցիր ապա, որ այդ սէրն կարծածէդ շատ
աւելի բուռն էր, Հայր. ո՞հ ներէ՛ որ մեռնելէս
առաջ կարենամ առանց սրտմտութիւնդ վրաս
չարժեւու, հնչել անգամ մ'ալ սա քաղցր անու-
նը... այո՛, կը սիրեմ զՀելէնէ... այդ սէրն զիս
մոլորեցուց, այդ սէրն գուցէ չափազանց գութ
ազդելով, մոռցընել տուաւ ինձ իմ պարտքս,
սակայն միթէ կրնայի՞ դիմադրել ես տկար մահ-
կանացու մը՝ ճակատագրին... այո՛, կը սիրեմ
զինքն... մի՛ հարցըներ, թէ ե՞րբ սա մահացու
սէրն սրտիս մէջ ծնաւ, մի՛ հարցըներ դարձեալ՝
թէ որ աստիճանն զինքն կը սիրեմ: Ահաւասիկ
մինչև ուր հասուց զիս այդ սէրն. չ'եմ գանգա-
ւոր, գուարթ եմ և ուրախ մանաւանդ, մինչև
յօժարութեամբ դէպ ի գլխատման բեմն պիտի
վազեմ:

ԱՐԳՈՒԱՐԳ

Տեսէք, որ աստիճանն սա խօլ սէրն զինքն կու-
րացուցած է, մինչև խայտառակութեամբ հրա-
պարակաւ գլխատուիլն իրեն պարծանք կը սեպէ,
ուր և խնդութեամբ կը վազէ... բայց միթէ չ'էս
տեսներ խելացնոր, թէ ժամուան մը մէջ փառք,
պատիւ և անուն միանգամայն փճացուցիր, ու
հայրդ տիղմին մէջ թաւալեցիր. յետագայ դարք
ալ անիծիւք պիտի յիշեն քու անունդ, իսկ
մայրերն ալ չի պիտի ուզենան զայն տալ իրենց
որդուց... երբ մէկն այդ աստիճան կը կուրնայ,
լաւագոյն էր իրեն դահճին տապարիւն չ'սպասե-
լով ինքնիրենն իշնալ ի գերեզման... այլ ո՞չ,
չեմ կրնար հաւտալ այդչափ կուրութեան:

ԱՐՏԱՒԱՅԳ

Ո՛հ, հաւտա՛ ինձ, անկեղծ է խոստովանութիւնս.
միթէ մարթ իցէ ինձ ստել, երբ յաւիտենակա-
նութիւնն առջևս բացուելու վրայ է... կը սի-
րեմ զՀելէնէ. երկիրք վկայ են սիրոյս, երկիրք
որ բիւր անգամ լսող եղան սիրոյ երդմանցս:
Ո՛հ, քանի՛ քանի անգամ մօրս գերեզմանին վրայ
ի ծուր իջեալ և իւր սրբազան հոգին ինձ վկայ
կոչելով՝ երդուընցայ իրեն սէր մշտնջենաւոր և
անխարդախ հաւատարմութիւն: Միթէ մարթ էր
ինձ ենթադրել յայնժամ, թէ այդպիսի խիստ
վճիռ մը զՄակեդոնացիս ի մահ պիտի դատա-
պարտէր, միթէ մարթ էր ինձ գուշակել, թէ նոյն
վճիռն զիս ալ դահճի՞ պիտի ընտրէր Հելէնայ և
իւր հօրն: Ո՛հ, ի՞նչ անհնարին պաշտօն կը պա-
հանջէր ինձմէ՞ ծերակոյտն, ինչո՞ւ յայնժամ հայ-
րենիք իմ կեանքս ինձմէ՞ չըխնդրեց, զոր զօհելու
պատրաստ էի. այն ատեն դեռ սուրբ էր սա
կեանքս, բիծ մ'ալ արատած չ'էր իմ անունս.
անս այսօր ալ պիտի մեռնիմ, սակայն կեանքս
այսօր թշուառականի և մատնչի մը կեանքն է.

կեանք մ'որ ժամուան մը մէջ լեցունեցաւ անլուր եղեռամբ: Ապա թո՛ղ, Հայր, որ այդ վատ արիւնն թափի, որպէս զի նախահարցս և քու փառքդ անարատ մնան: Դո՛ւ ալ ստիպէ՛ զծերակոյտն, որպէս զի ժամ մ'առաջ վճիռս փութացընէ. եթէ վայրկեան մ'ալ ապրիմ, այդ քիչ միջոցս ալ կը բաւէ ստուեր մը ձգելու քու փառաւոր կեանքիդ վրայ: Միայն շնորհք մը քենէ կը խնդրեմ, ո՛հ, անկարելի է որ այդ շնորհքը ինձ զլանաս, վասն զի սուրբ է մահապարտի մը վերջին խընդիրքն. միայն շնորհք մը, տէ՛ր իմ, կը խնդրեմ որ թոյլ տաս ինձ մինչև ի մեռնելու վայրկեանս, զքեզ կոչել սիրելի Հայր իմ:

ԱՐԴՈՒԱՐԻ

Ալ տարակոյտ չըկայ, գիրար կը սիրէին... իսկ ես կը տեսնէի այդ սէրը առանց կասկածելու. թերևս թո՛յլ ալ կու տայի և կը դիւրացընէի իրարու երեսանալու միջոցները... բայց այդ մտերմութիւնը պարզ բարեկամական սէր մը ես կը կարծէի. բնաւ չ'էի հաւտար, թէ այդ իրարու հակառակ և ոսոխ արեան մէջ այդպիսի բուռն սէր մը պիտի ծնանէր: Ա՛հ Հելէնէ, մօրդ վրէժը չարաչար դու ինձմէ կը հանես, զորդիս այսօր ձեռքէս յափըշտակելով... սակայն իմօ է յանցանքն. ինչո՞ւ քեզի համար ակամայ գութ և համակրութիւն զգացի փոխանակ ատելութեան... ինչո՞ւ և զայն որդւոյս չըթեւադրեցի... այլ ծանրագոյն և աւելի դժնդակ պիտի ըլլայ այսօր վիշտդ, երբ սիրականիդ մահը պիտի լսես:

ՏԵՍԻԼ Զ.

ԱՐԴՈՒԱՐԻ, ԱՐՏԱՒԱԶԴ, ՀՐԱՆՏ

ԵՒ ՀԱՅ ԶՕՐԱԿԱՆՔ

ՀՐԱՆՏ

Տէ՛ր իշխան, ծերակոյտին հրամանաւն զԱրտաւազդ ի բանտ պիտի տանիմ:

ԱՐԴՈՒԱՐԻ

Կը թողում գինքն ի ձեռս օրինաց և արդարութեան. օ՛ն, շուտ հեռացուցէ՛ր գինքն աչացս առջևէն: (Հրակոյտին ակեարկոչքեամբը, զիւնչորը շիրաներով Արտաւազդին ձեռքը կը կապէն)

ԱՐՏԱՒԱԶԴ (Երկերու առեկ)

Ողջամբ մնաս, Հայր... կ'օրհնեմ զքեզ: (Կ'երկան)

ՏԵՍԻԼ Է.

ԱՐԴՈՒԱՐԻ (առանձին և պահ մը լռութենէ վերջը)

Այո՛, պարտքս կատարեցի. յանցաւորն, մատնիչն պէտք է որ պատժուի... սակայն ի՞նչ բան սիրտս կը խոռվէ... ի՞նչ, իմ զաւակս է, որ այդպէս շղթայակապ առջևէս կը քարչեն... ա՛հ, թշուառ հայր, օրուան մը մէջ վերջին աստիճանի երջանկութենէ՛ յետին թշուառութեան մէջ կը զլորիս: Դեռ քիչ մը առաջ ամէն բերան կ'երանէր այնպիսի որդւոյ մը հայր ըլլալս.

այսօր նոյն բերաններն զիս կ'անիծեն՝ վասն զի հայրենեաց մատնիչ մը ծնած եմ. ինքն արժանի է մահուան, սակայն հայրն դեռ բաւական զինքն չ'ատեր: Իսկ ինչո՞ւ զթուլթեան մնացորդ մը զգալ այնպիսի որդւոյ մը համար, որ իմ անուանս և ազգատոհմիս վրայ այդպիսի անեղծանելի կեղտ մը նետեց... Թող մեռնի՛ ապա: Սակայն կատարելապէս ատելու համար կ'ուզէի զինքն աւելի յանդուգն, աւելի նուազ համեստ և շնորհաշուք տեսնել: Սա անտրտունջ հնազանդութիւնն, մեկնելու ատեն ինձ ձգած անուշ նաշուածքն, սա տխուր հրաժեշտն... Ո՛հ, բռնի սիրտս խռովեց. ակամայ զգացի սրտիս խորին մէջ, թէ տակաւին հայր եմ... Իսկ ինչո՞ւ բնուածիւնն հայրենասիրութեանս չըպատասխաներ... Երկար թիւերս թիւերս զիս զրկելու համար բացուելու կը պատրաստուէին, զթուլթեան խօսք մը շրթունքս բանալու կը ճգնէր, արտօնւնք զաչս իմ քողարկեցին... Երջանիկ եմ որ զիս զսպելու յաջողեցայ. սակայն այժմ որ ինքն հոս չ'է, այժմ որ շղթայակապ խաւարչտին բանտին մէջ ձգուած է մահուան վճռոյն սպասելով, այժմ որ ինքն չըկըրնար իմ արտօնւնքս տեսնել և հառաչանքս լսել, կրնամ թոյլ տալ սրտիս հառաչանաց: Ո՛հ, սիրուն որդի, կենացս լոյսն. ինչո՞ւ այդ աղիտաբեր սէրն զքեզ մոլորեցուց, չըմտա՞ծեցիր բնաւ, թէ հայր մը ունէիր և հայրենիք մը: Գերեզմանիդ մէջ զիս ալ հետդ պիտի քարշես. վաղը հոն մատնիչ որդին իւր հայրենասէր հօրն հետ պիտի պառկի. թող աշխարհք ուզածին պէս զմեզ դատէ. գերեզմանն շատ աւելի հիւրասէր է, զի ընդհանուր հայրենիքն է ամենեցուն: Ո՛հ, որդեակ իմ Արտաւազդ, եթէ սա հառաչանքս բանտիդ պատերը թափանցելով, կարենային մինչև քեզ հասնել, և հոն խշտեակիդ վրայ քեզ կարենային ըսել, թէ հայրդ միշտ զքեզ կը սիրէ... ոտնաձայն մը կը լսեմ. ո՞վ հոս կը մօտենայ:

ՏԵՍԻԼ Ը.

ԱՐԴՈՒԱՐԴ, ԱՐԻԱԹԷՍ

ԱՐԻԱԹԷՍ

Տէ՛ր իշխան, ի՞նչ կ'ընես հոս առանձին. չըլսեցիր, թէ Մակեդոնացիք Արմաւիրի պարսպաց վրայ յարձակած են:

ԱՐԴՈՒԱՐԴ

Մակեդոնացիք...

ԱՐԻԱԹԷՍ

Այո՛. Ամինթէս ստուար բանակաւ մը զԱրմաւիր պաշարած է. արդէն իւր զօրքն մեր Հայոց հետ կը պատերազմին, ուստի քու ներկայութիւնդ հարկաւոր է այդ վտանգաւոր ժամանակիս մէջ. նա զի ձերակոյտն քեզ յանձնած է Հայաստանի ազատութեան պաշտպանութեան հետ և բանակին առաջնորդութիւնը:

ԱՐԴՈՒԱՐԴ

Հայրենիք վտանգի մէջ էն ուրեմն... ա՛հ, իւր վտանգն մոռցընել կու տայ ինձ ամէն ցաւ և օտար զգացմունք: (կ'ըլլան)

Հ Ա Ն Դ Է Ս Զ Ո Ր Ր Ո Ր Դ

ՏԵՍԻԼ Ա.

(Արդարադատ ասպարանը)

ԱՐԴՈՒԱՐԴ (առանձին)

Ահաւասիկ, այս երկրորդ անգամ Հայաստանի մէջ ձեռքովս իւր գերութեան շղթայքը կը խորտակէ. այս երկրորդ անգամ սա բազուկս գՄակեղոնացիս յաղթելով, կոր ի գլուխ Հայաստանէն կը հալածէ: Ամէն բերան «կեցցէ՛ մեր հայրենեաց ազատիչն, կեցցէ՛ հայրն հայրենեաց» կը կանչէ. հայր... այո, խիտ թշուառ հայր մը եմ ես: Սա ձեռքս հզօր և ահաւոր՝ օտարաց դէմ, բարերար և պաշտպան հայրենեացս, ինձ միայն տկար և ապերախտ կը գտնուի: Ո՛հ, ինչ դժբաղդ ճակատագիր. միթէ՛ լաւագոյն չ'է՛ր ինձ, եթէ Աղէքսանդրի ձեռքէն կարելէ՛ր՝ Վահէին և այնչափ քաջաց հետ՝ պատերազմի դաշտին վրայ ննչի: Ապրեցայ ուրեմն, որ սա սև օրս տեսնեմ. օ՛ր երանաւէտ ամենեցուն, ինձ միայն մահաբեր: Այս օրուան յաղթութեամբս հայրենիքս կ'ազատեմ, իւր հարցն ազատութիւնը դարձեալ իրեն կը պարզեմ և անբաւական եմ ապրեցընելու զորդիս: Նա զի և հայրենիք կը պահանջեն որ իւր ազատիչն որդին մեռնի խայտառակութեամբ՝ իբրև մատնիչ և դաւաճան հայրենեաց: Ո՛, ապերախտ Հայաստան, այդպէս բարերարքդ կը վարձատրես. մէկ ձեռքովդ ճակատս մրտենեօք կը պսակես, մինչդեռ միւսովդ որդւոյս մահը վճռելու կը պատրաստուիս. հայրը կը վարձատրես

զորդին ի մահ դատապարտելով: Իսկ երբ որդիքդ այսօր խնդութեան տօն մը կը կատարեն, կը պահանջե՞ս որ իրենց ուրախութեան հեղինակն միայն հեծէ: Արդուարդայ սիրտէն միայն ուրեմն հառաչանք և ողբք պիտի բղխին: Արտաւազդ շղթայակապ իւր մահուանը կը սպասէ, իսկ հայրն ալ հոս պալատիս մէջ իւր բաղդն անիծելով գերեզման մը կը փնտռէ: Միթէ՛ մինչև հիմայ հայրենեացս համար թափած արիւնս չի՞ պիտի կարենայ գնել որդւոյս քանի մը կաթիլ արիւնը. եթէ երիտասարդ տարիքն, եթէ սէրն անգամ մը զինքն մոլորեցուց, կրնայ իւր յանցանքը քաւել պատերազմի դաշտին վրայ մեռնելով հայրենեացն համար... Ո՛հ, մի տարակուսիք, իմ որդիս է Արտաւազդ, նա զի շատ անգամ դժուար փորձն առած ես, ո՛ հայաստան: Սակայն այդ մահն անհանդուրժելի է. չ'եմ զիտեր մինչև որ աստիճան հայրենասիրութիւնս այդ նախատալից ապերախտութեան պիտի համբերէ. այլ կ'ըզամ որ սրտիս խորէն ձայն մը ձերակուտին խտտութեան դէմ կը բողոքէ և որդւոյս պաշտպանութեան դիմելու զիս կը զրգռէ: Բողորովի հայրենասէր ըլլալու համար միթէ՛ պէտք է որ որդեսպան ըլլամ այսօր...: Ի՛նչ կ'ըսեմ... ես որ ի ծնընդենէս ի վեր հայրենեացս նուիրած եմ կեանքս, բազուկս, կամքս, մինչև հօգիս ալ. միթէ՛ կրնամ Հայաստանի առջև վտարանշուժեան օրինակ մը տալ. միթէ՛ կրնամ տիեզերաց առջև պաշտպանել մատնիչ դաւաճան մը... սակայն ի՛նչ էր իւր յանցանքն, Հայաստանի ազատութեանն համար միթէ՛ հարկ էր չեղէնէի մահն... չեղէնէ՛ զոր, կ'ըսէր, թէ կեանքէն աւելի սիրած էր, չեղէնէ՛... Արտաւազդ...

ՏԵՍԻԼ Բ:

ԱՐԳՈՒԱՐԳ, ՀԵԼԷՆԵ

ՀԵԼԷՆԵ (Ժպտեալ զինչորակիս զգետով, տէր մէջքը և սաղաւարտ ի գրոշխն յամբարսյ ճերս կր մտնայ)

ԱՐԳՈՒԱՐԳ

Ո՞վ էս դու, յանդուզն երիտասարդ, որ առանց մասնաւոր հրամանիս հոս կը մտնենաս: (մեկուշի) կարծեմ ճաչնալ սա դէմքը:

ՀԵԼԷՆԵ

Ի՞նչ, միթէ այդչափ քիչ միջոց բաւեց ուրեմն մոռցընել տալ քեզ, ի պգտիկուց ի վեր քովդ մեծցած և որդւոյդ հետ սնած Հելէնէն:

ԱՐԳՈՒԱՐԳ

Հելէնէ՞... ո՞վ դիք...: (խոյս տալ կը խնդրէ)

ՀԵԼԷՆԵ

Կեցիր, տէր իշխան. ի՞նչ, միթէ տկար օրիորդի մը առջև խոյս պիտի տաս դո՛ւ, որ քիչ մ'առաջ սուր ի ձեռին հոս կատաղութեամբ վազեցիր. որպէս զի հօրս և իմ հոգիս ալ մօրս ստուերին միացընես...

ԱՐԳՈՒԱՐԳ

Ապա ի՞նչ կը խնդրես ինձմէ:

ՀԵԼԷՆԵ

Ապահով եղիր, տէր իշխան. մի՛ կարծեր որ

սա սուրն վրէժխնդրութեանս համար մէջքէս կախուած է, ո՛չ. թէ և իրաւունք ունենամ զայն թաթխելու մօրս դաւաճանին արեան մէջ, սա կայն անհնար է ինձ ծակել Արտաւազգայ հօրն սիրտը. իսկ և ոչ զայս իմ պաշտպանութեանս համար պիտի գործածեմ, մինչդեռ կենացս լոյսն կիսով չափ խաւարած է. երբ հայրս իւր կենաց վրայ կը դողայ, և երբ Արտաւազգ իւր մահուան վճռոյն բանտին մէջ կ'սպասէ: Ապա սա երկաթը որդւոյդ և ինձ համար կը պահեմ. իրեն պիտի ընծայեմ սա սուրը, երբ տեսնեմ որ խայտառակ մահուանէ ազատելու ալ յոյս և հնարք չ'ունի. իսկ վերջը իւր արեամբն ծխող երկաթը ի սիրտ իմ դարձընելով...

ԱՐԳՈՒԱՐԳ

Բայց գուցէ ժամանակ չի պիտի ունենաս, որ այդ խորհուրդդ կատարես. վասն զի դու ալ արդէն դատապարտուած ես, թշուա՛ն օրիորդ... ո՞վ դիք, եթէ մէկն յանկարծ գքեզ հոս տեսնէ, վերջին օրդ հասած է... զի բոլոր զօրութեամբս ալ գքեզ կարող չ'եմ պաշտպանելու... այլ և ի՞նչ կը պահանջես, միթէ կ'ուզե՛ս որ ես ալ Հայաստանի առջև մատնիչ և դաւաճան երևամ... իսկ դու ալ ի՞նչպէս հոս մօտենալու կը յանդգնիս. հայրենատեաց և մատնիչ չ'ըլլալու համար քու արիւնդ ալ թափելու բռնադատուած եմ, թէ պէտե կիտեմ որ անմեղ ես դու. չըլտեցիր որ քու պատճառաւդ նաև որդիս պիտի մեռնի. հայրենեացս սիրոյն համար իրեն ալ չ'եմ խնայեր. գուցէ քու արիւնդ կրնայ ազատել իւր կեանքը:

ՀԵԼԷՆԵ

Ուրեմն ինչո՞ւ կը դանդաղիս, մեռցո՛ւր զի որպէս զի Արտաւազգ ասորի. զայս կը փափաքիմ ես և զայս կը պահանջեմ յանուն քու

հայրենասիրութեանդ. բնաւ փոյթդ չ'ըլլայ իմ մահս. կը կարծես որ Արտաւազդ մեռնելէն վերջը՝ կ'ապրի՞ Հելէնէ... մեր երկուքին հոգին ալ մի է. մէկ շունչ, մէկ կեանք մը ունիմք, իրարու համար միայն կ'ապրէինք: Այսօր կը թողուս, հայր անգութ, որ որդիդ զրկուի իւր արևէն. իսկ արդ կը կրկնեմ քեզ, իւր մահն է իմ գերեզմանս պիտի փորէ, ո՛ւր հայրս ալ իմ ետեւէս պիտի իջնայ: Խնդա՛ ապա, ուրախ լեր, զի հայրենասէր և անգութ մնալովդ փափաքիդ ալ կը հասնիս, այդպէս միանգամայն փճացընելով թէ՛ Նէոպոլոն մէոսի և թէ՛ քու ճեղք: Ա՛հ, կը հարցընես ինձ թէ՛ ի՞նչ գործի համար հոս եկած եմ, լսէ՛ ուրեմն. Ապաստանիս խորէն ելնելով գրեզ կը փնտռէի, տէ՛ր իշխան, որպէս զի զԱրտաւազդ ազատելու միջոց մը գտնանք. սա ծպտեալ զգետտովս, առանց կասկած մ'ալ տալու, անցայ մեր դահճաց մէջէն, ու հոս մօտենալուս լսեցի քու հառաչանքդ և ողբդ. կարծեցի որ վերջապէս հայրական սիրտդ կը ճմլէր մեր վշտաց վրայ, կարծեցի թէ՛ որդիդ ազատելու դո՛ւ ալ կը փափաքէիր, ուստի վազեցի խնդութեամբ սրտի գրեզ աղաչելու, որ անապարես ժամանակ չըկորսնցընելով... սա կայն կը տեսնեմ որ խաբուած եմ. զի գրեզ աւելի անգութ և անողորբելի գտնամ: Ի՛նչ անաւոր հայրենասիրութիւն, որ սրտիդ մէջ ամէն զգացմունք մինչև զընութիւնն անգամ մեռցընելով, կը պահանջէ որ խաղաղ աչօք տեսնես որդւոյդ նախատալից մահը: Բայց ինչո՞ւ օտար ձեռաց կը յանձնես այդ փափուկ և փառաւոր պաշտօնը. միթէ՛ չ'ես ըլլար աւելի եռանդոտ հայրենասէր, եթէ՛ դո՛ւ անձամբ իրեն դահիճ ըլլաս. ի՛նչ, միթէ՛ տապարն պիտի դողացընէ՞՞ սա ձեռքդ՝ որ մինչև հիմայ զինքն շոյելով և գգուելով մեծցուցին. սա ձեռքդ որ զինքն շրթանցդ մօտեցընելով բիւր համբոյրներովդ ծածկած ես, սա ձեռքդ որով զինքն դէպ ի յերկիրն բարձրացը-

նելով, երկար կեանք և երջանիկ ապագայ մը իրեն մաղթած ես...

ԱՐԴՈՒԱՐԴ

Ա՛հ, ինչե՛ր կը յիշեցընես... փախիր, Հելէնէ, փախիր, թող զիս առանձին. սրտիս բուռն վըշտացն վրայ մի՛ աւելցընէր և գյուտահատութիւն... Ա՛հ, եթէ՛ մէյմը սրտիս խորին մէջ իջնայիր... սակայն անգօր եմ ես, զինքն ի ձեռն հայրենեաց և օրինաց յանձնած եմ: Փախիր Հելէնէ, մի՛ բռնադատեր զիս, որ ակամայ եղեռնագործ ըլլամ. կը կրկնեմ քեզ, եթէ՛ մէկն գրեզ հոս տեսնէ, ամէն զգացմունք և գութ լռեցընելով, պարտաւորուած եմ փճացընելու, ինչպէս որ ըսիր, Նէոպոլոն մէոսի ճեղք. զայս խոտացայ ծերակուտին, զայս և՛ դից երգուընցայ:

ՀԵԼԵՆԵ

Ա՛յդ է ուրեմն վերջին պատասխանդ:

ԱՐԴՈՒԱՐԴ

Ի՛նչ կը խնդրես որ ընեմ. գտիր ինձ զինքն պատուով ազատելու միջոց մը, առ այս ես ալ կը յօժարիմ, ես ալ կը փափաքիմ:

ՀԵԼԵՆԵ

Ես ունիմ այդ միջոցը:

ԱՐԴՈՒԱՐԴ

Ի՛նչ, դո՛ւ ունիս այդ միջոցը... ա՛հ, լսէ՛ շուտ, կեանքս դարձեալ ինձ կը պարգևես:

ՀԵԼԵՆԵ

Չափաւորէ՛ խնդութիւնդ, տէ՛ր իշխան, անաւատիկ. (տաշրը ցոցըր(նկոյ) չ'ես յիշեր, որ քեզ

ըսի, թէ երբ իւր մահը անհրաժեշտ տեսնեմ, սա սուրբ իրեն պիտի ընծայէի. այո՛, սա երկաթը զինքն խայտառակ մահուընէ մը պիտի ազատէ, երբ անգոր է հայրն. սա երկաթն պատուաւոր մահ մը իրեն պիտի տայ, եթէ ոչ փառաւոր. իսկ նոյն հարուածն զիս, զինքն և հայրս գերեզմանի մէջ պիտի իջեցընէ, ի դերև հանելով ծերակուտին տալու վճիռը... բայց իրեսիդ գոյնն կը նետէ՞...

ԱՐԴՈՒԱՐԴ

Ա՛հ... ուրեմն դ՛ու զինքն պիտի տեսնես այսօր... սակայն Արտաւազգ բանտի մէջ է:

Հեկէնէ

Այո՛, զինքն պիտի տեսնեմ... սակայն և չ'եմ ծածկեր քենէ մեր ապաստանը. սնոտի՛ զգուշութիւն, վասն զի այժմ մահն է ի ձեռս մեր, այլ և ապրելու բնաւ ախորժ չ'ունիմք, երբ մեր ազատիչն ի մահ պիտի մատնուի: Դ՛ու ալ գիտես կնոջդ շիրմին մօտ Հայոց թագաւորաց ստորեկրեայ գերեզմանքն, որ և գաղտնի անցքով մը պալատիս բանտերուն հետ հաղորդակցութիւն ունին...

ԱՐԴՈՒԱՐԴ

Ուրեմն, գերեզմանաց մէջ պահուրտած էք:

Հեկէնէ

Ի՛նչ կը խնդրես. ձեր հարց գերեզմանքն զմեզ պաշտպանեցին, երբ իրենց որդիքն զմեզ կը հալածէին. ուստի հոն ծերակուտին որոշմանն պիտի սպասենք. նա զի և պահապանքն մեր կողմն են. եթէ ծերակոյտն Արտաւազգայ մահը վճոէ...

ԱՐԴՈՒԱՐԴ

Կը հասկընամ միտքդ... ո՛վ դեք... Հեկէնէ, տներ ինձ սա երկաթը. սա սուրն բոլոր Մահեղոնացոց բանակէն, զոր յաղթեցի այսօր, ահաւոր է ինձ ի ձեռս քո:

Հեկէնէ

Անկարելի է... եթէ զիս բռնադատես, զայն իմ արեամբս ներկուած պիտի առնուս. իսկ յայնժամ Արտաւազգ ալ իւր զուլիսը շղթայիցն վրայ փշրելով՝ իւր կեանքը պիտի վճարէ. քու շահո՞ղ զմեզ իրարմէ զրկելը միայն պիտի ըլլայ: Այլ և ինչո՞ւ, միթէ ընտրելագոյն չ'է՞ որ Արտաւազգ բանտին մէջ զինքն սպաննէ, առանց որ հրապարակական խայտառակութեան նշաւակն ըլլայ... բայց կը հասկընամ միտքդ, անգու՛թ. կը փափաքիս որ Հայաստան այսօր գրեզ մատնանիչ ցուցընելով ըսէ՛. «Ահա Հայ մը, որ և իւր որդւոյն չըխնայեց». այլ մի՛ խաբուիր, պիտի զրկեմ գրեզ այդ փառաբանութենէ: Սակայն տէ՛ր իշխան, այդ սնոտի փառքն ի բաց թողլով, իջ՛ր մէյմը սրտիդ մէջ, մտածէ՛ թէ արդարև չ'ես ըլլար դահիճ անմեղաց, դահիճ և որդւոյդ... (պահ մը շտաբիւն. Արդուարդ մտատուսէջ. Հեկէնէ շարունակելով). Ո՛չ, ո՛չ. հայր չ'ես դու, փուճ տեղ կը խօսիմ: (մեկնելու շարժումներ կ'ընէ)

ԱՐԴՈՒԱՐԴ (գիւրքը արդիւելով)

Ա՛հ, կեցի՛ր օրիորդ... քու խօսքդ սրտիս գաղտնիքը բռնի կը խլեն. կը հաւատնս որ այնպիսի անգու՛թ հայր մ'ըլլամ, մինչև յօժարիմ խաղաղ և անկարեկիր աջօք՝ տեսնել որդւոյս նախատալից մահը. այն տապաւրն որ իւր կենաց թելը կտրելու կը պատրաստուի, Հեկէնէ, նոյն հարուածով իմ կեանքս ալ պիտի կտրէ: Ա՛հ,

հայրենեացս համար այսօր պատերազմելով,
բիւր անգամ զմահ քովս կանչեցի. բիւր անգամ
Մակեդոնացոց փաղանգներուն մէջ նետուելով
մահս խնդրեցի. աւանդ, դիք առաւել ևս անգութք
քան զծերակոյտն, առջևէս զմահ հալածելով՝ զիս
ապրեցուցին, որպէս զի սա սև օրս տեսնեմ:
Այ՛ս, Հելէնէ, այսօր մահս անձկանօք և բոլորով
սրտիւ մաղթեցի, և զոր ուրիշներուն իբրև պա-
տիժ կու տայի, չըկրցայ իբրև շնորհք յերկնից
ընդունել: Իսկ այժմ որ բովանդակ քաղաքն
յաղթութեանս նաւակատիքը կը կատարէ, և ազա-
տութիւնը խնդութեամբ կը տօնէ, գիտե՛ս, օրիորդ,
ի՞նչ գործի համար ես հոս առանձին կը թա-
փառիմ, ահա ըսեմ քեզ. ես հոս գերեզման մը
կը փնտռեմ: Արդարև, Արիաթէս իմ կողմանէս
կը ջանայ համոզելու զծերակոյտն, որ այդ վճիռը
խափանէ, սակայն չ'եմ գիտեր որչափ կրնամ
վստահիլ և յուսալ: Օրիորդ, կը յօժարի՞ն դու
ծառայութիւն մ'ինձ ընելու:

ՀԵԼԷՆԷ

Ի՞նչ տեսակ ծառայութիւն, տէ՛ր իշխան:

ԱՐԴՈՒԱՐԴ

Ստոյգ ըսիր երէկ, թէ ես տասը տարի առաջ
քու մայրդ սպանեցի:

ՀԵԼԷՆԷ

Աւանդ...

ԱՐԴՈՒԱՐԴ

Ես և՛ երեկ զիշեր սուր ի ձեռին՝ ի խուց քո
վագեցի, որպէս զի հայրդ սպանեմ, զոր կատեմ,
զքեզ ալ, անմեղ օրիորդ, զոր կը սիրեմ: Կը
տեսնես որ հրէշ մը եմ ես. իսկ այժմ հոս
վրէժխնդիր ձեռք մը կը փնտռեմ, որպէս զի զիս

տլ սատկեցընէ: Կ'ուզե՛ս, Հելէնէ, մօրդ վրէժը
հանել ինձմէ՛, ազատել հայրդ, զքեզ և զսիրականդ
միանգամայն, անաւասիկ եմ, զարկ, մի՛ վախեր,
չի պիտի պաշտպանեմ զիս, այլ խաղաղ կ'սպա-
սեմ. վարսէ՛ սա սուրդ ճիշդ սրտիս մէջ, խա-
ւարեցոր սաչացս սա արևը, իսկ ես ձեռքդ պիտի
օրհնեմ:

ՀԵԼԷՆԷ

Ի՞նչ, տէ՛ր իշխան, ի՞նչ ինձմէ կը պահանջես,
մխնձ ձեռքս Արտաւազդայ հօրն արեան մէջ...
տէ՛ր իմ, ես խեղճ օրիորդ մըն եմ. իմ սիրելիներս
ազատելու համար տկար արտոտնքս միայն կրնամ
զործածել. իսկ վրէժս առնուլ համար ներել
միայն գիտեմ... այլ և զիս չ'ե՛ս խաբեր... դո՛ւ
ալ ուրեմն, քու սիրտդ ալ ապա կը վտարանջէ
այն խիստ հրամանին դէմ... Ա՛հ կրկնէ՛ ինձ,
տէ՛ր իշխան, բոլորովին բռնաւոր և անգութ
չ'ե՛ս դու ապա... կը յիշե՛ս արդարև որդւոյ թշուա-
ռագոյնն, որ զքեզ իւր բանտին մէջ օրհնելով՝ իւր
մահուանն կ'սպասէ. անմեղ որդի մը, զոր այս
օր խայտառակութեամբ պիտի սպանեն... բայց
խօսէ՛...

ԱՐԴՈՒԱՐԴ

Լու՛է, խելացնոր օրիորդ. մի՛ բարձրացըներ
ձայնդ, կը մոռնաս թէ ուր ես... անաւասիկ
ուք հոս կը մօտենան. Արիաթէս ըլլալու է.
տեսնենք ինչ լուր կը բերէ ձերակոյտն... դու
առ այժմ մտի՛ր սա սենեկիս մէջ... վերջը զքեզ
կը կանչեմ:

ՀԵԼԷՆԷ (սենեակի մտնելու առեւեկ)

Ո՛վ դիք, դո՛ւք զինքն պաշտպանեցէք: (կը
մտնայ)

Տ Ե Ս Ի Լ Գ .

ԱՐԴՈՒԱՐԴ, ԵՒ ԱՊԱ ԱՐԻԱԹԷՍ

ԱՐԴՈՒԱՐԴ (մեկուսի)

Այո՛, իրաւունք ունի Հելէնէ՛, այո՛, անգուլթ
և անագորոյն հայր մըն եմ ես, կամ գոնէ զիտ
այդպէս կը կարծեն: Ա՛հ, թշուառ Արդուարդ,
այդպէս գրեզ կը ճանչնան: Արտաւազդ որդի
իմ՛, եթէ հայրենեացն սէրն քու ոսոխդ չ'ըլլար,
այսօր քու դատաւորդ, քու մահդ վճռող վազ-
րերն, քենէ առաջ գերեզմանի փոսին մէջ կ'իջ-
նային և այսօր սա ձեռօքս զԱրմաւիր բոցերու
մատնելով՝ իրենց ահագին խարոյկ մը կը կազ-
մէի: (Արիարես կը մտնենայ. Արդուարդ բարձր)
Արիաթէ՛ս, ի՛նչպէս մեկնեմ այդ ուշ դարձդ,
միթէ՛ աւետաբեր լուր մը, թէ՛ մահացու հա-
րուած մը հետդ կը բերես, արդէն թշուառու-
թեամբ վշտաբեկ հօր մը սրտին:

ԱՐԻԱԹԷՍ

Աւաղ, տէ՛ր իշխան, կ'ստիպուիմ հետդ միատեղ
հառաչելու:

ԱՐԴՈՒԱՐԴ

Կը սոսկամ... միթէ՛ ծերակոյտն կը զլանայ
ինձ այդ շնորհքը... պատասխանէ՛ շուտ, մէկէն
կ'ուզեմ չափել վշտացս անդունդը:

ԱՐԻԱԹԷՍ

Ծերակոյտն, տէ՛ր իշխան, կարող չ'է շնորհել
դաւանան մատնչի մը կեանքը, առ այս և օրէնք

կը հակառակին. ի վերայ այսօր ամենայնի քու
ծառայութեանցդ իբրև վարձք, իրեն ներելու
համար թոյլ կուտայ, որ Արտաւազդ զինքն ար-
գարացնէ՛ գնելով իւր յանցանքը:

ԱՐԴՈՒԱՐԴ

Գնելով իւր յանցանքը... ինչպէս... մեկնէ՛
միտդ:

ԱՐԻԱԹԷՍ

Ծերակոյտն, որպէս զի Արտաւազդ ապրի, պայ-
ման մը կ'առաջարկէ:

ԱՐԴՈՒԱՐԴ

Ինչպիսի՞ պայման:

ԱՐԻԱԹԷՍ

Յոյրը Հայաստան և մասնաւորապէս ծերա-
կոյտն այսօր ստոյգ գիտէ, թէ՛ Նէոպտղոմէոս
և Հելէնէ՛ հոս սա պալատիս մէջ պահոււրած
են. իւր խուզարկութիւնն մինչև հիմայ անօգուտ
եղաւ: Արտաւազդ գիտէ անշուշտ անոնց գաղտնի
ապաստանը. ուրեմն ծերակոյտն ի շնորհս քո
զիջանելով. կը պահանջէ որ իւր մատնիչ չ'ըլ-
լալը հայրենեաց ապացուցանելու համար, սա
Մակեդոնացւոց մէկը յանձնէ ի ձեռս իւր. մէկը
միայն, իսկ զընտրութիւնն իրեն կը թողու:
Ուստի թէ՛ որ Արտաւազդ յանձն առնու և խոս-
տանայ մինչև ի վաղիւն մատնել զՆէոպտղոմէոս
և կամ զՀելէնէ՛, պիտի ապրի. ապա թէ՛ ոչ,
այսօր, գիշեր չ'եղած, իւր գլուխն հրապարակաւ
պիտի իյնայ:

ԱՐԴՈՒԱՐԴ

Ինչպիսի՛ խիտ և դժնդակ պայման, կրկին

մատնութեամբ մը գնե՞լ իւր առաջին մատնու-
թիւնը... գայտ կը պահանջէ, ըսիր, ծերակոյտն,
այնպէս չ'է՞... ա՞յդչափ վատ կը կարծէ ուրեմն
Արդուարդայ որդին... հայրենիք ա՛լ ազատ են
այսօր, ի՛նչ հարկ դարձեալ արիւն թափելու...
դարձե՛ալ արիւն, դարձե՛ալ մատնութիւն մը...
երբէ՛ք: Ես կը ճանչնամ զԱրտաւազը և զիտեմ
ալ որ բնաւ յանձն չի պիտի առնու այդպիսի
պայման մը:

ԱՐԻԱԹԷՍ

Չայտ ես ալ յառաջագոյն կը գուշակէի և ասոր
համար ահա հոս գալուս գրեթէ յուսահատած
էի իւր փրկութենէն: Սակայն կարծեմ ալ որ
ծերակոյտին պայմանն բոլորովին անարդար
պահանջք մը չ'է և Արտաւազը կրնայ գայն կա-
տարել առանց արատելու իւր և քու պատիւը:

ԱՐԻԱԹԷՍ

Ի՞նչպէս...

ԱՐԻԱԹԷՍ

Վասն զի Արտաւազը անտարակոյտ զՀելէնէ,
իւր սրտին սիրած օրիորդը, ազատելով, անոր
վրիժապարտ հայրը պիտի մատնէ, զոր Հայաս-
տան կ'ատէ, զոր և դու կը դատապարտես. իսկ
Հելէնէ անմեղ է, զոր դու ալ կը սիրես, և անպարտ
ըլլալուն Հայաստան ալ կը վկայէ: Ծերակոյտն՝
զընտրութիւնը որդւոյդ թողով, անշուշտ կը փա-
փաքի չըպատժել անմեղ մը մեղապարտին հետ:
Այլ և, տէ՛ր իշխան, եթէ՛ սրտիդ ձայնին լսելով,
որ ի պաշտպանութիւն որդւոյդ կը խօսի, եթէ
դու ալ զինքն բռնադատելի կատարելու ձեռա-
կուտին պահանջուածքը, մատնելով ի ձեռս հայ-
րենեաց իւր ահաւոր թշնամին...

ԱՐԻԱԹԷՍ

Լռէ՛, մի՛ երկրորդեր ըսածդ... Բայց դու Հայ
չ'ես, ապա զքեզ չ'եմ մեղադրեր. այլ լսէ՛ զիս-
այո՛, կ'ատեմ զՆէոպտղոմէոս, կ'ուզեմ ալ որ
մեռնի, այլ զիտեմ նաև որ Արտաւազը յանձն
չի պիտի առնու մատնել Հելէնէի հայրը. ի՛նչ,
ե՞ս զինքն առ այս բռնադատեմ... քա՛ւ մի՛ լիցի.
այլ և եթէ ինքն յօժարի, ես կը հակառակիմ.
ինձ մատնչի մը կեանք պէտք չ'է. յայնժամ իմ
ձեռքս պիտի փութայ բռնալու երկրիս վրայէն
այնպիսի հրէշ մը: Գուցէ ներելի էր իւր առաջին
մատնութիւնն, որովհետև սիրելոյն կեանքը
պիտի ազատէր. սակայն այդպիսի վատութիւն
մը ի գործ դնել, մահուընէ խոյս տալու նպա-
տակաւ, երբէ՛ք ներելի: Գարձեալ ստոյգ եմ, որ
Արտաւազը այդ պայմանաւ տանալու կեանքը
կ'արհամարհէ և կը մերժէ... ապա ընտրելագոյն
է իւր մահն... թող մեռնի:

ԱՐԻԱԹԷՍ

Կը խաբուեմ արդեօք, տէ՛ր իշխան, թերևս
սխալ լսեցի. վասն զի եթէ հաւատամ լսածիս,
ործեմ որ դու ալ զՆէոպտղոմէոս կը պաշտպա-
նես, մինչև կը նախադասես որդւոյդ մահը...
ինձ չ'է պատշաճ ըսածիդ վրայ զքեզ անդրա-
դարձընել և կամ հայրենասիրութեան դատ տալ
Արդուարդայ. վասն զի քու համբաւդ աշխար-
հածանօթ է. սակայն զԱրտաւազը զոհե՞լ, որպէս
զի թշնամիդ պաշտպանես... այդ անհաւատալի
էր: Ի՞նչ պիտի ըսէ այսօր Հայաստան և կա-
պողովկիայ քու դաշնակիցդ... իսկ սա ձեռքդ
զոր մինչև հիմայ հայրենեաց թշնամիքը հալա-
ծելու և պատժելու գործածեցիր, սա ձեռքդ որ
այսօր ազատութեան դրօշակը բարձրացուց,
հիմայ զիրենք իւր պաշտպանութեանն տակ պիտի
առնու: Մտածէ՛ որ Նէոպտղոմէոսի կեանքն վնա-

օսկար է Հայաստանի, և թէ քեզի դէմ յագեցընելու մասնաւոր ոխ մ'ունի. նաև յիշէ՛ զի եթէ Արտաւազդ այսօր մեռնի, իբրև դաւաճան և մատնիչ պիտի սեպուի, իսկ իւր արիւնէն ժայթքած կաթիլներն, մինչև քու ճակատդ պճնող դափնիները պիտի արատեն: Կը հաւանիս որ այն յողթական կամարին վրայ, զոր հայրենիք քու յիշատակիդ համար պիտի կանգնեն, մեծագործութեանցդ հետ և այդ տկարութիւնդ գրոշմուի, անեղծանելի՛ յիշատակ ապագայ դարուց: Նա զի և այդ գործովդ կ'ըլլաս նախ հայրենատեաց և միանգամայն հայր անգութ: Կը կրկնեմ քեզ, տէր իշխան, ազատէ՛ որդւոյդ կեանքը մատնելով տապարին սա Մակեդոնացին, որ երէկ գիշեր ընդհանուր կոտորածէն ապրեցաւ... չ'էս պատասխաներ:

ԱՐԳՈՒԱՐԳ

Ա՛հ, ինչէ՛ր կը յիշեցընես...

ԱՐԻԱԹԷՍ

Որոշէ՛ միտքդ, տէր իշխան, ծերակոյտն անհամբեր քու պատասխանիդ կ'օպատէ. այդ պատասխանն կամ որդւոյդ փրկութիւն և կամ իւր դատապարտութեան վճիռը պիտի տայ:

ԱՐԳՈՒԱՐԳ

Գնա՛ ըսէ՛ ծերակուտին, թէ Արտաւազդ մեռնելու պատրաստ է:

Տ Ե Ս Ի Լ Գ .

ԱՐԳՈՒԱՐԳ, ԱՐԻԱԹԷՍ. Հ Ե Լ Է Ն Ե

Հ Ե Լ Է Ն Ե (յանկարծ ներս շխաղկով)

Կեցիր, Արիաթէս սեպուհ:

ԱՐԻԱԹԷՍ

Հելէնէ հո՛ս.

ԱՐԳՈՒԱՐԳ (մեկուսի)

Ո՛վ դիք...

Հ Ե Լ Է Ն Ե (Արդոշարդիւն)

Տէր իշխան, Արտաւազդ պիտի ապրի:

ԱՐԳՈՒԱՐԳ

Ի՞նչ կ'ըսես Հելէնէ, գիտե՛ս գոնէ՛ թէ ինչ գին իւր կենաց փոխարէն կը պահանջէ ծերակոյտն Արիաթէսի բերնովը:

Հ Ե Լ Է Ն Ե

Լսեցի ձեր խօսակցութիւնը: (Արխարեսիւն) Տէր իշխան, գնա՛ ըսէ՛ ծերակուտին որ զԱրտաւազդ բանտէն հանել տայ, վասն զի այսօրուան արեգակն իւր շրջանը չըկատարած, Հելէնէի գլուխն պիտի իյնայ Արմաւիրի հրապարակին մէջ:

ԱՐԳՈՒԱՐԳ

Ո՛չ... երբէք չ'եմ ընդունիր քու անձնագոհդ,

ազնուատիրտ օրիորդ, որովհետև մատնիչն Արտաազգ է, պէտք է որ ինքն միայն մեռնի:

ՀԵԼԵՆԵ

Չիս ապրեցընելու համար ըրած ջանքդ անօգուտ է, տէր իշխան. եթէ որդւոյդ չըննայելով՝ դահճին տապարէն ուզենաս զիս ազատել այսօր, ուրիշ ձեռք... անհաւտիկ իմ ձեռքս կեանքիս թելը պիտի կտրեն և իմ մահս անպտուղ պիտի մնայ, վասն զի Արտաազգ դարձեալ ի մահ դատապարտուած պիտի ըլլայ իբրև հայրենեացն մատնիչ: Ապա թո՛յլ տուր. որ ես միայն մեռնիմ և Արտաազգ ապրի. ասով քու փառքդ և իւր յիշատակն անարատ կը մնան: Անշուշտ զիս պիտի ցաւի, բայց իրեն համար հայրական գորովդ կրկնապատկելով, յաջողեցիս շուտով եթէ ոչ զիս մոռցընել տալ բողոքովին, զոնէ նուագեցընել իւր արտասուաց կաթիլները, որոնք և մէկէն կրնան դադրել հայրական ծոցիդ մէջ՝ քու մխիթարական հայթայթանօքդ:

ԱՐԳՈՒԱՐԳ

Հելէնէ՛, սիրեցեալդ իմ դուտոր, արտօունքս սիրտէս և աչերէս միանգամայն կը խլես. ինչո՞ւ քու յարգդ այդպէս ուշ կը ճանչնամ: Ո՛հ, զքեզ մոռնալն անկարելի պետի ըլլայ ինձ, քու մահդ յաւիտենական սգոյ մեր օրերը պիտի դատապարտէ: Միթէ այնուհետև ե՞ս զինքը պիտի մխիթարեմ, բայց զքեզ յիշելուս պիտի կարենամ նախ արտօունքս արգելուլ, անհաւտիկ այժմէն զաչս իմ կ'ողորդեն:

ՀԵԼԵՆԵ

Արգելէ՛ արտօունքդ, տէր իշխան, քաջալերուէ՛ և արիացիր. որդւոյդ սիրոյն համար կը պա-

հանջեմ քենէ այդ զոհը, և կը մաղթեմ, որ հայրական սիրտդ իրեն մխիթարութեան անսպասելի ազդիւր մ'ըլլայ: (Վեջրէն տաշրչ հաւնեղով իրեն կու տայ) Ա՛ն աս սուրբ, զի ալ ասօր պէտք չ'ունիմ ես, որովհետև պիտի ապրի Արտաազգ: Գնա՛ Արիաթէս՝ սեպուհին հետ ձերակուտին, աւետէ՛ իրեն այդ լուրը և քու վկայութեամբդ խոտմոռնքս հաստատէ՛:

ԱՐԳՈՒԱՐԳ

Աւա՛ղ, ինչո՞ւ կարող չ'եմ ես ալ հետդ մեռնելու:

ՀԵԼԵՆԵ

Այրէ՛, տէր իշխան, քու կեանքդ հարկաւոր է հայրենեացդ. մի միայն շնորհք քենէ կը խնդրեմ:

ԱՐԳՈՒԱՐԳ

Խօսէ՛, Հելէնէ, ի՞նչ կը խնդրես:

ՀԵԼԵՆԵ

Կը խնդրեմ որ մեռնելէս ետև իմ արիւնաշողախ դիակս, առանց որ մէկն նախատէ, հանգչեցընել տաս մօրս շիրմին քով:

ԱՐԳՈՒԱՐԳ

Ո՛հ, ի՞նչ տխուր պաշտօն... այլ ո՛չ, դո՛ւ պիտի ապրիս Հելէնէ:

ՀԵԼԵՆԵ

Աճապարէ՛ տէր իշխան, չ'ըլլայ թէ անհամբեր ձերակուտն, որդւոյդ դատապարտութեան վճիռը փութացընէ:

ԱՐԳՈՒԱՐԳ

Ո՛հ, անկարելի է որ խնդիրքդ կատարեմ:

ԱՐԻԱԹԵՍ

Երթանք, տէր իշխան, հայրենիք զոհ մը կը պահանջեն:

ԱՐԳՈՒԱՐԳ (Հերկեհին)

Ա՛հ... Եկ, Եկ, զոնէ մէջմը համբուրեմ զքեզ, դո՛ւտոր սիրեցեալ:

ՀԵԼԵՆԷ (ձակատը իրեն մատռցումելով)

Ահաւասիկ եմ... շնորհակալ եմ քեզ, տէր իշխան, որ խնդիրքս չբերեցիր:

ԱՐԳՈՒԱՐԳ (Հերկեհին հաղորդելէն վերջը)

Ա՛հ, չ'եմ ուզեր զքեզ այդպէս յուսահատ թողուլ. վերջին ճիգն մ'ալ ես անձամբ պիտի փորձեմ ծերակուտին քովը. ապա բոլորովին յոյսդ մի կտրեր, սիրեցեալ օրիորդ:

ՀԵԼԵՆԷ

Գնա, տէր իշխան, և ժամանակ մի կորսնցընէր: (Արիարես Արդաշարդին րեւը մտնելով զիւրեք դուռս կը հանէ)

ՏԵՍԻԼ Ե.

ՀԵԼԵՆԷ (ստանձիկն)

Դարձեալ սա անաւոր պալատիս մէջ կը գրտնուիմ, ուտի երեկ գիշեր մահուան ձեռքէն խուճապեալ կը փախչէի, իսկ այժմ ես անձամբ

զալով մահըս կը խնդրեմ: Սակայն, ո՛հ երջանիկ եմ այս անգամ, զի զոնէ թշուառ արիւնս սիրականիս կեանքը պիտի ազատէ: Ո՞վ կրնայ իւր ապագան գուշակել, ես մանաւանդ, որ բազմէս անձանօթ և վիճակէս զոհ, հօր մը զըրկին մէջ սնեալ, որ զթուլիւն և սէր էր վասն իմ, այնպիսի սիրականի մը քով՝ որ վասն իմ կեանքն ալ նուիրեց, միայն կսկիծս մօրս ժպիտը չըտեսնայս էր: Ուտի յանհոգ կոյս սիրտս զեղածիւծաղ ապագային կը բանայի, միթէ կրնայի՞ գուշակել թէ կենացս զարնան մէջ, ձմեռուան դառնաշունչ քամին ակնկալութեանցս վրայ պիտի փչէր: Օրերս կ'որորէի յուսալով, որ ընդ հուպ Հիմէն՝ ոսկեթէլ վարդէ պակով մը գլուխս Արտաւազդայ գլխոյն հետ պիտի միացընէր... անաւասիկ դահիճն գլուխս սև քօղքով մը ծածկելէն վերջը, իւր տապարաւն յաւիտեան զիս իրմէ պիտի բաժնէ: Հարսանեացս համար պատրաստուած ջահերն, սև շղաշատեոով պատած՝ դագաղիս քով պիտի վառին սգագգած... ինչո՞ւ այդ արտասուքը կը թափեմ... միթէ կսկիծ կ'զգամ մեռնելուս համար... այլ միթէ սովաւ զԱրտաւազդ չի՞ պիտի ազատեմ... ապա խնդուլութեան կաթիլներ ըլլան թափածս... ո՛հ, ի բաց գնա քովէս, վատ երկիւղ. արիութեան ժամն այս է. ցուցընենք այսօր Հայաստանիայց, թէ Արտաւազդայ սիրուհին արժանի է իւր սիրականին: Երթամ հօրս քով... այլ ինչպէս ծանուցանել իրեն, թէ դուտորն պիտի մեռնի... ո՞վ դիք, ո՞յժ դուէք ինձ: (կեղայ):

մի, ահա՛ն այսպէս, որպէս զի քու ժպիտդ սիրտս
ալ խնդուեթեամբ լեցընէ:

Հեկէնէ:

Ահաւաստիկ, կը ժպտիմ, հայր:

ՆԵՒՊՏՂՈՄԷՈՍ

Ո՛հ, շնորհակալ եմ Հեկէնէ... սակայն աչացդ
մէջ արտտունք կը շողան... արդարեւ կը փափա-
քէի զքեզ աւելի երջանիկ տեսնել... ափսո՛ս, իմ
թշուառութեանցս անդունդին մէջ զքեզ ալ գա-
հա՛վէժ հետս կը տանիմ:

Հեկէնէ:

Հայր իմ, քու հետդ ես միշտ երջանիկ եմ:

ՆԵՒՊՏՂՈՄԷՈՍ

Այո՛, կը հաւտամ քեզ, սիրեցեալ զաւակ...
բայց տես, ինչպէս ապերախտ եմք, քեզ Արտա-
ւազդայ վրայօք հարցմունք մը չ'ըրի. ի՛նչ լուր
իշխանորդւոյն վրայ կը շըլէ, միթէ՛ ամենևին
յոյս կամ միջոց մը չըկայ իւր փրկութեան:

Հեկէնէ:

Ահա՛ն ասոր համար գնացի ի պալատն, փոր-
ձել ուզեցի, կամեցայ անձամբ իւր վիճակին
տեղեկանալ, և եթէ կարելի էր՝ փրկել զինքն:

ՆԵՒՊՏՂՈՄԷՈՍ

Յաջողեցա՞ր արդիօք, Հեկէնէ:

Հեկէնէ:

Այո՛... հայր իմ:

Հ Ա Ն Դ Է Ս Հ Ի Ն Գ Ե Ր Ո Ր Դ

Արտաւազդայ բանուն. կամարաւոր խորշեր
կը տեսնուիին, տեսարանիին ներքապոյն կող-
մը խաւարիին մէջ:

ՏԵՍԻԼ Ա.

ՆԵՒՊՏՂՈՄԷՈՍ, ՀԵԿԷՆԷ

ՆԵՒՊՏՂՈՄԷՈՍ

Ո՛հ, վերջապէս միւսանգամ կը դառնաս քովս,
սիրեցեալդ իմ Հեկէնէ, սրտիս հատորն, կեանքիս
արևն. գիտէս արդեօք թէ քիչ մ'առաջ քու ան-
խոհեմ և յանդուգն այցելութիւնդ պալատին
մէջ, ինչպիսի՛ անհնարին տարակուսանաց և
տագնապի մէջ ձգեց վշտացեալ հայրդ: Չ'եմ
ուզէր որ դարձեալ այնպիսի փորձ մը կրկնես.
առաջին անգամս ալ ես ոչ երբէք կը հաւանէի,
որ զիս թողով ցորեկ ատեն՝ անհրաժեշտ մա-
հուան առջև զքեզ տանէիր. սակայն խորհրդոյդ
տեղեկ չ'էի և անկասկած՝ ուզեցի վայրկեան
մը հանգչեցընել ի քնոյ պարտասեալ գլուխս...
ո՛վ դիք, ինչպիսի էր զարթնուլս, երբ զքեզ
քովս չը գտայ: Վասն զի դու ես իմ յոյսս, իմ
կեանքս, քեզի համար միայն կ'ապրիմ, Հեկէնէ,
ապա թէ ոչ տասը տարի առաջ զայն վճարած
էի, պաշտպանելով մայրդ իւր սպանողաց դէմ...
այլ այժմ դու միւսանգամ քովս ես, զքեզ սըը-
տիս վրայ կը պնդեմ և կը յուսամ, թէ երբէք
իրարմէ չիպիտի բաժնուիներ: Ո՛հ, բոլոր վիշտքս
կը մոռնամ... Նայէ՛ մէյմը իրեսիս, խնդա՛ն գամ

ՆԵՍՊՏՂՈՄԷՈՍ

Այո... պիտի ապրի՝ ուրեմն այն ազնիւ երիտասարդն... կը ներեմ ապա Հելէնէ քու այս օրուան յանդուզն այցելութիւնդ:

ՀԵԼԷՆԷ

Այո հայր, Արտաւազդ պիտի ապրի:

ՆԵՍՊՏՂՈՄԷՈՍ

Ո՛հ, սիրտս խնդութեամբ լեցուցիր, Հելէնէ. այժմ աւելի գոհ և ուրախ եմ, որովհետև ըսիր թէ պիտի ապրի... բայց ըսէ՛ շուտ, ի՛նչպէս եղաւ այդ հրաշքն, ի՛նչպէս անողորբելի ծերակոյտն այդպէս մէկէն վճիռը փոխեց:

ՀԵԼԷՆԷ

Հայր իմ, կը պատմեմ քեզ զայս. սակայն նախ ըսէ՛ ինձ, ո՞ւր է Արտաւազդ և թէ հոս մօտ է իւր բանտն:

ՆԵՍՊՏՂՈՄԷՈՍ

Կը տեսնէս սա կամարաւոր խորշերը, ահա հոն է իւր բանտն. հոն անարդար ծերակոյտն, դժնդակ հայր մը՝ զինքն շղթայակալ ձգած են. գուցէ այժմ իւր խորշը քաշուած կը հանգչի դժբաղդ իշխանորդին: Ափսոս, ինչու կարող չ'եղայ ապրեցընելու զինքն. վասն զի երախտագիտութեան անհրաժեշտ պարտք մ'ունիմք իրեն հատուցանելու, դճւտոր իմ նազելի:

ՀԵԼԷՆԷ

Ստոյգ կ'ըսես, հայր իմ, սակայն պիտի ապրի... դու զինքն տեսար ուրեմն այսօր:

ՆԵՍՊՏՂՈՄԷՈՍ

Այս առաւօտ իւր հետ խօսեցայ, երբ դու, հոս է՛իր. իրեն առաջարկեցի ալ որ մեր հետ խոյս տայր սա անիրաւ հայրենիքէն, որ իւր ծառայութեանցն փոխարէն՝ սա շղթայքը ու խայտառակ մահ մը կը հատուցանէր: Այլ ինքն իմ թախանձանքս մերժելով, կ'ընտրէ հոս մնալ և մեռնիլ. կ'ըսէ, թէ ալ խորթ չ'ունէր միւսանգամ տեսնելու արևուն լոյսը, դարձեալ՝ փախըտեամբ կեանքը ապրեցընելն՝ վատութիւն կը համարի: Սակայն իւր մերժումն զես չըվհատեց, թախանձանքս կրկնեցի. այո, չ'եմ լուր և քու անունդ իմ աղաչանացս խառնելով յիշեցի, ըսի թէ իւր մահն և՛ քու մահուանդ պատճառ պիտի տայր: Չ'էի խաբուած, անունդ յանկարծ երևելի տպաւորութիւն մ'ըրաւ վրան, ձեռքս սեղմելով՝ արտասուամած աչօք երեսիս նայեցաւ. պահ մը լուռ կեցաւ, սակայն այն ճարտարախօս նայուածքին մէջ, բոլոր սրտին զգացմունքը և յուզմունքը կարգացի: Ապա հոգոց հանելով մը «թո՛յլ տուր « որ մեռնիմ, կրկնեց, և մեռնիմ միտիթարեալ. « ըսէ՛ Հելէնէին որ ինքն ապրի, զայս իւր սի- « րականն իրեն կը պատուիրէ, որ նաև իւր « մեռնելու ատեն զինքն պիտի օրհնէ. ապրի և « ժամանակ չը կորսնցընելով հեռանայ Հայաս- « տանէն, որուն օդն մահացու է իրեն. համոզէ « զինքն որ ապրի, որպէս զի իմ յիշատակըս « պատուէ և ծերունի հայրը միտիթարէ...»

ՀԵԼԷՆԷ

Ազնիւ զգացմունք...

ՆԵՍՊՏՂՈՄԷՈՍ

Իւր արտասունքն և՛ իմ աչերէս արիւնախառն արատուք քսմեցին. զինքն թողլով հեռացայ,

սակայն կը յուսամ որ դու ինձմէ աւելի յաջողիս, Հելէնէ: Ապա արիացիր, ջանա՛ գինքն, ինչ կերպիւ ալ որ ըլլայ, ապրեցընես. չ'եմ կարծեր որ քու խնդիրդ ալ մերժելով հոս կենալու յամառի... Բայց դու, պիտի ապրի ըսիր, տեսնենք ինչպէս.

Հելէնէ

Եթէ ինքն հոս կենալ կը խնդրէ, հայր իմ' և՛ մենք հոս կը կենանք:

ՆԵՌՊՏՂՈՄԷՈՍ

Բայց...

Հելէնէ

Լօ՛ք գիտ, հայր իմ. քիչ մ'առաջ ըսիր, թէ իւր կեանքը ապրեցընելու համար՝ եթէ հարկ ըլլար, քու կեանքդ ալ կը զոհէիր:

ՆԵՌՊՏՂՈՄԷՈՍ

Այո՛, եթէ գայն ինքն ուզէ, և եթէ դու ալ հաւանիր:

Հելէնէ

Երբէք ինքն այդպիսի խնդիրք մը չի պիտի ընէ և ոչ ետ. սակայն անագորոյն ծերակոյտն, զԱրտաւազդ ապրեցընելու համար, կը պահանջէ որ կամ դու և կամ ետ մենսիմ այսօր... Ի՞նչ պէտ մեկնեմ լուրժիւնդ, հայր. կը հրաժարի՞ս հաւանութիւնդ տալու այդ անգութ պահանջքին... այլ մտածէ՛, որ Արտաւազդ վայրկեան մ'ալ չ'երկմտեցաւ՝ մեզի համար իւր կեանքը նուիրելու:

ՆԵՌՊՏՂՈՄԷՈՍ

Իմ մահս չ'է, Հելէնէ, որ լեզուս կը պապան-

ծեցընէր. սակայն սա անիրաւ վճիռն զքեզ ալ, անմեղդ իմ Հելէնէ, զքեզ ալ հետս կը դատապարտէ. ահա երկմտելուս պատճառն:

Հելէնէ

Ձիտ մի՛ մտածէր, հայր. վասն զի իրեն համար մենսիլն, գինքն ապրեցընելով մենսիլն՝ ինձի համար կեանքէտ աւելի անուշ է: Ո՛հ, առանց իրեն ապրիլս՝ դժնդակագոյն պիտի ըլլայ ինձ. այո՛, կ'ուզեմ, կը փափաքիմ ալ մենսիլ իրեն համար. վասն զի այդ մահն մանաւանդ թէ նոր կեանք մ'է լի ամենայն բարօրութեամբ. այլ միթէ մամթ իցէ ինձ ապրել, հայր, քու մեռնելէդ վերջը:

ՆԵՌՊՏՂՈՄԷՈՍ

Ա՛հ, սիրուն որդեակ:

Հելէնէ

Ի՞նչ հրապոյրք կրնայ մեզ ունենալ սա թշուառ և վշտալից կեանքն. զմահ անգամէ՛ մ'աւելի ակներև տեսանք. իսկ այժմ՝ երախտագիտութեան և անկեղծ սիրոյ պարտք մ'ալ կը հատուցանեմք:

ՆԵՌՊՏՂՈՄԷՈՍ

Ե՞րբ կը հրամայեն որ այդ զոհն կատարուի:

Հելէնէ

Ըսի իրենց, թէ գիշերն իւր ստուերը երկնից վրայ չըձգած, իմ գլուխս պիտի իյնար Արմաւիրի հրապարակին մէջ, ուր արդէն զլիստման մեքենան պատրաստ է:

ՆԵՌՊՏՂՈՄԷՈՍ

Քո՛ւ գլուխդ... ո՛հ ո՛չ, սիրեցեալդ իմ Հելէնէ,

Գրգրե՛. թատր. 16

դու պիտի ապրիս. դու մատաղ տարիքիդ մէջ
զրկուեցար մօրդ համբոյրներէն... ո՞հ չ'եմ հան-
դուրժեք որ գարուն հասակիդ մէջ մահու ման-
զադն հնձէ զքեզ ի կենացդ: Ո՛հ, ապրէ՛ որդեակ
իմ՝ Հելէնէ. եթէ Հայոց զոհ մը պէտք է, թո՛ղ
որ հայրդ տանի գլխատման բեմին վրայ իւր
վշտօք տառապեալ գլուխը. սա գլուխս որ տա-
րիքէն առաջ՝ մշտառև թշուառութեանց և յե-
զափոխութեանց մրրիկներուն մէջ ալեորեցաւ,
անզամէ մ'աւելի մահու ժանիքներէն զքեզ ազա-
տելով դողդոջուն... ո՞հ, կը փափաքիմ, որ սա
կեանքիս մնացորդն զքեզ Արտաւազդին հետ միա-
ցընելու ծառայէ:

Հեկէնէ

Հայր իմ... բայց ո՞չ, դու չի պիտի երթաս...
ո՞հ, չ'եմ ուզեր որ երթաս, զքեզ չիպիտի թողում
որ երթաս. կը լսե՞ս, հայր իմ. ո՞հ, մի՛ ըլլար ինձ
ծերակուտէն աւելի անգութ. միթէ՛ կը յօժարիս
որ զքեզ ողբամ բոլոր կեանքիս մէջ, մտածէ՛
գամ մի ինչպիսի կեանք մը վարելու զիս պիտի
դատապարտես... այլ և այդ կեանքն երկար
չիպիտի տևէ. հաճէ՛ որ ժամ մ'առաջ իջնամ
հանգելու մօրս քով. դու ապրէ՛, հայր, և վշտա-
բեկ կեանքդ Արտաւազդին օրինակ տալով համո-
զէ՛, քաջալերէ՛ զինքն որ իմ սիրոյս, իմ յիշա-
տակիս համար յանձն առնու ապրելու: Ըսէ՛ իրեն
որ ապրի՝ եթէ զիս կը սիրէ, այդ է իմ մի միայն
փափաքս, այդ է և իմ կամքս: Դու արդէն զինքը
կը սիրես, կրնայ ինքն քու քովդ իմ տեղս բռն-
նելու. զինքն սիրելով՝ զիս սիրած պիտի ըլլաս,
և զիս յիշելով՝ զինքն կրկնապատիկ աւելի պիտի
սիրես յայնժամ... չեմ ըսեր որ զիս մոռնաս
բոլորովին, սակայն ինքն հնարեցի մխիթա-
րելու վշտացեալ օրերդ... Լսու կը կենաս...
ապա կը հաւանիս այնպէս չ'է՞... ո՞հ, շնորհա-
կալ եմ, շնորհակալ եմ քեզ, հայր իմ:

Ն.Ն.ՊՏՂՈՄԵՆՈՍ

Ո՛չ. փուճ տեղ զիս մի՛ թախանձեր, չ'եմ կրնար
ընդունել քու անձնագոհդ. իսկ լուութեանս պատ-
ճառն, վասն զի հծկտանքն կուրծքս կը խորտա-
կէր, վասն զի սիրոյս առաւելութիւնն ձայնս կը
խեղդէր: Ո՛հ, յիրաւի դառն պիտի ըլլայ ինձ
քենէ բաժնուիլս, սակայն երբ կը յիշեմ որ դու
պիտի ապրիս և Արտաւազդին հետ երջանիկ
պիտի ըլլաս, այդ ակնկալութիւնն՝ ամէն բան
յանձն առնլու ինձ ոյժ և յօժարութիւն կու տայ:
Հոր պարտքն զայս ինձ կը թելադրէ. կատա-
րեալ հայր ըլլալու համար՝ զքեզ ապրեցընելն
իմ պարտքս է: Կ'երթամ ապա, որպէս զի զի-
րենք գտնամ... ո՞ղջամբ մնաս, դու տար իմ նա-
գելի:

Հեկէնէ (գիկերը գրկելով)

Ո՛հ ո՞չ, հայր իմ... եթէ երթալ պնդես...
աղջիկդ հետդ պիտի գայ մինչև գլխատման բե-
մին քով, և այն կոճղին վրայ՝ ուր տապարն
գլուխդ պիտի կտրէ, ետևէդ ես իմ գլուխդ պիտի
կտրէ, ետևէդ ես իմ գլուխս պիտի դնեմ. սէքն
զմեզ իրարմէ չըզատեց, նոյնպէս և մահն չիպի-
տի բաժնէ:

Ն.Ն.ՊՏՂՈՄԵՆՈՍ

Ո՛հ ո՞չ, չ'եմ ուզեր որ հոն ետևէս գաս...
հայրական իշխանութեամբս կ'արգիլեմ քեզ զայս,
Հելէնէ... գերեզմանին մէջ ննջող սուրբ մօրդ
կողմէ կը հրամայեմ քեզ զայս... ապա հնա-
գանդէ... ո՞ղջամբ մնաս:

Հեկէնէ

Ո՛հ կեցիր, հայր... գտնէ վայրկեան մը...
օրհնէ՛ զիս. (ձօրը գիրկը կ'իյնայ):

ՆԵՊՊՏՂՈՄԵՆՍ (զիւնըր կը գրկի և համբոշարեղի
վերջը)

Ո՛վ դէք, օրհնեցէ՛ք զինքն. շնորհապարտ եմ
ձեզ, որ այդպիսի զաւկի մը զիս հայր վիճակեցիք.
օրհնեցէ՛ք զինքն, որպէս զի երջանիկ ըլլան իւր
օրերն և առանց դառնութեան... մնաս բարեաւ...:
(Զիւնըն վերջիւն անգամ համբոշարեղի ետև, աչևըր
արբերով դռնս կ'ըրայ)

ՆԵՒԵՆԵ (ետևեկ վազելով)

Հայր իմ... հայր իմ... ան թշուառութիւն...
թշուառութիւն...: (Բազկարտիւն վրայ նուա-
ղեալ կ'իյնայ. պահ մը լրտաշիւն)

ՏԵՍԻԼ Բ.

ՆԵՒԵՆԵ (արբընարով յուսանաւտ աջօր չորս կող-
մը կը նայի)

Գնացե՛ր է... իսկ ես հո՞ս եմ... Ի՛նչ ըրիր,
հիքացեալ օրիորդ. դճուտը անգութ. միթէ է՞ս
հայրս ի մահ կը խաւրեմ, միթէ է՛րթմ'ը, որ-
պէս զի զինքն մատնէ ի ձեռս դահճաց. իսկ ես
միթէ է՛էի՞ կրնար զիս միայն գոհելու, ծերակու-
տին վճիռն իրեն լռելով: Ա՛հ թշուառականս
(դէպ ի դռնը կը վազէ). Հայր իմ, հայր իմ...
(ախանջ կը դնէ) ափսոս մեկնած է, ալ է՛եմ
լսիր իւր ոտից ձայնը սա կամարաց տակ...
գուցէ արդէն զինքն մատնած է... ան սիրելի
ծնող, զքեզ անդունդին մէջ գահավիժեցի, գե-
րեզմանիդ փոսը աղջիկդ իւր ձեռօքն փորեց:
ԶԱրտաւազդ ազատելով՝ մահս նոր, յաւիտենա-
կան և երջանիկ կեանք մ'ի՛նձ կը շնորհէր. դճու-
այծմ կը պահանջես, հայր, որ ապրիմ. սակայն
քենէ զրկուելովս ալ այդ կեանքն մահ պիտի

ըլլայ ինձ. ուրեմն ո՛ւր որ ալ դառնամ, միշտ
զմահ առջևս պիտի գտնամ, ապա կ'ընտրեմ
մեռնիլ զձեզ երկուքդ ալ ազատելով: Օ՛ն չըթա-
փառիմ հոս, թէրևս կրնամ ի ժամանակին հաս-
նելով, խլել հայրս դահճին տապարէն. իսկ եթէ
ոչ, իւր հետ կը մեռնիմ: Այ՛ն, վազեմ... չըկե-
նամ հոս, վասն զի Վարտաւազը մէ՛յնը տեսնելէս
ետև, ո՛հ խիտ դառն պիտի ըլլայ այնուհետև
իրմէ բաժնուիլս... երթամ ուրեմն... (ըսնի մը
ըսյլ աւելով կը կայնի). ո՛վ երկինք, ծոնզուը-
նքս կը դողան... նուազիլ կ'զգամ... երթա՛լ
այդպէս՝ առանց որ զինքն վերջին անգամ մ'ալ
տեսնեմ, առանց որ մէ՛յնը վասն իմ կրած ջըղ-
թայքը համբուրեմ, առանց որ իրեն անգամ
մ'ալ ըսեմ «Արտաւազդ, զքեզ միշտ սիրեցի, զքեզ
«միայն կը սիրեմ և զքեզ սիրելուս համար անձ
«մեռնելու կերթամ»: Ո՛հ, ո՛վ կրած է իմ տան-
ջանքս. յոր կողմն ալ որ դառնամ, միանգամայն
յանցապարտ եմ. հաւատարիմ սիրական մնալ որ
ուզեմ, հոն հայրս պիտի գլխատուի. սա տեղէս
ալ կարող է՛եմ հեռանալու: Ո՛հ, սա երկու օրուան
տագնապն և վիշտըն զիս ալեւորեցին. վեշտասան
գարնան ճակատիս վրայ բուսուցած վարդերն ի
բաց խլելով, հոն փշէ պտակ մը տեղաւորեցին:
Սակայն կը մօտենայ ժամն՝ որ ամէն վիշտքս և
տագնապս պիտի դադրեցընէ. քնհատութիւն և
արտօտնը աչերուս լոյսը խաւարեցին, բոլոր
մարմինս կ'այրի՛ իբր թէ հնոց մը հոն սըրտիս
մէջ կրէի. բայց սա հուրն ալ պիտի մարի, և
քիչ ատենէ սառոյց մը դառնալով՝ պիտի հանգ-
չիմ փոսին մէջ... երթամ. (ըսնի մը ըսյլ կ'առ-
նու տկարաշքեալը և դէպ ի լանտիկն խորը
նայելով). մնաս բարեաւ, սիրեցեալը իմ Արտա-
ւազդ, ապրէ՛ դու, ես կը մեռնիմ, միւսանգամ
երկնից մէջ կը տեսնուիմք: (Գնալի մը ըսյլ կ'առ-
նու միշտ տկարաշքեալը. խորեկ շրջայից շա-
չիւն կը շուշի, որ երբարով կը մօտենայ) Ո՛վ

երկինք, շղթայից շաչիւն կը լսեմ... ստուեր մը սա կամարաց խորէն դէպ ի հոս կը մտեռնայ... ինքն ըլլալու է... անապարէնք, փախչինք... այլ ծունգուըներս կը թուլնան... ո՞հ հայր իմ... (ժեզան վրայ կ'իշխայ) ո՞վ դիք, ո՞վ տուէք ինձ սա տազնապողական ժամոյս, զօրացուցէ՛ք զիս, որպէս զի երթամ հայրս ազատեմ: (Ոտք կ'երկայ, որպէս զի երրայ, Արտաւազդ ներս կը մտնէ)

ՏԵՍԻԼ Գ.

ՀԵԼԷՆԷ, ԱՐՏԱՒԱԶԴ

ԱՐՏԱՒԱԶԴ

Ո՞վ երկինք... Հելէնէ, դո՛ւ հո՛ս և կը հառաչես:

ՀԵԼԷՆԷ

Արտաւազդ... (մեկուշի). Ինչպէս խոյս տալ այժմ:

ԱՐՏԱՒԱԶԴ (վազերով զիներն կը գրկէ)

Սիրեցեանդ իմ Հելէնէ... ո՞հ, շնորհակալ եմ ձեզ, ո՞վ դիք, որ զինք անգամ մ'ալ տեսնել ինձ կը շնորհէք, շնորհակալ եմ որ չ'ուզեցիք անմխիթար մահս... բայց միթէ երկինքէ՞ն հոս իջեր, հրեշտակդ իմ Հելէնէ, որպէս զի քու սիրականիդ վերջին վայրկեանները քաղցրացընես... ուրեմն չ'եմ խաբուիր դու հո՛ս ես... իսկ ես զքեզ արդէն Հայաստանէն հեռու կը կարծէի:

ՀԵԼԷՆԷ

Ե՛ս խոյս տայի, երբ գիտէի որ դու հոս շըղթայակապ բանտի մէջ ես:

ԱՐՏԱՒԱԶԴ

Ո՞հ, շնորհակալ եմ քեզ Հելէնէ. սակայն տխուր ես, աչերուդ մէջ արտասուէնք կը շողան:

ՀԵԼԷՆԷ

Ընդհակառակն ուրախ եմ, Արտաւազդ. իսկ միթէ կրնամ տխուր ըլլալ, երբ քեզ աւետիս տալու համար հոս եկած եմ. լսէ՛ ապա թէ քիչ ատենէ... գուցէ այսօր սա շղթայքդ ձեռքէդ պիտի իյնան:

ԱՐՏԱՒԱԶԴ

Ս՛ո՛, երբ այսօր հոգիս սա մահկանացու մարմինս պիտի թողու:

ՀԵԼԷՆԷ

Ո՞չ, դո՛ւ պիտի ապրիս, Արտաւազդ:

ԱՐՏԱՒԱԶԴ

Ե՛ս պիտի ապրիմ... խեղճ օրիորդ, մի խաբեր զքեզ, իմ վճիռս գուցէ արդէն տրուած է. այո՛, անգամ մ'ալ դեռ պիտի տեսնեմ արեզական լոյսը, անգամ մ'ալ տիեզերաց վրայ աչք մը պիտի ձգեմ, վերջին հրաժեշտի աչք մը, երբ բանտս թողլով՝ գլխատման բեմին վրայ պիտի ելլամ:

ՀԵԼԷՆԷ

Ի բայց մերժէ միտքէդ այդ տխուր խորհուրդքը. կը կրկնեմ քեզ, թէ դո՛ւ պիտի ապրիս, Արտաւազդ. գուցէ հայրդ այժմ ազատութեանդ հրովարտակը իւր հետ կը բերէ, և բանտիդ դուռը բանալով՝ զքեզ գրկացնի ի մէջ պիտի ընդունի: Ա՛հաւաստիկ գայս գիտնալով եկայ հոս, որպէս զի քեզ աւետիս տամ... իսկ այժմ թո՛յլ տուր որ

մեկնիմ, ինչու որ հատուցանելու ուրիշ պարտք մ'ալ ունիմ:

ԱՐՏԱՒԱՉԻ

Այդպէս շոյտ զիս կը թողու... ո՛հ, կեցիր, վայրկեան մ'ալ կեցիր, Հելէնէ. գիտեմ ինչ վտանգ ձեզ կ'սպառնայ, սակայն միայն վայրկեան մը... Իսկ ըսածդ անհնար է սիրեցեալդ իմ Հելէնէ. կը ճանչնամ ես զճերակոյտն, կը ճանչնամ նաև հօրս հայրենեացն ունեցած կոյր հնազանդու թիւնը: Իսկ ինչո՞ւ ինձմէ ծածկել ահաւոր իսկու թիւնը. կը վախեօ որ չըտկարանամ. ո՛հ, մի վախեր, Հելէնէ. նա զի և յանցապարտ եմ հայրենեացս դէմ իւր հրամանաց անհնազանդութեամբս, ուստի և արդարացի է իւր տուած պատիժն: Հայրս փոխանակ զիս ազատել աշխատելու, գիտեմ որ պիտի փութացընէ վճռոյն գործադրութիւնը, որպէս զի ժամ մը առաջ աներևոյթ ըլլայ երկրիս վրայէն, իւր փառքը և անունը նսեմացընող դաւաճան և մատնիչ որդին: Այո՛, կենաց անարժան եմ ես, Հելէնէ. այո՛, դաւաճան և մատնիչ մ'է քու սիրականդ. այլ և ուրախ եմ միանգամայն, զի զքեզ ապրեցընելու համար այդ դիտողոսները շահեցայ, ուրախ եմ՝ չի զքեզ ազատելու համար անունս, փառքս, ապառնիս կորսընցուցի և ընդ հուպ կեանքս ալ պիտի կորսընցնեմ: Ապա օրհնելով սա շղթայքս կը համբուրեմ, զորս քեզի համար կը կրեմ, սիրեցեալդ եմ Հելէնէ:

Հելէնէ

Սիրելի՜դ իմ Արտաւազդ...

ԱՐՏԱՒԱՉԻ

Մի՛ լար Հելէնէ, զի ոչ ոք կրնայ, խոյս տալ իւր ճակատագրէն: Ո՛հ, ինչ երջանկութիւն էր

երբ իրարու քով նստած մեր ապագային վրայ կը խօսէինք. անամպ և կապոյտ երկնից վրայ իբր թէ մեր ծիրանեգոյն ապառնին կը կարգաչինք. առաւօտն գմեզ կը գտնար առուակին քով, իրարու սիրով յափշտակուած. արևոյն վերջին ճառագայթքն ալ շատ անգամ մեր գլխոց վրայ խոնարհելով, իբր թէ ուզենային հոն ոսկեթել պսակ մը բուրբելու: Ես կ'ըսէի «քեզ կը սիրեմ Հելէնէ», դու ալ ինձ «գքեզ կը սիրեմ Արտաւազդ», այնպէս որ, կարծես թէ մի և նոյն սիրուէ կը բլբլտէին այդ սիրուն խօսքն: Մի և նոյն զգացմունք մեր սիրտերը կը թնդացընէր, մի և նոյն օղբ կը շնչէինք. զիրար կը սիրենք ըսելու համար միայն մեր շրթունքն կը շարժէին: Բնութիւնն և երկինք ալ ականջալուրք մեր սիրոյ երդմանց, թուէր թէ իրենք ալ գոհ էին՝ գմեզ երջանիկ տեսնելնին. արևն ալ ակամայ և գրեթէ բռնադատուած իւր վերջին ճառագայթքը կ'ամփոփէր: Ափսո՛ս, ո՛վ կրնար գուշակել, թէ այդպիսի յանկարծահաս մրրիկ մը մեր բաղդը պիտի փոթորկէր... բաւական է. կը տեսնեմ որ անցեալին յիշատակն գմեզ առաւել ևս կը տխրեցընէ... այլ միթէ քովս չ'ե՛ս և այժմ, սիրեցեալդ իմ Հելէնէ, միթէ ձեռքս ձեռքդ չ'են պնդեր, միթէ սա վայրկենիս մէջ որ զքեզ կը թողում, չ'եմ ըսեր քեզ դարձեալ «Հելէնէ զքեզ կը սիրեմ և քեզի համար կը մեռնիմ»: Այն շունչն որ զլիտոյս անկման տտեն բերնէս դուրս պիտի սլանայ, պիտի հնչէ տեղերաց առջև վերջին անգամ մ'ալ. «Հելէնէ զքեզ կը սիրեմ»: Սակայն չափազանց խնդութենէս մոռցայ քեզ հարցընելու՝ թէ ինչպէս հօս կը գտնուիս, և թէ ինչո՞ւ դեռ մեկնած չ'էք: Քիչ մ'առաջ հայրդ ալ տեսայ, խեղճն զիս կը թախանձէր, որպէս զի բանտս թողլով խոյս տամ իւր հետ... քաւ լեցի ինձ որ այնպիսի վատութիւն մը յանձն առնում. սակայն զինքն յորդորեցի որ մէյմն ալ հօս չ'ե-

ընար, ըսի իրեն, որ ժամ մը առաջ գրեզ հեռացընէր Հայաստանէն. վասն զի թէ որ յայտնուէր... ո՞հ անհրաժեշտ է ձեր մահն. այն ատեն իմ մահս ալ շատ դառն պիտի ըլլայ, ինչու որ զձեզ նախ զլիստաման բեմին վրայ պիտի տեսնեմ: Ա՛հ, խնայէ՛ ինձ, որ չըսեսեսեմ այն արէտալի վայրկեանը, սիրեցեալդ իմ Հելէնէ: Ապա այժմ որ տեսնուեցանք, այժմ որ վերջին հրաժեշտն իրարու տուինք, փախի՛ր Հելէնէ, փախի՛ր, եթէ զիս կը սիրես. թո՛ղ որ գոհ և երջանիկ մեռնիմ, յիշելով որ դու կ'ապրիս, թէ՛ զիս յիշող, ինձի համար աղօթող մը հոս կը թողում: Նա՛ զի մեռնելէս ետև միթէ ազատ չ'եմ դարձեալ բնակելու սրտիդ մէջ. մեր մարմինը միայն իրարմէ կը գատեն, ո՞վ կարող է մեր հոգին բաժնել իրարմէ, զի և անհնարին է. երկուքնիս մէկ հոգի ունիւ՞ր և մէկ սէր... օ՛ն. ապա, գրկէ՛ զիս և փախի՛ր:

ՀԵԼԷՆԷ

Ո՛ր ազնուագոյնն ի սիրականաց. այդպիսի գերբնական սիրոյ մը առջև, որ վասն իմ իւր ամենաքաղցր ակնկալութիւնքը կը գոհէ. կրնայի՞ վատի մը պէս վայրկեան մ'ալ կեանքս ապրեցընելու մտածել... Ե՞ս գրեզ թողով փախչէի, առանց որ գոնէ ազատութիւնդ փորձէի. ի՞նչ արժէք կ'ունենայի յայնժամ առջևդ, այլ մանաւանդ թէ ի՞նչ արժէք կ'ունենայի ես այսօր բուն իմ աչացս առջև... ապրե՛ երջանկագոյն ապագայի մը համար, արժանաւոր սիրական. Հելէնէ ապերախտ չ'է, զիտէ ինչպիսի՛ ազնիւ գլուխ մը կ'ազատէ՛ գրեզ ապրեցընելով. ապրե՛ ուրեմն, սիրելիդ իմ Արտաւազդ, զի Հելէնէ գրեզ կ'ազատէ:

ԱՐՏԱՒԱԶԴ

Հելէնէ՛, չ'եմ ըմբռներ ըսածդ. անաւասիկ այս

երրորդ անգամ զայս ինձ կը կրկնես... արդարև պիտի ապրինք... բայց ի՞նչպէս... անկարելի է քեզ հաւտալ. յո՛յս խաբուսիկ... բացատրէ՛ միտքդ, Հելէնէ:

ՀԵԼԷՆԷ

Գիտցի՛ր ապա Արտաւազդ... բայց ըրածս մի՛ մեղադրեր, ինչ որ ըրի՛ հարկն պահանջեց, նա զի և պարտքս էր... ուստի և չ'եմ զղջար և չ'եմ գանգատիր բողոքին դէմ... մանաւանդ թէ ուրախ իմ և պէտք էր որ ընէի...:

ԱՐՏԱՒԱԶԴ

Ո՞վ դէք... ինչ արդիօք պիտի ըսէ... այդ յառաջաբանութեամբդ զիս կը սոսկացընես, Հելէնէ... բայց խօսէ՛ շուտ...:

ՀԵԼԷՆԷ

Գիտնալով որ մահդ աննահանջելի էր և թէ քու փրկութեանդ իբրև զին՝ ծիրակոյտն հօրս և կամ իմ գլուխս կը պահանջէր...:

ԱՐՏԱՒԱԶԴ

Ա՛հ, կը դողամ... մագերս գլխոյս վրայ կը տնկուին... ուրե՞մն...:

ՀԵԼԷՆԷ

Ծերակուտին պահանջքն պիտի կատարուի. այսօր իմ գլուխս պիտի իյնայ հրապարակաւ, և դու ալ ազատ ես, Արտաւազդ:

ԱՐՏԱՒԱԶԴ

Ի՞նչ կը լսեմ... ես պիտի ազատիմ, երբ դու կը մեռնի՞ս... զայս ըսիր այնպէս չ'է՞... ո՞հ, ինչ

դաւաճանութիւն... բայց անկարելի է, Հելէնէ...
թող որ մեռնիմ խաղաղութեամբ:

ՀԵԼԷՆԷ:

Հօրդ բերնովն ծերակուտին խոտացայ իմ
զլուխս. ուստի պէտք է որ փութամ... արդէն
չատ ալ ուշացայ. դարձեալ պէտք է որ հայրս ալ
ազատեմ, որն որ պահ մը տկարութենէս օգուտ
քաղելով, վազեց զինքն իմ տեղս զոհելու. ապա
կը տեսնես, որ հոս կենալս անկարելի է... ող-
ջամբ մնաս, Արտաւազդ: (Մեկնիլ կ'որոգէ)

ԱՐՏԱՒԱԶԴ (զիւրքը արգիլելով)

Չէ՛ չի պիտի թողում որ երթաս... ո՛հ ան-
խելքս, եթէ գրեզ հոս արգիլեմ, հայրդ հոն պիտի
զլխատուի և գուցէ գրեզ ալ վերջը պիտի սպա-
նեն... Ի՛նչ ընել այժմ, ո՛վ երկինք... օ՛հ գնա՛
գտիր շուտ հայրդ, թերևս դեռ ժամանակ կայ.
ըտէ՛ իրեն իմ կողմանէս, թէ այդ է իմ կամքս,
և զիչերս ձեզ օգնական առնլով խոյս տուէ՛ք
սրկից. ձեր հաւատարիմ բարեկամներէն ո՛մանք
ձեզ պիտի առաջնորդեն: Ո՛հ, գուցէ վայրկեան
մ'ալ ուշանալդ կրնայ բոլոր ակնկալութիւնս
ի դերև հանել... սակայն գրեզ թողու ալ չեմ
համարձակիր:

ՀԵԼԷՆԷ:

Մտիկ ըրէ, Արտաւազդ. հայրս գուցէ այժմ
դահճաց ձեռքն է... ես միայն կրնամ զինքն
ազատել՝ կեանքս իւր տեղ նուիրելով... Թող
ապա որ ճակատագիրս կատարուի... ողջամբ
մնաս, սիրելիդ իմ Արտաւազդ: (Գարձեալ մեկ-
նիլ կը խնդրէ)

ԱՐՏԱՒԱԶԴ (զիւրքն արգիլելով)

Ա՛հ, կեցիր... դժբաղդ Արտաւազդ. կը գու-
շակէ՛ր երբէք, թէ մեռնելէդ առաջ քան զմահ
աւելի սաստիկ այդպիսի հարուած մը քու սիրտդ
պիտի մխուէր... Թշուաճականս... այժմ կ'անի-
ծեմ սա շղթայքս, որք ձեռքս կը պնդեն, սա
շղթայքս զորս քիչ մը առաջ համբուրելով
կ'օրհնէի. այ՛ո, կ'անիծեմ, վասն զի կարող չ'եմ
զիս սպանելու... սակայն փոյթ չ'է... եթէ սուր
մը չ'ունիմ ձեռքիս մէջ, զլուխս սա օղակներուն
վրայ պիտի փշրեմ:

ՀԵԼԷՆԷ:

Արտաւազդ, թող տուր որ մեկնիմ... բայց
միթէ այսչափ ասելի՞ կը թուի քեզ կեանքդ,
երբ զայն ձեռքէս կ'ընդունիս:

ԱՐՏԱՒԱԶԴ

Այ՛ո, երբ զայն քու մահուամբդ կ'ստանամ:

ՀԵԼԷՆԷ:

Ուրեմն կ'ուզե՞ս զիս զրկել այդ շնորհքէ...
կարծիս թէ չ'է՛ր ուզէր ապրիլ հետդ... սակայն
երբ քու մահդ անհրաժեշտ էր և քու կեանքիդ
փրկութեան մի միայն միջոց՝ իմ և կամ հօրս
մահն էր. ապա ընդդեցի զմահ երբ հետդ ապրելն
անհնար էր: Դու իսկ տուիր ինձ, Արտաւազդ
այդ դիւցազնական օրինակը. նա զի քու կեանքդ
հարկաւոր է հայրենացոյդ և հօրդ պիտանի. ընդ-
հակառակն ինձի պէս տկար և արդէն թշուառ,
խեղճ օրիորդի մը կեանքն՝ ծնած օրէն ի վեր
դաշտից խոտերուն պէս չորնալու դատապար-
տուած էր: Ապա թող, որ հետս տանիմ գերեզ-
մանիս մէջ այն միսիթարութիւնը, թէ իմ մա-
հուամբս, թէ գրեզ ապրեցնելովս՝ ծառայու-

Թիւն մը կ'ընեմ Հայաստանեայց. Ա՛հ, մի տիրիր, Արտաւազդ, ի բաց մերժէ սա խաւարամած ամպը որ ճակատիդ վրայ դարձե է. ո՛հ, ցըցո՛ւր միւս անգամ Ժպիտդ, ըսէ՛ ինձ վերջին անգամ մ'աւ-
 Հելէնէ՛, գրեց կը սիրեմ...

ԱՐՏԱՒԱԶԴ

Ա՛հ, դժբաղդ Արտաւազդ...

ՀԵԼԷՆԷ

Կը կարծես թէ մահուանէս վերջը գրեց պիտի թողում... Ի՞նչ հրապոյրք երկինց մէջ զիս կրնան արգելու... ո՛հ, ո՛չ... զի հոգիս անբաժանելի պիտի մնայ քենէ. պատերազմի վտանգաց մէջ քու առջևդ կանգնելով, ի բաց պիտի հեռացընեմ մահացու հարուածքը, և իրիկունը քովդ նստած՝ անուշ և լռիկ խօսակցութեամբս պիտի ջանամ մոռցընել տալքեզ անցեալ վիշտերդ. իսկ զիշերներն ալ սնարիդ քովս ակնկառոյց՝ չիպիտի թողում, որ անաւոր անուրջք քեզ մօտենալով, անհանգիստ ընեն գրեց... բայց դու զիս չ'ես լսեր, Արտաւազդ...

ԱՐՏԱՒԱԶԴ

Ապրիլ և մինչև ի խոր ծերութիւն տիեզերաց առջև ճակատիս վրայ կրել մատնըչի և դաւաճանի բիծը... ապրիլ, երբ երախայք անգամ իրենց մօրն զիս մատնանիչ ցուցընելով՝ պիտի թողնուին « ահա մատնիչն, ահա դաւաճանը »... ա՛հ, ի՞նչ վատ և անարգ կենաց զիս դատապարտեցիր, Հելէնէ. այդ էր սիրոյս հատուցումն... ուզեցիր զիս անպատուել, երբ արիւնս զիս կը սրբէր... թող զիս և մեկնէ՛ աստի, հիքացեալ օրիորդ:

ՀԵԼԷՆԷ

Արտաւազդ... դու ես որ հետս այդպէս կը խօսիս... այլ կը ներեմ քեզ, բարեկամ... արդ չ'ես տեսներ, որ աժանի չ'եմ սիրոյդ. այո, կը փափաքիմ, որ զիս առես. որպէս զի մեռնելէս վերջը կսկիծ մը, ցաւ մը չ'զգաս... կը մաղթեմ ալ որ երջանիկ ըլլաս: Իսկ այժմ որ զիս կը յանդիմանես անիրաւաբար, ստոյգ եմ որ մեռնելէս վերջը պիտի գաս երբեմն գերեզմանիս վրայ, քանի մը կաթիլ արտունք թափելով ըսել « թէ Հելէնէ բարի աղջիկ մ'էր »: Յայնժամ փոսիս խորէն ես ալ պիտի պատասխանեմ « Արտաւազդ, գրեց միշտ կը սերեմ, և գոհ եմ որ քեզի համար մեռայ »:

ԱՐՏԱՒԱԶԴ

Ի՞նչ էր ըսածս, ո՛վ երկինք. ի՞նչ ըրիր, վատ Արտաւազդ. սա անմեղ օրիորդն քեզ կեանք տալու համար զինքն կը գոհէ, իսկ դու խիտ և անարդար բանիւքդ զինքն յառաջագոյն կը մահացընես... հրէ՛ջ ես դու ապերախտութեան... ա՛հ, ներէ՛ ինձ, Հելէնէ. (ծնգան վրայ կ'իյնայ) անիրաւեցայ անարդար կշտամբանօքս. ես հոգեղէն արարած մը՝ քեզի պէս հրեշտակի մը առաքինութիւնքը չըկրցայ ըմբռնելու. սիրոյս առաւելութիւնն... բայց դու՛ դից սիրոյն արժանի էիր մանաւանդ... արդ ըսածներս մի յիշեր, սիրեցեալդ իմ Հելէնէ... ա՛հ, ինչո՛ւ կայծակ մը զիս մէկէն չըջանթեց... դիր աղաչեմ ձեռքդ զլիտոյս վրայ, անհաւաստիկ հոս, որպէս զի գիտնամ, թէ ինձ կը ներես... կ'զգամ որ խաղաղութիւնն դարձեալ սրտիս մէջ կ'իջնայ... ո՛հ, շնորհակալ եմ, շնորհակալ իմ քեզ, Հենէնէ:

ՀԵԼԷՆԷ

Ո՛ւրք էլիր, սիրելիդ իմ Արտաւազդ, կը հաւ-

տան որ քեզ նեղանամ... բայց անաւասիկ բան-
տին դուռն կը ճոնչէ, անշուշտ զքեզ ազատելու
եկած են... ան, կը սոսկամ, գուցէ հոս ուշանա-
լով՝ արդէն հոն հայրս գլխատուած է... ան
հայր իմ... հայր իմ...

ԱՐՏԱՒԱԶԴ

Թող զան այժմ, ալ երկիւղ մը չ'ունիմ. որով-
հետև հայրդ մեռած է կ'ըսես և դու մեռնիլ կը
խնդրես, ես ալ հետդ կը մեռնիմ... այո՛, զի-
տեմ ինչ ծիրակուտին և հօրս պիտի ըսեմ:

ՀԵԼԷՆԷ

Արտաւազդ... (դռնը կը բացուի)

ՏԵՍԻԼ Դ.

ԱՐՏԱԻԱԶԴ, ՀԵԼԷՆԷ, ԱՐԴՈՒԱՐԴ, ՆԵ-
ՈՊՏՂՈՄԵՆՍ՝, ԱՐԻԱԹԷՍ, ՀՐԱՆՏ, ՀԱՅ
ԶՕՐԱԿԱՆՔ ԶԱՀԵՐՈՎ

ՀԵԼԷՆԷ (հայրը տեսնելով խնդրեալը մեկուսի)

Դեռ ողջ է ուրեմն հայրս... շնորհակալ եմ ձեզ,
ո՛վ դիք:

ԱՐԴՈՒԱՐԴ (վազելով Արտաւազդի շրջալիցը կը
բակէ)

Ուրան լեր, Արտաւազդ, այսուհետև ազատ ես:

ԱՐՏԱՒԱԶԴ

Ո՛չ հայր իմ. գիտէի որ զիս ազատելու պիտի
գաս և թէ ինչ զինով ծերակոյտն կեանքս կը

շնորհէ. սակայն գիտցիր, հայր, որ այդ պայմա-
նաւ ինձ շնորհուած կեանքը կ'անարգեմ և կը
մերժեմ ես: Իսկ ինչո՞ւ ինձ կը ներէ, ես որ յան-
ցապարտ եմ հայրենեացս և քեզի դէմ, մինչդեռ
անմեղ մը պիտի գլխատուի: Ապա թո՛յլ տուր
որ դահիճն զիս ալ Հելէնէի հետ մեռցընէ...

ՀԵԼԷՆԷ

Զիս միայն, տէ՛ր իշխան...

ԱՐՏԱՒԱԶԴ

Իմ մահս՝ զքեզ անպատիւ գործ մը և ոճիր մը
գործելէ կ'ազատէ. զի կեանքըս քու անուանդ
յաւիտենական նախատիւք մը պիտի ըլլայ:

ԱՐԴՈՒԱՐԴ

Որդի իմ Արտաւազդ, հայրդ եկած է որպէս
զի զձեզ ամենքնիդ ալ ազատէ:

ՀԵԼԷՆԷ (և Արտաւազդ միատեղ)

Ամենքնիս ալ...

ԱՐԴՈՒԱՐԴ

Այո՛, Հելէնէ՛, հայրդ ալ ազատ է:

ՀԵԼԷՆԷ (խնդրեալը հօրը ծոցը նետուելով)

Հայր իմ...

ՆԵՈՊՏՂՈՄԵՆՍ (զիւրքը գրկելով)

Այո՛, Հելէնէ՛, ստոյգ է Արդուարդ իշխանապե-
տին ըսածն. ծերակոյտն մեզ կը ներէ:

Գրողն. Թատր. 16

8

ԱՐՄԱՆՁԻ

Իրերակոխան... իսկ ռևստի այդ անակնկալ հրաշքն:

ԱՐՄՈՒԱՐԻ (Արտաւազդիկն քոչոր մը տայով)

Ա՛ն և անձամբ կարդա ծերակուտին հրովարտակը:

ԱՐՄԱՆՁԻ (կը կարդայ)

«Տէ՛ր իշխան, ծերակոյտն որ երախտագէտ
«հայրենիքը կը ներկայացընէ, ի շնորհս հայրենա-
«սիրութեանդ և մանաւանդ թէ՛ որդիական
«հնազանդութեանդ, իւր խիտ վճիռը յետս կո-
«չելով՝ կը ներէ որդւոյդ, միանգամայն Նէ-
«ոպտղոմէոս իշխանին և Հելէնայ. դարձեալ
«քու հզօր և պաշտպանողական աշխդ կը յանձնէ
«Հայաստանի կառավարչութեան սանձը: Քու
«հայրենասիրութիւնդ և հնազանդութիւնդ, տէ՛ր
«իշխան, նմանելու օրինակ ըլլան ամենայն
«Հայոց, և իւրաքանչիւր Հայ քեզ նայելով սով-
«բի ծառայել հայրենեաց, և գիտնայ թէ՛ իւր
«ինչքը, իւր կեանքը, իւր որդիքը և թէ՛ ինչ
«որ ունի սիրելի աշխարհքիս մէջ, ի ստիպել
«հարկին՝ պարտական է նուիրել հայրենեաց»:
Կեցցեն հայրենիք, որ նաև իւր որդւոց ապերախ-
տութիւնը անյիշաչարութեամբ կը ներէ: Իսկ
դու, հայր իմ, վերստին զիս կը ծնանիս, վասն
զի այսօր կեանքս, և որ աւելի սիրելի և թան-
կագին է ինձ առաքինութեամբն չքնաղ Հելէնէ
օրիորդը ի շնորհս քո՛ կ'ընդունիմ:

ԱՐՄՈՒԱՐԻ

Ամենքնիս ալ այսօր պարտական ենք շնոր-
հակալ ըլլալու Հայաստանեայց, ես յառաջագոյն,
վասն զի որդիս ինձ միւսանգամ կը պարգևէ:

դու ալ, Արտաւազդ, վասն զի հայրենիք կեան-
քիդ հետ՝ զՀելէնէ օրիորդն ալ քեզ կը շնորհեն.
դու, Նէոպտղոմէոս իշխան, դու ալ կեանքդ և
զուտորդ Հայաստանէն կ'ընդունիս. դու ալ Հե-
լէնէ, դու ալ մասնաւորապէս պարտական ես
Հայաստանեայց:

ՀԵԼԷՆԷ

Ձայս կը խոստովանիմ, տէ՛ր իշխան. իսկ որով-
հետև Հայաստան այսօր իմ հայրենիքս պիտի
ըլլայ, այժմ բոլոր կեանքս իրենն է:

ԱՐՄՈՒԱՐԻ

Ապա իշխանդ Նէոպտղոմէոս, ի բաց թողով
հին ատելութիւնդ, երգուընցի՛ր այսուհետև հա-
ւատարիմ և անխարդախ բարեկամ մնալու
Հայոց. անշուշտ կը յիշես, թէ՛ այդ պայմանա-
միայն ծերակոյտն քեզ ներեց:

ՆԵՈՊՏՂՈՄԷՈՍ

Հայոց հայրենասիրութեան այդպիսի սքան-
չելի և վսեմ օրինակները տեսնելով, և Հայաս-
տանեայց ինձ հատուցած շնորհացն փոխարէն,
ես ալ հին ատելութիւնս և քէնս կը մոռնամ.
Դարձեալ կ'ուխտեմ անկեղծ հաւատարմութիւն
և հնազանդութիւն: Իսկ որովհետև բախտն այսօր
մեր երկու որդիքն ալ սուրբ կապով մը իրարու
կը լծորդէ, ես ալ կը փափաքիմ ըլլալ այսու-
հետև քաղաքացի Հայաստանեայց:

ԱՐՄՈՒԱՐԻ

Կ'ընդունիմ խնդիրքդ և կը խոստանամ, որ
այդ իրաւունքը ծերակոյտն քեզ պիտի շնորհէ:

Գր. 109

« Ազգային գրադարան



NL0350605

43928